

ՄԵԶ ՀԱՐԿԵՎՈՐ Ե ՈՒՆԵՆԱԼ
Ո Ւ Փ Ե Ղ
Ո Ա Զ Մ Ա - Խ Ո Վ Ա Յ Ի Ն
Ն Ե Վ Ա Տ Ո Ր Մ



31 JAN 2018

ՄԵԶ ՀԱՐԿԱՎՈՐ Ե ՈՒՆԵՆԱԼ
ՈՒՁԵՂ ՌԱԶՄԱ-ԾՈՎԱՅԻՆ
ՆԱՎԱՏՈՐՄ

ՀՈԳՈՒԱՆԴՆԵՐ ՅԵՎ ՓՍ. ՍՏԱ. ԹՎ. ԹԵՐ



ՊԵՏԱԿԱՆ ՀԲՈՍՈՒՐ ԿՐԻՑ ԱՐԵՆ
ՏԵՐԵՎԱՆ 1939

«Մեզ հարկավոր է ունենալ ուժեղ Ռազմա-Ծովային նավատորմ»
գիրքը հոգածների և փաստաթղթերի մի ժողովածու յէ, վորոնը
դուռաբանում են հին նախատորմի նավաստիների հեղափոխական հե-
րոսությունը, Կարմիր Նախառորմի մարտական ուղին քաղաքացիո-
ւան պատերազմի ընթացքում, մարտական և քաղաքական պատրա-
տությունը ներկայումս և ԽՍՀՄ Ռազմա-Ծովային նավատորմի նոր
Ժողկոմատի ստեղծումը:

Գիրքը նախատեսված է մասսայական ընթերցողի համար:

Нам нужно иметь
сильный военно-морской
флот

Гим Арм, ССР, Ереван, 1939 г.



Ա-2853 Կցր

Թարգմանիչ՝ Պ. Աթայան
Պատ Խմբաշիր՝ Վարչ. Գրիգորյան
Տէխ. Խմբագիր՝ Ի. Վարդանյան
Մրգագրիչ՝ Ա. Արգաքանյան
Պահպատ՝ Արքաղը՝ Ս. Շահբաղյան

ԽՍՀՄ ՌԱԶՄԱ-ԾՈՎԱՅԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԽՍՀՄ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴՐԻ ԿՈՄԻՏԵՆԻ յեվ ԺՈՂՈՎՐԴԱ-
ԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԵՐԻ Խորհրդի ՎՈՐՈՉՈՒՄԸ

ԽՍՀՄ կենտրոնական Գործադրի Կոմիտեն և Ժողո-
վրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշում է ։
1. Կազմել Ռազմա-Ծովային Գործերի Համամիութե-
նական Ժողովրդական Կոմիսարիատ :

2. Ռազմա-Ծովային Գործերի Ժողովրդական Կոմի-
սարիատի տնօրինությանը հանձնել ԲԳԿԲ Ռազմա-Ծովային
ուժերը, բաժանելով նրանց ԽՍՀՄ Պաշտպանության Ժո-
ղովրդական Կոմիսարիատի կազմից :

3. ԽՍՀՄ Ռազմա-Ծովային Գործերի Ժողովրդական
Կոմիսարին՝ ներկայացնել ի հաստատումն ԽՍՀՄ ԺԿԽ-ին
հինգ որվա ընթացքում ԽՍՀՄ Ռազմա-Ծովային Գործերի
Ժողովրդական Կոմիսարիատի կանոնադրության նախադի-
ծը և կառուցվածքը :

ԽՍՀՄ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴՐԻ ԿՈՄԻՏԵՆԻ
նախագահ՝ Մ. ԿԱԼԻՆԻՆ
ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԵՐԻ Խոր-
հրդի նախագահ՝ Վ. ՄՈՂՈՏՈՎ
ԽՍՀՄ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴՐԻ ԿՈՄԻՏԵՆԻ
Քարտուղար՝ Ա. ԳՈՐԿԻՆ,

Մոսկվա, Կրեմլ, 30 պետական գրքի, 1937 թ.

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂԿՈՄԽՈՐՉՈՒՄ ՅԵՎ ՀԱՄԿ(Բ)Կ
ԿԵՆՏԿՈՄՈՒՄ

„ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՌԱՊՄԱ-ԾՈՎԱյին ‘ՆԱՎԱՏՈՐՄԻ
ՈՐՎԱ’ ՄԱՍԻՆ

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂԿՈՄԽՈՐԾԸ և Համկ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԸ
Վ ո ր ո չ ու մ ե ն.

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԲԱՆՔՈՐԱ-ԳՐԵՎՈՎԱԳԻՎԱԿԱՆ ՌԱՊՄԱ-
ԾՈՎԱյին ՆԱՎԱՏՈՐՄԻ ՀԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ և ՆՐԱՆ առաջա-
դրված խնդիրների հարցերի շուրջը աշխատավորների լայն
մասսաներին մորիլիվացիայի յենթարկելու նպատակով,
սահմանել «ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՌԱՊՄԱ-ԾՈՎԱյին ՆԱՎԱՏՈՐՄԻ
ԲՐ», վորոն անց կացնել ամեն տարի հունիսի 24-ին:

ԸՆԿԵՐ ՄՈԼՈՏՈՎԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՃՐԴԻ 1-ԻՆ ՍԵՍ-
ՍԻԱՅՈՒՄ 1938 թ. ՀՈՒՆՎԱՐԻ 15-ԻՆ ՄՐՏԱՍԱՆՄ
ՃԱՌԻՑ

... Այնուշեան, ևս մի նոր ժողկոմատի ստեղծման,
Ռազմա-Ծովային Նավատորմի ժողովրդական կոմիսարիա-
տի ստեղծման մասին: Զի կարելի չընդունել, վոր այդ և՝
չատ կարենոր, և՛ չատ հասունացած հարց ե: Եեզ մոտ հի-
մա չորս ռազմա-ծովային նավատորմեր կան՝ Բալթյան,
Սևծովյան, Հյուսիսային և Խաղաղովկիանոսյան: Թվում
է, քիչ չեկ յերկրի համար, ևս առավել, վոր մեր ծո-
ւային նավատորմերն անմիջական առնչություն ունեն
նաև միքանի ովկիանոսների հետ: Բայց ծովային նավատոր-
մի շինարարությանն իսկապես ձեւնարկել մենք կարողա-
ցանք միմիայն վերջին տարիների ընթացքում: Յե՛վ Բալ-
թյան, և՛ Սևծովյան, և՛ Հյուսիսային, և՛ Խաղաղովկիա-
նոսյան նավատորմերն արդեն սկսել են աճել այնպես,
ինչպես հարկն և Խորհրդային մեծ պետության համար: Դրանք
ուժեղ կերպով լրացվում են նոր միավորներով,
առայժմ մանր միավորներով, և ահա մենք կվերջացնենք
վորոշ նոր գործարանների կառուցւմը, — վորոնք մենք
կաշխատենք արագ կառուցել, — և կոկանք մեր նավա-
տորմերը լրացնել ավելի արագ և բացի այդ ծովային հզոր
միավորներով: (Բուռն ծափահարություններ):

Մենք պետք ե հաշվի առնենք այն հանդամանքը, վոր
մեր յերկիրը մեծ է, վոր նա հսկայական տարածությամբ
վողողվում է ծովերով, և այդ մեզ միշտ հիշեցնում է այն
բանի մասին, վոր նավատորմը մեզ մոտ պետք է ամուր,

ուժեղ լինիք: (Բուռն ծափահարություններ): Այդ մասին եկ մեզ չէշեցնում են նաև կապիտալիստական պետություններն այն բանով, վոր նրանք վերջին տարիների ընթացքում հսկայական ռազմա-ծովային շինարարություն են ծավալել: Մենք մատղրություն չունենք անտարբեր մնալ այդ փաստի վերաբերմտմբ, ևս առավել, վոր իմ-պերիալիստական պետությունները վոչ մի կերպ չեն կարողանում համաձայնության դալ ռազմա-ծովային շինարարության մրցման թեկուղ վորոշ սահմանափակումների վերաբերյալ: Որինակ, այնպիսի ազգեստիկ պետություն, ինչպիսին ե ձապոնիան, մինչև հիմա հրաժարվում է վորեւ մասնակցություն ունենալուց ծովային սպառազինությունների սահմանափակման զործում: Մինչև հիմա, չնայած ամեն տեսակի միջադրային կոնֆերենցիաների, — հիշեցնենք թեկուղ Լոնդոնի 1936 թվի կոնֆերենցիան՝ ծովային սպառազինությունների սահմանափակման հարցերի վերաբերյալ, — մեր հեռավորարելյան հարեւանի ձապոնիայի, ծովային սպառազինությունների համար վոչ մի սահմանափակում չկա: Մի՞թե մենք չպետք ե հաշվի առնենք այդ փաստը: Պարզ ե, դուք կասեք, վոր այդ հանդամանքը մենք պետք ե, ինչպես հարկն առնենք մեր աշխատանքի բանական գործում: (Ծափահարություններ):

Ահա մի այլ փաստ: Չնայած Լոնդոնի 1936 թվի կոնֆերենցիային ֆորմալ կերպով մասնակցելուն, ֆաշիստական իտալիան նույնպես, ամեն տեսակի վոչ լուրջ մոտիվներով, հրաժարվել է վորեւ համաձայնություն ստորագրել մյուս յերկների հետ ծովային սպառազինությունների սահմանափակման մասին: Զե՞ վոր իտալիան հիմա հավակնություն ունի անկոնտրոլ կերպով տիրակալելու վողջ Միջերկրական ծովում, վորպիսի հանդամանքը չի կարտ չչոշափել Խորհրդային Միության խոչորակույն շահերը: Մի՞թե մենք չպետք ե հաշվի առնենք նաև այս փաստը մեր վորոշումների մեջ: (Ծափահարություններ):

Ասում են, թե Փաշիստական Գերմանիան ծովային

Համաձայնություն է ստորագրել, սակայն մենք դեռևս պետք ե տեսնենք, թե ի՞նչ արժեք ունի այդ ստորագրությունը: (Ծիծաղ, ծափահարություններ):

Համենայն դեպս, ամեն ինչ խոսում է այն բանի մասին, վոր մենք պետք ե ունենանք ուժեղ Ռազմա-Ծովային Նավատորմ: (Ծափահարություններ):

Մենք կարծում ենք այսպէս: Վլիսավորն այն է, վոր ամուր և հզոր լինի մեր պետական նավը, իսկ նա, ինչպես մենք գիտենք, ամուր է և ել ավելի ամրանում է: (Բուռն ծափահարություններ): Մեր խորհրդային իրավակարգը հզոր և ցանկանում է ել ավելի հզոր լինել, ցանկանում է անառիկ լինել թշնամիների համար: (Բուռն յերկարատև ծափահարություններ): Դրանից մենք հետեւթյուն ենք անում, վոր մեզ հարկավոր է ուժեղ կարմիր Բանակ և մեզ հարկավոր է ուժեղ Ռազմա-Ծովային Նավատորմ: (Յերկարատև ծափահարություններ): Հզոր Խորհրդային տերությունը պետք է ունենա իր շահերին համապատասխանող, մեր մեջ գործին արժանի ծովային և ովկիանոսային նավատորմ: (Յերկարատև ծափահարություններ):

Վորպեսզի մենք կազմակերպենք այդ նավատորմն երբարդ տեխնիկական սարքավորումով, իր հզոր ծովային հրեւանիով, խորհրդային նավատորմի արժանապատվությունը համապատասխանող իր ծովային ավիացիայով (բուռն ծափահարություններ), և վորպեսզի մենք խորհրդային ուսումնարակենք վորակյալ նավատորմերի և ծովային տեխնիկների բաղմաթիվ կադրեր, հարկավոր ենոր ժողկոմատ, հարկավոր և Ռազմա-Ծովային Նավատորմի ժողկոմատ: (Ծափահարություններ):

Հենց այն պատճառով, վոր ածել ե մեր կարմիր Բանակը, վոր այստեղ ել հարկավոր է ամենորյա հսկայական աշխատանք նրա հետագա ամրապնդման համար, նրա հետագա տեխնիկական հաղեցման համար, հարկավոր և ավելի լավ աշխատանք տանել՝ հայրենիքին նվիրված կարմիր բանակայինների և հրաժանատարների բոլորիկան

դաստիարակության համար, Հենց այն պատճառով, վոր այդ ամբողջ գործի ղեկավարությունը Կարմիր Բանակուժ էր առաջ հոկայական խնդիրներ ունի, իսկ Ռազմա-Ծովաշին Նավատորմը հասուն և բացի այդ ուժեղ ուշադրություն է տահանջում ղեկի իրեն, մենք անհրաժեշտ ենք համարում, Պաշտպանության ժողկոմատի կողքին, Ռազմա-Ծովաշին Նավատորմի ժողկոմատ ունենալ: (Բուռն, յերկարատև ծափահարություններ):

Մեր խնդիրն եւ ել ավելի բարձրացնել Խորհրդային Միության ցամաքային սահմանների և ծովային ափերի պաշտպանության գործը: Մենք հույս ունենք, վոր մեր նավատօնները պատվով կկատարեն իրենց խնդիրը, իսկ Ծովաշին Նավատորմի ժողկոմատը հաստատակամորեն և անխոնչ կաշխատի խորհրդային ուժեղ սազմական ծովային նավատորմ ստեղծելու համար: (Յերկարատև ծափահարություններ):

ՀԵԿ. Ա. Յ. ՍԵԼԵԶՆՅՈՎԻ
Գնրագույն Խորհրդի դեպուտատի
Կրտսեր սուլանավորդ-հրամանատարի նառը

ԿԱՇԽԱՏԵՆՔ ՀԶՈՐ ՌԱԶՄԱ-ԾՈՎԱՅԻՆ ՆԱՎԱՏՈՐՄԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԱՄԱՐ

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Խորհրդի ընկեր ղեկուտատներ, Քույլ տվեք հայտնել ձեզ, ժողովրդի ընտրալներին— մեր յերկրի լավագույն մարդկանց, բոյավառ մարտական կարմիր նավատորմային վորդույն: (Ծափահարություններ):

Ընկեր ղեկուտատներ, Ռազմա-Ծովային Նավատորմի կարմիր նավատորմայինները, Հրամանատարները և քաղացիատողները հանձնարարել են ինձ ջերմ վորջույն հայտնել Գերագույն Խորհրդի առաջին ղեկուտատ, Կարմիր Բանակի և նավատորմի սիրելի բարեկամ և ուսուցիչ, ամբողջ աշխարհի աշխատավորների առողջուրդ ընկեր Ստալինին: (Բուռն, յերկարատև ծափահարություններ, բոլորը վլոտի յեն յելնում, բացականչություններ՝ «Ուռա»):

Մեր փառապանծ բոլցերկյան կուսակցության Ստալինյան Կենտրոնական Կոմիտեի և Խորհրդային Կառավարության ղեկավարության տակ Խորհրդային Միության ժողովուրդները ձեռք են բերել համաշխարհային պատմուկան սոցիալիստական հաղթանակներ: Որ-ավուր ել ավելի վառ և լրիվ և ծաղկում սոցիալիստական յերջանիկ կյանքը մեր յերկրում: Մեր հզոր հայրենիքի չափանված հաղթանակները պահպանում են անհաղթելի փառապանծ Կարմիր Բանակը և Ռազմա-Ծովային Նավատորմը, վորի ղեկավարն ե պրոլետարական զորավար, Խորհրդային Միության ուսաջին մարշալ Կլիմենտ Յեֆրեմովիչ Վորոշիլովը: (Բուռն, յերկարատև ծափահարություններ):

Բազմա-Ծովային Նավատորմը պատրաստ ե կործանից հակածարված տալ Փաշխտական ագրեսորներին: Զբաղվի-լով ամենորյա սւսուցումով, կարմիր նավատորմայինները, հրամանատարները և քաղաշխատողները միշտ հիշում են՝ կուսակցության և հայենիքի հանդեպ իրենց սրբազն պարտքի մասին՝ միշտ դրու լինել, պատրաստ լինել պատասխանելու թշնամու հարվածին բնաջնջող հարվածով:

Բազմա-Ծովային Նավատորմի կարմիր նավատորմայինները, հրամանատարները և քաղաշխատողները, խորհրդային վողջ ժողովրդի հետ միսսին, պատրաստ են նը. վիրել իրենց բոլոր ուժերը, իրենց բոլոր դիտելիքները և ընդունակությունները, իսկ յեթե պահանջվի նաև կյանքը, պաշտպանելու մեր սոցիալիստական հայրենիքը պատերազմի Փաշխտական հրձիգների և նրանց անարդ ագենտների՝ տրոցկիստական-բռուխարինական բանդիտների, լրացների, դիվերսանտների և մարդասպանների վոտնձը-զություններից:

Ընկեր գեպուտատաներ, մենք ջերմորեն վողջունում ու հավանություն ենք տալիս Կառավարության վորոշմանը Ռազմա-Ծովային Նավատորմի ժողովրդական Կոմիսարիատի ստեղծման մասին, վորն ընդունված ե ընկեր Ստալինի, նախաձեռնությամբ: (Ծափահարություններ): Հակայական ուրախությամբ և ենտուզիազմով ե ընդունվել այդ վորոշումը նավատորմերում և նավատորմիկներում:

Խորհրդային հզոր պետությունը պետք է ունենա և կունենա իր չահերին համապատասխանող ծովային և ովկիանոսային նավատորմ:

Մենք պարծենում ենք մեզ ցույց տված վստահությամբ և հավատիացնում ենք կուսակցությանը և կառավարությանը, ձեզ, ընկեր գեպուտատներ, և ընկեր Ստալինին, վոր մենք պատրաստ ենք ամեն մի մռմենտ, ձմեռը և ամառը, ջրի յերեսին և ջրի տակ, կամ ողիղ վոչչացնել թշնամուն, վոր ծովում կամ ովկիանոսում ել նա դռնվելիս լինի: (Յերկարան ծափահարություններ):

Մենք, Ռազմա-Ծովային Նավատորմի կարմիր նավա-

տորմայիններս, հրամանատարներս և քաղաշխատողներս Դերագույն Խորհրդի առջև պարտավորվում ենք ել ավելի բարձրացնել մարտական և քաղաքական պատրաստության մակարդակը և կարճ ժամանակամիջոցում տիրապետել նոր առաջնակարգ տեխնիկային, վորով սպառազինված են Ռազմա-Ծովային Նավատորմի շարքերը մտնող մեր նոր մարտական նավերը:

Մեզ հարկավոր է ել ավելի հզոր նավատորմ, ել ավելի կատարելագործված ծովային և ովկիանոսային նավատորմ: Այդպես և վորոշել կուսակցությունը, այդպես և վորոշել կառավարությունը, այդպես և վորոշել վողջ խորհրդային ժողովուրդը:

Մենք, կարմիր նավատորմայիններս, հրամանատարներս և քաղաշխատողներս, պատասխանում ենք՝ կամ մեր հայրենիքին արժանի ծովային և ովկիանոսային նավատորմ, վորն ստեղծել ե մեր մեծ ժողովուրդը:

Մենք հավաստիացնում ենք Գերազույն Խորհրդին, ընկեր Ստալինին և ընկեր Մոլոտովին, վոր մենք ել ավելի մեծ յեռանդով և անխոնջ կաշխատենք հզոր Ռազմա-Ծովային Նավատորմ ստեղծելու համար: (Ծափահարություններ):

Դրա յերաշխիքն ե՝ վողջ խորհրդային ժողովրդի անսահման սերը, նվիրվածությունը և համախմբվածությունը բոլշևիկյան կուսակցության կենտրոնական կոմիտեի և ժողովուրդների իմաստուն առաջնորդ ընկեր Ստալինի չուրջը: (Բոււն ծափահարություններ):

Կեցցե՛ հզոր Ռազմա-Ծովային Նավատորմը: (Ծափահարություններ):

Կեցցե՛ բոլշևիկների փառապանծ կուսակցությունը և նրա Ստալինյան կենտրոնական կոմիտեն: (Ծափահարություններ):

Կեցցե՛ Գերազույն Խորհրդի Նախադահության Նախադահան Միխայիլ Իվանովիչ Կալինինը: (Ծափահարություններ):

Կեցցե՛ աշխատավորների առաջնորդ և ուսուցիչ ընկեր

Ստալինը: (Բուռն, յերկարատև ծափահարություններ, բռնը վատի յին յելնում: Բացականչություններ՝ «Ռուա», «Կեցցե՛ ընկեր Ստալինը»: Աղմկալի ծափահարությունների և ֆանֆարների հեջյունների տակ կարմիք բանակի և Ռազմա-Ծովային Նավատորմի դելեգացիան հեռանում և դահլիճից: Բացականչություններ՝ «Ռուա»: «Կեցցե՛ կոր-կըրդային Միտրյան սոսազին մարշալ ընկեր Վորոշիլովը»):

ԿՈՐՄԻՐ ՆԱՎԱՏՈՐՄԱՅԻՆՆԵՐԲ ԴԵՐԱԳՈՒՅՑ
ԽՈՐՀՐԴԻ ՍԵՍՈՒՅՑԻ ՅԵՎ ԸՆԿԵՐ ՄՈԼՈՏՈՎԻ
ՃԱՌԻ ՄՅՈՒՆ

ԲԱԼԹՅԱՆ ՆԱՎԱՏՈՐՄ

Լենինգրադ. 17 Հունվարի («Պրակտայի» թղթակ.)։
Կարմրագլուշ Բալթյան նավատորմի կարմիր նավատորմա-
յինսերը և Հրամանատարներն ուշադրությամբ հետեւու-
են ԽՍՀՄ գերազույն Խորհրդի առաջին Սեսսիայի աշխա-
տանքներին։

Սիստինդում իր յելություն կըտաել չըտասահամար լինելը Պյատինին ասաց .

— Մեր յերկիրը հզոր ծովալյլս պահպատճյան ծառական ծառ ծովալյլին սահմանները գտնվում են Հուսալի պաշտպանության տակ: Բնկեր Մոլոտովի ճանից մենք մեղ համար հատեցին յերկակացությունն ենք անում: սովորել և ամար հատեցին յերկակացությունն ենք անում: սովորել և աչխատել ել ավելի լավ, ել ավելի շատ ամրացնել կար մըրադրու նախառարմի պահանջարկի տրամդիցիաները, լինել աչխարհում ամենալավ ռազմական նախառարմիներ: Հածու

Միահմտուր կերպով ընդուելված բարձրացած
նավի անձնական կազմը հայտարարում է .
Առաջ ետափաղության հաջանավի կարմիր

«Մենք, «Ավորա» կարմրադիւն նախատըլած այլ հիններու ու Հրամանատարներս Հսկայական ու չաղընությամբ ու գողեկորությամբ հետևում ենք ԽՍՀՄ

Գերադույն Խորհրդի առաջին Սեսսիայի աշխատանքներին:

Զերմորեն վողջունում ենք կոմունիստների և անկուսակցականների բլոկի առաջին դեպուտատ ընկեր Ստալինին:

Ժողովրդի ընտրյալներ, չարւնակեցեք ձեր աշխատանքը: Զեր վորոշումները գտնում են և կղտնեն ամենալայն աջակցություն մեր մեծ հայրենիքի աշխատավորների կողմից:

Խորհրդային կառավարության նախադահ ընկեր Վ. Մ. Մոլոտովի խոսքեն այն մասին, զոր մեզ հարկավոր են ուժեղ Ռազմա-Ծովային նավատորմ և Ռազմա-Ծովային նավատորմի ֆողկոմատ, վողերում են մեզ հետագա հաջողություններ ձեռք բերելու մարտական և քաղաքական պատրաստության գործում:

Ենք պատվով կատարենք մեր մարտական խնդիրը և համարեն ու անխոնջ կաշխատենք աշխարհումս ամենազոր Խորհրդային Ռազմա-Ծովային նավատորմ ըստեղելու և ամրացնելու համար»:

ԽԱՂԱՂՈՎԿԻԱՆՈՍՅԱՆ ՆԱՎԱՏՈՐՄ

Վլադիվոստոկ. 17 հունվարի («Պրավդայի» թղթակ.): Վլադիվոստոկի ձեռնարկություններում, հիմնարկություններում և ուսումնական հաստատություններում մեծ վողերությամբ անցան ԽՍՀՄ Գերադույն Խորհրդի Սեսսիայում ընկեր Մոլոտովի արտասահած ճառին նվիրված միտինդները, ժողովները և զրույցները: Աշխատավորներն իրենց բանաձեռում միահամուռ կերպով անկեղծ բավարություն են արտահայտում Ռազմա-Ծովային նավատորմի ժողովրդական կոմիսարիատի ստեղծման առթիվ և հայտարարում են իրենց պատրաստակամության մասին՝ մասնակցելու մեր հայրենիքի պաշտպանունակության ամենորյաց պատվավոր անդամության մասին:

Խաղաղովկիանոսյան նավատորմի անձնական կազմը:

Վողջունում ե ընկեր Մոլոտովի խոսքերը՝ ԽՍՀՄ ուժեղ Ռազմա-Ծովային նավատորմայինների միախառնումը ընկեր Ստալինին:

Սուլանավորդ-կարմիր նավատորմայինների միախառնումը ընկեր Շարովն իր առաջին խոսքերն ուղղում ե ընկեր Ստալինին:

Մենք,— ասում ե նա, — սրտանց չնորհակալություն ենք հայտնում սիրելի առաջնորդ ընկեր Ստալինին, կոմունիստական կուսակցությանը, մեր խորհրդային կառավարությանը՝ մեր հայրենիքի սահմանների պաշտպանության ամրապնդման մասին անդուլ հողատարության համար: Մենք կողմանը մեր բոլոր ուժերը, վորպեսզի ել ավելի ուժեղացնենք Խաղաղ ովկիանոսի վըրայի անկործանելի ամրոցը: Այդ ամրոցին կպէսելիս ջարդություր կլինի ամեն մի Փաշիստական դիշատիչ, մեր ժողովրդի ամեն մի թշնամի:

Սուլանավորդների մասերից մեկի կարմիր նավատորմայիններն ու հրամանատարները միտինդում ընդունած բանաձեռում հայտարարում են.

«Մենք պարտավորվում ենք՝ հասնել Կարմիր Բանակի և Ռազմա-Ծովային նավատորմի XX տարեղարձին մարտական ու քաղաքական պատրաստության ել ավելի լավ ցուցանիշներով: Կաճեցնենք մասնակետների նոր կազմեր: Մենք յերջանիկ ենք և պարծենում ենք նրանով, վոր կատարում ենք մեր հայրենիքի սրբազն սահմանների պաշտպանության պատվավոր ինդիբը: Խորհրդային նավատորմները կատարում են իրենց պարտքն իրենց ժողովրդի հանդեպ»:

«Պրավդա» № 18, 18 հունվարի, 1938 թ.

ԽՍՀՄ Ռազմա-Ծովային Նավատորմի Ժողովրդական
Կոմիսարի տեղակալ, նավատորմի 2-րդ կարգի Փլազման

ԽՍՀՄ—ԾՈՎԱՅԻՆ ՀԶՈՐ ՏԵՐՈՒԹՅՈՒՆ

ԽՍՀՄ ծովային մեծ տերություն է: Խորհրդային Միության ծովային սահմանները կազմում են ավելի քան 48 հազար կիլոմետր: Այդ սահմանը դժունվում է մեր պահածական բանական-Գյուղացիական Ռազմա-Ծովային Նավատորմի անդուչ վերահսկողության ու սպահանության տակ: Ջրի վրա, ջրի տակ և ողում մեր հերոս ծովային-ները պահպանում են Խորհրդային յերկրի ծովային սահմանները ամեն մի յեղանակի՝ փոթորկի ու ալեկոծումների, տայֆունների ու մասախուղների ժամանակի: Քյունների, տայֆունների անդամանության մասին:

Բանակորա-Գյուղացիական Ռազմա-Ծովային Նավատորմը բուշելիքյան կուսակցության, ընկեր Ստալինի կամքով, ժողովրդի հերոսական աշխատանքի չորսհիլիուրդային ժողովրդի հերոսական աշխատանքի չորսհիլիուրդի ամենամեծ մի ահեղ, անդամանության մասին:

Դեռ քաղաքացիական պատերազմի և 14 կապիտալիստական պետությունների ինտերվենցիայի դեմ մղված մասական ապատությունների առաջնական պատճենը, վորոնք այն ժամանակակից տարիներին մեր սաղմանավերը, վորոնք այն ժամանակակից վատ եյին կոմպելսավորված ահճեակազմով, մասնակ վատ եյին զինված, յերբեմն նույնիսկ զուրկ եյին արաթույլ եյին զինված, յերբեմն նույնիսկ զուրկ եյին արաթույլ եյին զինված, յախջախում եյին մինչեւ տառմները զինված դությունից, չախջախում եյին մինչեւ տառմները զինված դությունից, չախջախում եյին անում նույնիսկ այնպիսի ինտերվենտներին, չքառույլ եյին անում նույնիսկ այնպիսի առաջնակարգ նավատորմի մարտանավերը, ինչպիսին եր առաջնակարգ նավատորմի մարտանավերը, ինչպիսին եր անդաման նավատորմը: Միայն Ֆիննական ծոցում 1918 անդաման նավատորմը: Միայն Ֆիննական ծոցում 1918 և 1919 թվականների ընթացքում խորհրդային նավերի ու ականների միջոցով ջրասույզարվեցին «Կասոսանդրա» համականների, «Վիկտորիա» և «Վերուլամ» եսկարային ականների, «Լ-55» սուզանավը, մի քանի ականնահաններին, ներ, տրանսպորտային նավեր, տրամեղային կատերներ:

«Լ-55» սուզանավը, վորը ջրի տակից բարձրացվեց

Կարմրագրուչ Նպրոնի կողմից և վորը վերականգնեցին մեր պահանձալիք նավաշխարարները, այժմ նավարկում են խորհրդային ռազմա-ծովային դրոշակի տակ:

Ամեն մի իրադրության մեջ՝ ծովերի, լճերի, գետերի վրա և ցամաքային ճակատում, նավերի, զրահապատ դը-նացքների վրա և դաշտային դրամասերում— ամենուրեք կարմրի ծովայինները ցույց եյին տալիս խիզախության ու հերոսության հրաշքներ: Այդ հերոսության մասին ժողովուրդը հյուսում երլինաները ու յերգեր: Ժողովրդական հերոս՝ նավատօնի ժեւեղնյակովի մասին յերգում են ամբողջ յերկրում. Մարկինի, Պոլուխինի, Պավլինի, Վենովրադովի և հազարավոր այլ ծովայինների անունները, գորոնք ցույց են տվել հերոսության հրաշքներ և զոհվել են խիզախի մահով, անթառամ կմնան գարերի ընթացքում:

Հ-2853 Կ
Ուստի ժողովուրդը սիրում է ծովը, սիրում եւ և գիտե այն ոգտագործել: Սեղովը, Դավիդովը, Պոյարկովը և շատ այլ ուստի ծովագնացներ մեծագույն ավանդներ են ժուծել համաշխարհային զիտության մեջ, կատարել են ամենաարժեքավոր հայտնագործումները ու հետազոտությունները, իրենց պատկերով անթառամ փառքով: Ուստի ծովագնաց Մակարովը ստեղծեց նավի անընկղմվելիության թերիան, ստեղծեց նավի նոր տիպ— սառցահատ նավը, նա հնարեց արկի զրահահար ծայրակալը: Ուստի ծովագնաց Պոպովը յերկրին տվեց ամենաարժեքավոր մի գյուտ՝ ուզգիոկապը: Հարյուրավոր այլ ուստի ծովայիններ մարդկային զիտելիքների զանձարանն են ժուծել իրենց վոչ փափռ լոււման:

Ոիզախությունը, համառությունը, ամեն մի գրությունից յելք դտնելու հմտությունը, ծովային զերազանց գիտելիքները՝ զուգակցված բարձր մարդասիրության հետ— ահա այն հատկությունները, վորոնցով աչքի յեն ընկել ուստի ծովագնացները, վորոնք իրենց ժամանակին հետազոտել են համարյա ամբողջ յերկրագունդը:

Մեր պահանձալիք խորհրդային ծովայինները սրբությամբ



պահպանում են ոռւս ժողովրդի այլ հիմնալի ծովային տրադիցիաները, հարստացնելով գրանք իրենց հեղափոխական խանդապառությամբ:

Յերկրագնդի համարյա բոլոր ծովերն ու ովկիանոսները տեսնում են մեր ուղմած-ծովային դրոշակը: Անցյալ տարի խորհրդային վոչ մեծ նավերի մի ջոկատ կենդրագույից հասավ Վլատիվոստոկ՝ Պանամայի ջրանցքով: Այս տարի Վլատիվոստոկ հասավ վոչ մեծ նավերի մի ջոկատ Սեվաստոպոլից՝ Սուեզի ջրանցքով և մի այլ խումբ այժմ կրկնում ե մարշրուտը Սուլանտյան ովկիանոսի, Պանամայի ջրանցքի, Խաղաղ ովկիանոսի վրայով ուղեկորդիլով դեպի Հեռավոր Արևելք:

Նավարկության ողերելութաբանական ամենադժվարին պայմաններում կարմիր նավատորմայինները, հրամանատարները, քաղաքանայողները ցույց են տալիս ծովային հիմնալի վարժվածություն և բարձր են պահում սովորի Յերկրի Ռազմա-Ծովային Նավատորմի պատիվն այնպես, ինչպես վոր նոր նյութական մասը գործնականում ցույց է տալիս մեր արդյունաբերության գերազանց աշխատանքը:

Ռուսական ռազմական նավատորմն իր ամբողջ պատմության ընթացքում բազմից հիշողության մեջ տպավորված դասեր ե տվել բոլոր նրանց, ովքեր վարձել են խախտել մեր յերկրի ծովային սահմանները:

* Գետրոս I որով առաջին սննդամ ստեղծված ռուսական ռազմական նավատորմը ջախճախեց թվական տեսակետից դեպակող և այն ժամանակ հզոր չեղական նավատորդերական մը: 225 տարի սրանից առաջ ռուսական նավատորմը գանգոստի մոտ տեղի ունեցած կովում ջախճախեց չվեդ-ներին և գերի վերցրեց 10 նավ: Ռուսական նավերը և ուստի ծովայիններն անթառամ վաստով պատկեցին իրենց Զեսմայի (1770 թ.), Նավարինի (1827 թ.), Սինոպի մոտ (1853 թ.) տեղի ունեցած հաղթական ծովային կոփիներում, Սևլաստոպոլի հերոսական պաշտպանության ժամանակ (1854—1855 թվականներ):

Նույնիսկ 1904—1905 թվականների ռուս-ճապոնական պատերազմում, յերբ անշնորհք և ծախու ծովականների կողմից զեկավարվող ռուսական նավատորմը պարտություն կրեց, ոռւս ծովայինները ցույց տվեցին վոչ քիչ խոկական հերոսության որինակներ: 1904 թվի փետրարի 27-ին, թվական տեսակետից յեռապատճեկ գերակշռող հակառակորդի դեմ անհավասար կալում «Ստեղեգուշչի» ականակրի վրա կենդանի մնացած յերկու նավատինները բաց արին կինդատոնները և ջրասույզ յեղան նավի հետ միասին, չցանկանալով հանձնվել թշնամուն:

Ռուսական ռազմական նավատորմը 1914—1917 թվականների համաշխարհային իմպերիալիստական պատերազմի ժամանակակի ևս բազմաթիվ զգալի հարվածներ հասցը այն ժամանակի հզոր գերմանական նավատորմին և կորուստների վերջնական փոխարքերությունը յեղագիրմանիայի համար վոչ ձեռնուու: «Բրեմեն» հածանավը, «Պրիդրիխ Կարլ» վր, «Պրինց Առալբերտ» հածանավը, «Գեկելլ»-ն, «Ունդինե»-ն, «Ալբատրոս»-ը, 18 ականակիններ և գերմանական տասնյակ այլ նավեր խորտակվեցին ականներից ու ռուսական ռազմական նավատորմի նավերի կրակից, կամ թե ներկարվեցին: Միայն մեկ որվա ընթացքում, 1916 թվի նոյեմբերի 10-ին, Ֆիննական ծոցում կատարած զրոհի ժամանակ ռուսական ականներին հանդիպելով խորտակվեցին գերմանական 7 նորագույն եսկադրային ականակիններ:

Ռուսական ռազմական նավատորմի պանծալի մարտական արագիցիաները՝ մեր ծովայինների հեղափոխական խանդապառության հետ միացած, քաղաքացիական պատերազմի տարիներին ծնում ելին մեծագույն հերոսություն:

Բոլոր ծովերում, բոլոր ճակատներում, Լենինի-Ստալինի կուսակցության կողմից դաստիարակվող ծովայինները ցույց տվեցին իրենց արիությունը, անսահման սերը դեպի հայրենիքը, դեպի իրենց ժողովուրդը: «Պոտյումկինի», «Ոչակովի» հեղափոխական վողին դարձավ կործանող հզոր ուժ: Հեղափոխական նավատինների վրա ելին

Հենվում Լենինը և բոլշևիկների կուսակցությունը 1917 թվին։ Հեղափոխական նավատիներն «Ավորովայից» զմբռային պալատի վրա արձակված ձիգով ամբողջ աշխարհին ազդարարեցին մարդկության պատմության մեջ նոր դարավելսի, սոցիալստական հեղափոխության դարագլւի սկիզբը։ Մեծ թվով պանծալի բալթիականներ, ուժովայիններ, կասպիականներ, դնեպրականներ և այլ ծովայիններ գոհվեցին հերոսի մահով, իրենց կյանքը նվիրելով հանուն հարազատ յերկրի, հանուն հայրենիքի։ Հանուն խորհրդային իշխանության։

ԽՍՀՄ Բանվորա-Գյուղացիական Ռազմա-Ծովային Նավատորմը ստեղծվում եր քաղաքացիական պատերազմի և ինտերվենցիայի ամենավժվարին պայմաններում։ Այն ըստեղծում եյին բոլշևիկների կուսակցությունը և նրա մեծ առաջնորդներ Լենինն ու Ստալինը։ Այն ժամանակ կադրերի պակաս կար, չին ծովայիններ քիչ եյին մնացել, նաև իրեւ թույլ եյին զբնված, մասամբ քայլայված եյին, մեռած Լենինի և Ստալինի անմիջական ղեկավարությամբ ու ունությամբ մեր նավատորմն սկսեց աստիճանաբար վերականգնել։ Հենց Լենինն ու Ստալինը, մեր կուսակցությունն եյին ստեղծում խորհրդային նավատորմը՝ նրա համար ստեղծում եյին թնդանութներ, մեքենաններ, նավեր, կոմսոմոլի հավաքաղուումն իր հետ նավատորմ բերեց յերիտասարդական խանդավառություն։ Դեռևս կիսավեր մարտանավերը լիարյուն կյանք ստացան։ Կարճ ժամանակի շնորհում նավատորմը վերականգնեց։ Գծանավերը, հածանավերը, ականակիրները, սուզանավերը, տորպեկային կատերները նորից դուրս յեկան ծով, տանելով իրենց ահեղ զենքը, դուրս յեկան ծով, վորպեսզի համառորեն սովորեն և միշտ կարողանան կազմ ու պատրաստ դիմավորել անկոչ հյուրերին։

Անցան ստալինյան յերկու հնդամյակները։ Հաղթանակել սոցիալստական ինդուստրիալացիայի ստալինյան հանձնարեկ պլանը։ Անցան ամեց արդյունաբերությունը, մասնավորապես նավաշինական արդյունաբերությունը, վորն

այժմ մեր Ռազմա-Ծովային Նավատորմի համար տալիս և ամեն կարգի նոր նավեր։

Խորհրդային յերկիրը չեր կարող միաժամանակ լայնորեն ծավալել մեր պաշտպանության բոլոր տեսակների շինարարությունը։ Ազգբում յերկիրն առաջնակարգ տեխնիկա մատակարարեց կարմիր բանակին, վորն իր անխորտակելի ուժը ցույց տվեց 1929 թվին և Հեռուլոր Արևելքում, Խասան լճի շրջանում, 1938 թվին տեղի ունեցած կոխիների ժամանակի։ Մենք ստեղծեցինք առաջնակարգ ավելացիա, վորն ընդունակ է հաջողությամբ գործելու յերկրագնդի ամեն մի շրջանում։

Վերջապես, նավատորմի հին մարտական կազմը վերականգներուց հետո, յերկիրը ձեռնամուխ յեղավ ծովային և ովկիանոսային նոր հզոր նավատորմի կառուցմանը, այնպիսի նավատորմի, վորն ընդունակ լինի ջախջախելու ամեն մի թշնամու։

Արդեն այժմ Խորհրդային Միության բոլոր ծովային ու գետային նավատորմերն ստանում են տասնյակի նոր մարտանավեր։ Այնպիսի հզոր, ամենաժամանակակից տեխնիկայով զինված նավեր, ինչպիսին ե «Կիրով»-ը և շատ այլ նավեր, կառուցված են մեր գործարաններում, մեր ինքնուներների ու բանվորների ձեռքով։ Խորհրդային նավաշնական արդյունաբերությունը կարող և կառուցել և կառուցում ե ամեն կարգի նավեր։ Մեր նավատորմի շինարարության թափն ու տեմպերն այժմ այնպիսին են, վորի նմանը չի տեսել և չեր կարող տեսնել աշխարհում վոչ մի յերկիր։

Հզոր նավատորմի համար հարկավոր են նաև նրան արժանի կադրեր, հարկավոր են այնպիսի մարդիկ, վորոնք անսահման նվիրված են իրենց հայրենիքին, կարող են կառավարել ժամանակակից նավի ամենաբարդ և ճշշգրիտ սարքերը։

Ժամանակակից նավը՝ այդ՝ ամենաբարդ մի մեխանիզմ և, այդ՝ դիտության և տեխնիկայի վերջին

Նվաճումների կենտրոնացումն եւ : Ժամանակակից նաևի վրա կա հզոր Հրեանի, վորի Հրաձգության հեռավորությունը գերազանցությունը գերազանցում եւ տեսանելի հորիզոնի հեռավորությունը, կան ինքնաթիռներ, տորպեդային ապարատներ, հզոր ռադիոսարքավորումներ և բաղմաթիվ այլ բարդ սարքեր : Գծանավի ուժը պատկերացնելու համար բավական եւ գետենալ, վոր մեկ կողային համաշարկի ժամանակ (միայն գլխավոր կալիբրից) նետվում եւ 5 տոննայից ավելի մետրական մեքենաներն ունեն ավելի մեծ կարողություն, քան թիվ մի քանի այնպիսի հիդրոկայաններ, ինչպիսին եւ Վոլխովյան կայանը :

Պետք է լավ տիրապետել այլ հզոր տեխնիկային, վար-
պեսզի ամեն պայմանում (գիշերով, ալիկոծության ժա-
մանակ, մառախուղի մեջ) կափվ մղել հակառակորդի գեմ
և հաղթել նրան:

ԽՍՀՄ Գեղագույն Խորհրդի Նախագահության վերը
չերս հրապարակած Հրամանագիրը՝ Ռազմա-Ծովային Նա-
վատորմում ծառայության ժամկետը յերկարացնելու մա-
սին, նպաստում ե մեր յերկրի պաշտպանության հե-
տաղա աճմանը, հնարավորություն ե ստեղծում նավա-
տորմի համար պատրաստելու ել ավելի վորակյալ կադ-
րեր։ Այդ Հրամանագիրը Ռազմա-Ծովային Նավատորմի
զորամասերում և նավերի վրա դիմավորվեց մեծ խանդա-
վառությամբ։ ԽՍՀՄ Գեղագույն Խորհրդի Նախագահու-
թյան հրամանագրի հրապարակումից անցած կարճ ժամա-
նակամիջոցում նավատորմի շատ նավեր ու զորամասեր
արդեն ավարտել են գերակետիկ ծառայության ընդունվել
ցանկացողների հավաքագրումը։ Այդ ամենավառ ցուցանիշն
ե այն բանի, թե կարմիր նավատորմայիններն ու կրտսեր
հրամանատարներն ինչպես արձադանքեցին մեր Ռազմա-
Ծովային Նավատորմի հզորության աճման մասին, բան-
վորների և դյուլացիների սոցիալիստական պետության
ծովային ու ովկիանոսային սահմանների պահպանության
մասին կուսակցության, կառավարության և ընկեր Ստա-
լինի հոգատարությանը։

Թաղման-Ծովային Նավատուրմը դաստիարակել ե մեր
սքանչելի հայրենիքի հաղպարավոր բոցաշունչ հայրենասեր-
ներ : Ամբողջ յերկրին ծանոթ են Խորհրդային Միության
հերձուներ՝ ընկ . Բուրմիստրովի , ընկ . Յեղիպկոյի , ԽՍՀՄ
Գերագույն Խորհրդի և Միութենական հանրապետություն-
ների Գերագույն Խորհրդի գեղուտատաներ՝ ընկ . ընկ .
Բերդնիկովի , Սելեզնյովի և ուրիշների անունները : Մեր
հարցուրավոր հրամանատարներ , քաղաքատողներ ու
հարյուրավոր հրամանատարներ , պարզեատորներ
յիր նավատուրմայիններ պարզեատորներ են Խորհրդա-
կարմիր նավատուրմայիններ պարզեատորներ են Խորհրդա-
յին Միության ըքանչաններով՝ խիզախության , հերոսու-
թյան , ի վասոս հայրենիքի իրենց անձնապոհության հա-
թար :

Ամեն տարի հուլիսի 24-ին, Ռազմա-Ծովային Նախարարի որդա տնօնումը, վոր սահմանեց կառավարությունը, խորհրդային ժողովը կամքի արտահայտությունն և ամենաշուրջ աշխարհում ամենաառաջապարհ, անգիտական ամենաառաջապարհ, ամենաառաջական նախատեսման համար:

Այդ կլինի համաժողովրդական տօնն : Մեր ժողովուրդը
սիրում է իր Ռազմա-Ծովային Նավատարմը, սիրում է իր
ծովայիններին : Հաղաբավոր խորհրդայլին հայրենասերներ
ի իմում են մեզ, լինդրելով իրենց ընդունել մեր ծովային-
ների շարքերը : Այդ՝ գեպի խորհրդայլին Ռազմա-Ծովային
Նավատարմը ժողովրդի ունեցած սիրո հիանալի հաստա-
տումն է :

թաղաւար յէւ չէ առ մասն կազմակերպությունն ու կառավարությունը:

Բոլշևիկների կուսակցության և ամբողջ Խորհրդային ժողովրդի կամքով, ընկեր Ստալինի անմիջական և ամենորյա հոգատարությամբ ու ոգնությամբ, վորի ուշադրությունից չի վրիպում նավատորմի կառուցմանը վերաբերող վոչ մի հարց, մեր Բանվորա-Գյուղացիական Ռազմա-Ծովային Նավատորմը կդառնա ամենահզոր նավատորմն աշխարհում։ Նա կօխջախի ամեն մի թշնամու, ամեն մի ջրում, — և առաջին հերթին աղբեսոսոր յերկրների ջրերում, աղբեսոսորների, վորոնք կհամարձակվեն Հարձակվել մեր սոցիալիստական Հայրենիքի վրա։

ԽՍՀ ՀԶՈՐ ԾՈՎԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ Ե

Սնսահման են մեր Հայրենիքի ընդարձակությունները։ Յերկու աշխարհամասում տարածվել ե ԽՍՀՄ տերիտորիան Խաղաղ ովկիանոսից մինչև Բալթիկ, Սպիտակ ծովից մինչև Սև ծովը։ Մեր ծովային սահմանն իսկապես վեթխարի յե։

Վորպեսզի մենք աչալուրջ կերպով պահպանենք ծովային սահմաններն իրենց վողջ տարածությամբ, վորպեսզի թույլ չտանք թշնամուն մեր տերիտորիալ ջրերը մտնի, մենք պետք ե ունենանք հզոր խորհրդային ուղղմա-ծովային նավատորմ։ Մեծ պետության արժանապատվությունը հարկադրաբար պահանջնում է մեղանից, վորպեսզի մենք ծովի վրա նույնչափ ուժեղ լինենք, վորչափ ցամացում։ Ստալինյան հնգամյակների տարիների ընթացքում մեր քաջարի կարմիր Բանակը դարձել է ահեղ ուժ, վորն ընդունակ է ջարդություր անել ամեն մի թշնամու։ Ստալինյան հնդանյակների տարիների ընթացքում մենք ստեղծել ենք Հիանալի բազմաբանակ ավիացիա, վորը ցույց է տալիս ամբողջ աշխարհին խորհրդային ավիացիոն տեխնիկայի վայրը, թոփչքային կազմի քաջությունն ու դերազանց պատրաստությունը։ Ստալինյան հնդանյակների տարիների ընթացքում մենք վճռականորեն առաջ ենք շարժել խորհրդային ուղղմա-ծովային նավատորմի զարգացումը։ Խորհրդային մարտական նավերի վիմունքներն այժմյանից ծածանվում են խորհրդային յերկրի ափերը վոզով ըող բոլոր ծովերում։

Սակայն միջազգային բարդ պարագան մեզ Հարկադրում է ամենամեծ հոգատարությամբ վերաբերվել մեր

Հայրենիքի պաշտպանունակության հետադա ամբազմ մանը:

Հունվարի 15-ին ԽՍՀՄ Գերադույն Խորհուրդը յերկու պալատների միացյալ նիստում մեծ վողեվորությամբ հաստատեց Ռազմա-Ծովային Նավատորմի Փողովրդական Կոմիտարիատի կազմումը, փոփոխություն մտցնելով Սահմանադրության համապատասխան հոգվածի մեջ։ Այդ նրանակալից պետական ակտը նշանակում է, վորայիժմյանից մեր նավատորմը մտնում է իր դարպացման նոր փուլի մեջ։

Խորհրդային ժողովուրդն իմանում ե , վոր բոլշևիկների մոտ խոսքը յերեք չի բաժանվում գործից : Խորհրդային ժողովուրդն իմանում ե , վոր մեր բանվորա-գյուղացիական կառավարությունն իր ամեն մի խոստում պատվով է կատարում : Խորհրդային ժողովուրդը կարող է միանգամայն վատահ լինել , վոր մեր հայրենիքը հիանալի նավատորմ կունենա :

Սոցիալիստական հզոր արդյունաբերությունն ընդու-
նակ և կատարել Մաղմա-Ծովալին Նախատորմի Փողովր-
դական Կոմիսարիատի ամեն մի ռեսակի պատվերները :
Հատուկ նշանակում ունեցող հզոր գործարանները,
վորոնց կառուցումը ներկայումս հաջող կերպով ավարտ-
վում է, բաց կժողնեն իրենց նախաչինաբաններից ամեն մի
կատեգորիայի ռազմական նույները : Մեր կարմիր նախատոր-
մայինները, չբամանատարները և քաղաքանատողները, վո-
րոնք ուժեղ են իրենց արիությամբ, իրենց պանծալի տրա-
վագիաներով, ընդունակ են աշխարհիու լավագույն նա-
խատիները լինելու :

Մեր յերկրի ժողովուրդն իր հերոսական պատմության
ընթացքում բաղմիցս ապացուցել է, վոր նա ունի իր մեջ
մեծ սեր գեպի ծովային գործը։ Հայտնի յէ, վոր ոստա-
կան նախատրմն իր զարդացման արշալույսին, Պետրոս
Մեծի որոք, կարողացէլ է բաղմիցս պարտության մատնել
շվեդներին, վորոնք այն ժամանակ ունեցին առաջնակարգ
մարտական նախատրմ։ Գանգուտի և Գրենգամի մուռ

տարած փայլուն հաղթանակները վոսկե տառերով գրված
են մեր հայրենիքի նավատորմի պատմության մեջ։ Զես-
մայի և Սլնոպի տակ ոռուս նավաստիներն անթառամ փառ-
քով իրենց ծածկեցին։ Սեվաստոպոլի հերոսական պաշտ-
պանության ժամանակ նավատորմի նավախմբերի քաջարի-
ությունն աչքի ընկնող դեր ե խաղացել թշնամու դեմ կա-
տարած հաջող զործողություններում։ Յարական աղմի-
րախների անչնորհքությունը կործանել ե ոռուսական նավա-
տորմը Ցուսիմայի տակ, բայց նաև այդ ծանր մարտում
ոռուս նավաստիները կռվում ելին մեծ արիությամբ հա-
կառակորդի դերազանց ուժերի դեմ։

Հայոնի յե, թե ինչպիսի հոկայական դեր են խաղացած մեր նավաստիները հեղափոխության առաջին տարինեցել մեր նավաստիները հեղափոխության առաջին տարինեցում։ Քաղաքացիական պատերազմի բոլոր քրոնաներում կարելի յեր տեսնել կարմիր նավաստիներին, վորոնք մինչեւ արյան վերջին կաթիլը պաշտպանում ելին հարազատ չողը և հեղափոխական աղաստությունը սպիտակ դվարդիականներից և ինտերվենտներից։

Գաղաքացիական պատուերազմը վերջանալուց հետո, և
նինի-Մտալինի կուսակցությունը և Խորհրդային Կառավա-
րությունը վողջ ժողովրդի ոժանդակությամբ ձեռնարկե-
ցին նավատարմի վերականգնմանը խորհրդային բոլոր ծո-
վերում։ Մենք վերականգնել ենք, որից սարքավորել ու
սպառավիճնել հին մարտական նավերը, մենք կառուցել ենք
բավական նոր մարտական միավորներ, մենք հասել ենք
այսպիսի դրության, վոր մեր ծովագյին սահմանները գըտ-
նիցեցին հուսալի պաշտպանության տակ։

Սակայն պետք է հիշել, վոր մենք ամպրոպային ժամանակ ենք ապրում: Ֆաշիստական գիշատիչները լիովաբար և բացահայտորեն պատերազմի յեն պատրաստվում: Աշխարհը պատաժ է ծովային սպառազինումների տենդով: Գերմանիան, ձապոնիան և Իտալիան ամեն տարի ավելացնում են իրենց հավաշինարարական ծրագրերը: Հայտնի յե, վոր ձառնունիան և Իտալիան հրաժարվել են վորեն համաձայնություն ստորագրել մյուս յերկրների հետ ծոհագածային առաջնորդություն:

վային սպառազինությունների սահմանափակման մասին։
Գերմանիան թեև ստորագրել է ծովային համաձայնությունը, բայց մենք նախորդ փորձի հիման վրա դիտենք, թե ինչ արժեն ֆաշիստների խաղաղ հավաստիացումները։

Խորհրդային հզոր յերկրի կենսական շահերը հարկադրաբար պահանջում են, վորպեսզի մենք ունենանք հզոր առաջա-ծովային նավատորմ, վորն ընդունակ լինի վոչ միայն պաշտպանվել, այլ և, անհրաժեշտության դեպքում հարձակվել ու վոչնչացնել թշնամուն նրա տերիտորիայ ջրերում։

Ահա հենց դրա համար ել, վորպեսզի ստեղծենք այն-պիսի նավատորմ, վորը համապատասխանի խորհրդային մեծ պետության արժանապատվության, կազմված և Ռազմա-ծա-ծովային հաստուկ ժողովրդական Կոմիսարիատ։

ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի յերկու պալատների միացյալ նիստում, 1938 թ. հունվարի 15-ին Վայաչեսլավ Միհայլովիչ Մոլոտովն իր ճառում սասաց։

«Մենք կարծում ենք այսպես. զիսավորն այն ե, վոր ամուր և հզոր լինի մեր պետական նավը, իսկ նա, ինչպես մենք դիտենք, ամուր և և ել ավելի ամ-բանում ե։ Մեր խորհրդային իրավակարգը հզոր և և ցանկանում ե ել ավելի հզոր լինել, ցանկանում և անառիկ լինել թշնամիների համար։ Դրանից մենք հետևություն ենք անում, վոր մեզ հարկավոր և ու-ժեղ կարմիր Բանակ և մեզ հարկավոր և ուժեղ Ռազմա-ծովային նավատորմ։ Խորհրդային հզոր պետությունը պետք է ունենա իր շահերին համա-պատասխանող, մեր մեծ դործին արժանի ծովային և ովկիանոսային նավատորմ»։

Գերագույն Խորհրդի գեպուտատները, ժողովրդի ընտ-րյալները, շերմորեն հավանություն են ավել Միության ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախադահի ճա-ռին։ Վոզչ խորհրդային յերկերը հսկայական վողեռու-թյամբ և ընդունել ընկեր Մոլոտովի ճառը։

Խորհրդային Ռազմա-Ծովային Նավատորմը, վորն սպառազինված ու հաղեցված և տեխնիկայի վերջին խոռոչը համաձայն, ուժեղ և իր նավատիների արիությամբ ու հեղափոխական վողով, հակառակորդի հետ հենց առաջին ընդհարման դեպքում ցույց կտա քաջության հրաշքներ։ Այն թշնամիների վիճակը, վորոնք կհամարձակվեն մեր հայրենիքի վրա հարձակվել, կլինի ջախջախում և խոր-տակում։

ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՅԵՐԿՐԻ ՌԱԶՄԱ-ԾՈՎԱՅԻՆ ՈՒԺԵՐԸ

Զորեղ ե մեր հայրենիքի պաշտպանական հզորությունը : Այդ ուժեղի պահպատելի յեն նրա զինված ուժերը : Այդ ուժեղի պահանձալի ջոկատն ե մեր Ռազմա-Ծովային Նավատորմը, վորս ստեղծվել ե ԽՍՀՄ Պաշտպանության ժողկում, Խորհրդական Միության մարչալ կ. Յե. Վորոշիլովի ահմենական գեկավարությամբ :

Վերջին տարիների ընթացքում մենք վոչ միայն ամ-
բացը և ուժեղացը ենք Բալթյան և Սկ ծովերի ծովա-
յին ուժերը, այլ և մեր ծովային սահմանների հուսափ
պաշտպանություն ենք ստեղծել Հյուսիսում և Խաղաղ
օվկիանոսում :

Միության մազմա-Ծովային Նավատորմն աճել և աք-
քացել ե սատլինյան հնագամյակների կատարման հետ միա-
սին։ Աղդիականության վիթխարի կառուցվածքը՝ Սպի-
տակծովյան ջրանցքն ունեց յուրացնել անդրբեկուային
ծովային շրջանը։ «Բարենցի ծովում կենտրոնացել են բո-
լոր ծովերի չարիքի վորիները», — գրում ելին գերմանա-
կան ծովագնացները, վորոնք յեղել են անդրբեկուային
շրջանում իմակերպալստական պատերազմի ժամանակ։
«Զարիքի վորիները»— կույր տարերքը— տեղի յեն տալիս
յերկաթե կազմակերպվածությանն այնտեղ, վորտեղ յերե-
վան ե գալիս ստալինյան սաների համակենտրոնացված
կամքը։

Հիմնալի նավեր են յերևան յեկել Խաղաղ ովկիանոսի
խորհրդային ավերում։ Քաջարի կարմիր նավատօրմային-
ներն ամենակարճ ժամանակամիջոցում յուրացրել են այդ

նոր ծովային շրջանը, ամենուրեք ցուցաբերելով խիզա-
խություն, տոկունություն, հախաձեռնություն։ Վող կա-
պիտակիստական աշխարհը հիմա մեր Խաղաղովկիանույան
հավատորմն այնպիսի գործոն է համարում, վորին հար-
կադրված են Ալջորեն հաշվի առնել ճապոնական աղքա-
սորները։

Աճել են՝ և՝ քանակավես, և՝ վորակատպես, Վարդըա-
քըու Բալթիկայի և Սև ծովի նավատորմերը։ Հեռավոր
նավաբկությունների ընթացքում վարժությունների ժամա-
նակ, 1937 թվի ամառային և աշնանային կամպանիանե-
րի ժամանակ Բալթյան և Սևծովյան կարմիր նավատորմա-
յինները ցուցաբերել են բարձր մարզվածություն և անվե-
հերություն։ Հիմնալի յեր աշխատառմ նավերի տեխնիկա-
կան ծառայությունը։ Գծանավերը, եսկադրային ականա-
կիրները, տորպետային կատերները և սուլանավերը հա-
ջողությամբ կատարում են մարտական բարդ առաջա-
գրությունները, իրար հետ սերտ համագործակցելով։ Բո-
լոր նավերը ցուցաբերել են զենքի հմուտ կիրառում մար-
տականին մոտիկ պարագայում։ Վոչ պակաս հաջողու-
թյունների յե հասել նավային և առափնյա հրետանին։

Բայց ամենահիմնավեն մեր ծովալին սակառնութեան
գա նրա կադրերին են: Պաշտպանության ժողովրդական
կոմիսար, Խորհրդային Միության մարզաւ ընկեր Վորո-
չելովլը Բալթյան նավատորմի կարմեր նավատորմայիննե-
րի միտինգում ունեցած իր յերույթում ասաց, վոր մեր
դժանավերը Բալթիկայում կափեն ամեն մի թշնամու, վոր
մեր նավերը մեծ, խոշոր ուժ են ներկայացնում, ևս առա-
վել, վոր աշխարհում վոչ մի նավի վրա այդպիսի հիմ-
նալի մարտիկներ չկան, այլպիսի հրաշալի նավակազմեր
չկան, ինչպիսիք կան մեր գծանավերի վրա:

Ըստ կայուն պատճենագիր առաջ կարմիր սակառանուայլութեաւ
Ըստ կայուն պատճենագիր առաջ կարմիր սակառանուայլութեաւ

ունի ամենահարուստ աղբյուրը՝ յերիտասարդ, ւավ սովորցրցած և իրենց հայրենիքին անսահմանորեն նվիրված կաղերի առաջքաշման համար: Գետք և այդ բացառապես չնորհապարտ հնարավորությունն ոգտագործել անհապաղ և լրիվ չափով:

Մաքրվելով ֆաշխտական կեղտից, անարդ և ստոք տրցկիտական-բուխտարինական այլասերվածքներից, վորոնք սպրել ելին մեր նավերը, վարչությունները և արորյեկանները, մեր սազմա-ծովային ուժերն ել ավելի ամրացան և անընդհատարար կամքեն ու կամքանան:

Այս բոպեյին ԽՍՀՄ բոլոր նավատորմերի անձնակազմը պայքար և մզում այն ինդիբների բոլշևիկյան կատարման համար, վորոնք դրված են Պաշտպանության Ժողովրդական Կոմիսարի՝ Խորհրդային Միության մարշալ բնկեր Վորոշիլովի կողմից սազմա-ծովային ուժերի առաջնոր ուսումնական տարվա համար:

Մէծ, պատասխանատու և բազմակողմանի յեն այդ ինդիբները: Հրամանատարները, քաղաքատուղները և կարմիր նավատօրմայինները պետք և կատարելապես տիրապետեն ծովային մարտի և ոպերացիայի բարդ ձևերին, ձգտելով բոլոր ուժերի և միջոցների ել ավելի սերտ համագործակցությանը, բաց ծովում հակառակորդին հզոր կենտրոնացված հարլած հասցնելու համար: Անհրաժեշտ է հրամանատարական կազմի սպերատիվ-տակտիկական պատրաստության հետագա հաստատակամ կատարելադրությունը: Բարձր պահանջներ են առաջադրվում նավատօրմերին կրակային պատրաստության բնազավառում: Պահանջվություններն այս տարի պետք է ցույց տան մարտական դրույթությունների նոր նմուշներ բարդադրած պայմաններում: Համառ աշխատանք կտահանջի այն ինդիբները լուծումը, վորոնք դրված են ծովային ավիացիայի և գետային նավատօրմիկների առաջ:

Առաջնակարգ նշանակություն ունեցող ինդիր և սազմա-ծովային նավատօրմի հզորության հետագա աճման և ամրապնդման հիմքն և կազմում նավատօրմի հրամանա-

տարական կաղըրերի և վողջ անձնակազմի բոլշևիկյան դաստիարակությունը: Խորհրդային նավատօրմի կուսակցական և անկուսակցական բոլշևիկները պետք և միշտ հիշեն ընկեր Ստալինի, Համկ(բ)կ կե վետրվարյան-մարտյան Պլենումում տված պատմական ցույցումները բոլշևիզմին տիրապետելու խնդիրների մասին, կաղըրերի քաղաքական լուսավորության և կոփկածության մասին: Առաջնորդի այդ ցուցումների բոլշևիկյան կատարումը բոլոր կոմիսարների, քաղորդանների, կուսակցական և կոմիսարիական կազմակերպությունների համար, խորհրդային սազմա-ծովային նավատօրմի բոլոր բոլշևիկների համար հանդիսանում են նրանց բոլշևիկյան պատմի գործը:

Կուսակցությունն ու կառավարությունը, ընկեր Ստալինն անգույն հոգ են առանում մեր ծովային սահմանների ամրացման մասին: Նրանք անշեղորեն կատարում են լենինյան մեծ պատղամը՝ քանի դեռ գոյություն ունի կապիտալիստական ըլջապատճենը և ուղարկան վագանական պատկանը, ուղարկանը և ամրանալիքը, ուղարք և ամրանալիքը, բանակը և կարմիր նավատօրմը: Համկ(բ)կ XVII համագումարում ընկեր Վորոշիլովն ասել է. «Ընկեր Ստալինի մշտական և անմիջական մասնակցությամբ ու զեկավարությամբ մենք աշխատում ենք նաև մեր սազմա-ծովային ուժերի ուժեղացման վրա, վորոնք շատ մեծ նշանակություն ունեն բազմահազար բաց ծովային սահման ունեցող մեր յերկրի ուղաշտպահության համար»:

Հաշվի առնելով սազմա-ծովային նավատօրմի հետագա զարգացման կրամորությունը հայրենիքի պաշտպանության համար և կենապորձելով կուսակցության դիմք՝ ժողկոմանների մանրացման վերաբերյալ, մեր կառավարությունն ստեղծել ե ԽՍՀՄ Ռազմա-Ծովային գործերի հասուկ ժողովրդական Կոմիսարիատ: Այդ միջոցառումն սպահովում ե մեր խորհրդային մագմա-Ծովային նավատօրմի կատարելագործման նոր վերելքը, նոր աճումը:

Խորհրդային Միության ժողովուրդներն ուրախությամբ ու պարձանքով դիմավորեցին այդ վորոշմանը:

Յերբ իտալական Փաշխտաները լկախաբար ջրասույզը արէին «Առմսոմոլ» և «Բլագոյեվ» խորհրդային նավերը, միլիոնավոր բանվորներ, կոլոնանասականներ, ինտելիգենտներ, մարտիկներ և հրամանատարներ բաղմաթիվ միտինդներում և ժողովներում խնդրում եյին կառավարության ուժեղացնելու ռազմա-ծովային ուժերի շինարարությունը։ Ֆարբիկաներում, գործարաններում և կորոնտեսություններում, զորամասերում և միավորություններում սկսվել աշխատավորների միջոցների հատկացումը նոր հզոր նավերի կառուցման համար։

Մենք նավեր ունենք, վորոնք առատորեն հաղեցված են նորադույն տեխնիկայով, հիանալի կերպով սպառազինված են ամենաժամանակակից հրետանիով և ապարատությով, բաղմիցս ցույց են տվել իրենց սքանչելի հատկությունները շտորմային պարագայում և ձմեռվագությամբ։ Թող իմանան բոլոր նրանք, ովքեր ան տնկում մեր յերջանիկ հայրենիքի, մեր հարստությունների վրա, ովքեր վոտնձգություն են անում մեր հողերի անձեւնմիտելիության գեմ, վոր Խորհրդային Միության ծովային սահմանները նույնչափ անմատչելի յեն, ինչպիս ցամաքային սահմանները։

Ռազմա-ծովային ուժերի անձնակազմը, վորը սերտութեն համախմբված ե լենինի-Ստալինի կուսակցության շուրջը, անսահմանորեն նվիրված ե իր հայրենիքին, ընթացիկ տարում նոր հաջողություններ ձեռք կրերի քաղաքական ու մարտական պատրաստության, ռազմա-ծովային բարդ տեխնիկային տիրապետելու գործում։

Նավառորմերի և նավառորմիկների հրամանատարները, քաղաշխատողները, կարմիր նավառորմայինները գեղամավորեցին կառավարության վորոշմանը Ռազմա-ծովային գործերի Համամիտութենական Կոմիտարիատ կազմելու մասին հսկայական ենտուղիազմով և վողեվորությամբ։ Նավառորմի շատ նավերի վրա և մասերում տեղի յեն ունեցել անձնակազմի միտինդներ։ ԲԳԿԲ-ի կ. Յե. Վորոշիլո-

վի անվան Ռազմա-Ծովային ակադեմիայի ունկնդիրները և պրոֆեսոր-գասափոսական կազմն իրենց բանաձևում հայտարարել են.

«Լողջունում ենք ԽՍՀՄ կառավարության վորոշումը Ռազմա-Ծովային զործերի Համամիտութենական Կոմիտարիատ կազմելու մասին։ Այդ պատմական վորոշումը հանդիսանում է սոցիալիզմի մեջ յերկրի ուժի և հզորության արտահայտությունը, կուսակցության և կառավարության և անձամբ ընկեր Ստալինի բացառիկ ուշադրության և հոգատարության արտահայտությունը ԽՍՀՄ ռազմա-ծովային ուժերի հանդեպ... Ակադեմիայի ունկնդիրները, պրոֆեսորները, գասափոսները խուսանում են կուսակցության ու կառավարությանը, վոր նրանք կաշխատեն բոլցեկիյան յեռանդով կատարելու իրենց վրա գրած խրնդիրները՝ հզոր, աշխարհում ամենաուժեղ Խորհրդային ռազմական նավառորմ ստեղծելու համար։»

Այդ բանաձեռնում արտահայտված են ռազմա-ծովային ուժերի վողջ անձնակազմի մտքերն ու զգացմունքները, ուժեր, վորոնք հանդիսանում են բանվորների և գյուղացիների սոցիալիստական պետության դինամիզմ ուժերի բաղադրական, անբաժանելի մասը։ Յեկ յեթե խփի ռազմական տաղնապի ժամը, մեր պանձալի կարմիր նավառորմայինները, ուս ուսի տված հետևակների, տանկիսաների, ողաչուների, Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի գորքերի բոլոր տեսակների մարտիկների հետ միասին անսասնորեն կկատարեն մեր սոցիալիստական պաշտպանության հիմնական սկզբունքը, այն ե՝ թշնամուն հարվածել այն տերիտորիայի վրա, վորտեղից նա կփորձի խախտել ԽՍՀՄ սահմանները։

ՄԱՐՏԱԿԱՆ ՀԱՄԱԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ

Ակսում եր լուսանալ: Հարավային վառ աստղերը դու-
նատվում և հալչում եյին: Ավելի ընդարձակ և ավելի
նկատելի յեր դառնում հորիզոնի կապույտ շրջանը: Միմի-
այն հարավում կանչչափուն ծովային ընդարձակության
վերելում գորշաղույն յերեսում եր նախառավոտյան մա-
ռախողի շերտը:

Միայնակ զնացող սուզանավի վերին տախտակամա-
ծի վրա շուտով ընկան հորիզոնի յեղին հետեւից անըս-
պասելի կերպով ջրի տակից դուրս յեկած գարնանային
արեգակի վոսկեջրած շեղակի ճառաղայթները: Սուզանա-
վի զնում եր կրեյսերական (հածանավայշին) գրությամբ:
Թվում եր, թե մի առասպելական վիթխարի ձուկ և շարժ-
վում: Նա ևս յերկու սուզանավերի հետ միասին դունվում
եր ավտոնոմ նավարկության մեջ:

Այժմ, մասնակցելով նավատորմի մարտական տակ-
տիկական ուսուցմանը «կարմիրների» կողմից, սուզանավը
կուրսը պահում եր դեպի ծովի վորոշ տեղամասը: Սու-
զանավի հրամանատար Վաղիմիր Գետրովիչ Բրյանցելը,
վորն անցյալում, ինչպես և իր հայրն ու պապը, յեղել և
Փրեզերովշչիկ, անմեկեն կերպով դունվում եր մարտական
մենախցիկում (ռուբկայում) դեմքելով հորիզոնը: Աչքե-
րը կկոցած նայելով խաղաղացած ծովի շացուցիչ փայ-
լին, նա հածախ մոտեցնում եր ծանր յերկդիտակը հոգ-
նած, քիչ ուսած աչքերին:

Միավորության մեջ նա արժանապես համարվում եր
ամենափոքած սուզանավորդ - հրամանատարներից մեկը,
թեև յերրորդ կամպանիան եր, վոր սուզանավի հրամանա-
տարն եր, իսկ տաս տարի առաջ նա յեկել և հենց այս

առւզանավը վորպես շարքային կարմիր նավատորմային -
դեկակալ:

Աշխուտյի՛ և սրտաբաց լինելով, նա աչքի յեր ընկնում
հրամանների պարզուոց իշխանականությամբ, շարժումնե-
րի վստահությամբ, վարվելաձեւերի տոկուն պատկառելիու-
թյամբ: Նա ասում եր. «Սուզանավորդ-նավատիների մեջ
չպետք ե լինեն սառն արյուն ունեցող մարդիկ: Նրանք չեն
կարող ըլինել ճշդրիտ, ինչպես խրոնոմետրը, և շարժու-
նակ, ինչպես սնդիկը»:

Հրամանատարին ել պատշաճ նավախումբն ե:

Ահա հրամանատարից մի քիչ հեռու կանդնած և նշա-
նաբար Տուրկմենովը, ծառայություննից առաջ նախկին ան-
տառահատը, իսկ այժմ լավ հայտնի յե սուզանավերի վողջ
միավորության մեջ: Նա աչքի յե ընկել գեռ յերկու տա-
րի սրանից առաջ:

Այն ժամանակ, ուշ աշնանը, մութ դիշերին, ինչպե-
սիք լինում են միմիայն հարավում, սուզանավը վերադառ-
նում եր իր բաղան: Յերրորդ որն եր, վոր ծովում մոլեգ-
նում եր իննը բալլանց փոթորիկը: Զրի սարերը թափ-
վում եյին տախտակամածի վրա, աղի ջրով հեղեղելով
նեղ կամքջակը, վորտեղ սառել եյին հրամանատարն ու
զեկակալը: Մանյուլիկով կաթնանման փրփրուրով յենա-
ցող բլուրների միջև, սուզանավը զանդաղորեն առաջ եր
շարժվում: Յեկ համկարծ լերսոննսի փարոսի տրամերսի
ուղղության վրա, սուզանավը սրբնթացորեն նետվեց իր
կուրսից դեպի մի կողմը և անճարակորեն պոտովեց իր
տեղում:

— Զեկը փչացել ե:

Կանդնեցրին դիվելները: Զեկավարությունը կորցրած
սուզանավին ալիքներն ոկացին շպատել մեկ բորտից գե-
պի մյուսը:

— Լիկիլդացիայի յենթարկել ալարիան:

Կատարելով հրամանատարի հրամանը, նշանաբար
Տուրկմենովը և ավագ ելեկտրիկ բերնողովը զգուշաբար
ակսեցին անցնել դեպի վնասվածքի տեղը, նավախելը:

Յերեկը, խաղաղ յեղանակին, այդպիսի վնասովածքի առքելը մի քանի բոպէ կզահանջեր։ Բայց այստեղ չորս կողմը մութն եր, իսկ լուսավորել վերնաշենքը չի կարելի։ Նավատորմը գտնվում եր վարժական-մարտական տաղանապի վիճակում։

Ալիքները դաժան համառությամբ մարդուն վայր ենին դցում։ Հարկ եր լինում ամբողջ հասակով ուղղվել, յերբ նավախելը ջրի տակ եր գնում, և սրբնթացարար պառկել նեղ տախտակամածի վրա, հենց վոր նա մերկացած պտուտակներով վերասլանում եր ալիքների կատար։

Փայտացած մատները կորցնում ենին առաձդականությունն ու ուժը։ Յերբ սուզանավը հանկարծ ուժեղ կերպով թեքվեց մեկ բորոտի կողմը, Յերնդուցը չկարողացալ երան պահել։ Տախտակամածի վրայով թափալվող ալիքը քեց նրան յեռացող ծովի մեջ։

Ամեն ինչ տեղի ունեցավ կայծակի արագությամբ։ Տուրկմենովը, առանց իրեն կորցնելու, նետվեց փրկելու խեղղվող ընկերոջը, միմիայն կարողացավ դռապ՝ «Մարդ ընկալ բորտից դուրս»։ Բայց կատաղած տարերքի ազգութեաւ հետեւանքով, նրա ձայնը չվավեց մարտական մենախցիկում։ Սուզանավն առաջվա պես նետվում եր մեկ ալիքից դեպի մյուսը։

Լողումով Տուրկմենովը տարվում եր նավատորմում ծառայելու հենց առաջին տարվանից, կատարելավես տիրապետելով դրան։ Սեծովյան նավատորմի սուզանավորդների մեջ նա չղերազանցված լողորդ եր համարվում։

Մի քանի բոպեյից հետո նրանք յերկուսով ներկայացան հրամանատարին, զեկուցում տալով զեկային հաղորդակին ուղղելու մասին, կարծես թե, վոչինչ չեր պատահել։ Միմիայն մյուս սրբ նավի վրա իմացան Տուրկմենովի խիզախ արարքի մասին։ Ապշել եյին նույնիսկ փորձված նավասահները։ Դեկավարությունը կորցրած նավից փոթորկող ծովի մեջ նետել, այն ել դիշեր ժամանակադար դերարիություն ե։

Վերհիշելով այլ դեպքի մասին, Վարդիմիր Պետրովիլը մի հայացք ձգեց բազմեւեց բոնած նշանարարի վրա։ Վարդիմիր Պետրովիչի նավախումբը վոչ մի բանով չեր տարբերվում մյուս նավերից, բայց նա հպարտանում եր իր մարդկանցով և պատեհ դեպքում պարծենում եր։ «Այդպիսի մարդիկ, ինչպիսիք ինձ մոտ են, պետք ե փընտուել։ Վոչ մեկի մոտ այդպիսիներ չկան»։ Նրան թվում եր վոր իր մարտիկներն ամենաճարագիկն են, ամենատոկունը և ամենաուժեղը, և ավելի լավ են տիրապետել մարտական տեխնիկային, քան վորեւ մեկը։

— Վերցրեք, — ասում եր նա, — մոտորիստ Սուլեյմանով Մուխտմեղջանին։ Քիչ ե ասել, վոր նա գերազանց մասնակետ է։ Պետք ե իմանալ, թե ինչպիսի արտասովոր ջանք ե թափել նա դրա համար։ Յերբ նա յեկալ նավատորմ, միանդամայն կիսադրագետ եր։

Իսկ հիմա, տեսնո՞ւմ եք, նպատակ ե դրել ուսումնասիրել մաթեմատիկայի վողջ դասընթացը, նաև բարձրադրույնը ներառյալ։

— Ինչի՞ պետք ե քեզ բարձրագույն մաթեմատիկան։

— Հարկավոր կը իմինի, յես դեռ յերիտասարդ եմ։

Խորը փոխադարձ համարարեկամությունն զգացվում եր ամեն որ։

Յերբ Վարդիմիր Պետրովիչն իջնում եր նավասենյակը հանդասանալու, նավի վրա իսկույն լիակատար հանդարտություն եր սահմանվում։ Մարդիկ աշխատում եյին շարժվել և ամեն ինչ անել առանց ազմուկի։ Լսվում ե միմիայն նավի սրակի զիշելմուռների համաշափ խը։ Ամեն մի անդամություն առաջացնում եր վրդոված բողոքներ՝ «Համդարտ, հրամանատարը հանդսանում ե»։

Եեթե հրամանատարն անհերթափոխ որապահում եր կամքջակի վրա, ուղղաձիր սանդուխքով բարձրանում եր կոկ (խոհարար) Զախարչենկոն իր անփոփոխ ձյունափայտ թասակով և, ուկրաիներեն ու ոուսերեն լեզուները իսառնելով, առաջարկում եր՝ «անուշ արեք, ընկեր հրամանա-

տար, բլինեցները, շատ լավն են»։ Նոր թխած բլինների կույտով ափսեն սովորաբար անցնում եր Վլադիմիր Պետրովիչի ձեռքը։

Անցյալ տարվա կամպանիայի վերջին արշավի ժամանակ մարտիկների ջերմ հողատարությունը և ուշադրությունը հատկապես հուղեցին Վլադիմիր Պետրովիչին։ Այս ժամանակ նա դրեթե ամբողջ որ ու գիշեր սպահ եր կանգնած մարտական մենախցիկում։ Ալիքները, ցրվելով վերնաշենքերին դիպչելուց, թափվում եյին կամրջակի վրա սառա անձրեսի ձեռվ։ Զնայած տաք բրդե հաղուստին, ցուրտը թափանցում եր մինչեւ կոսկորները և հատկապես ուժեղ եր զդացվում, յերբ թրջվում եյին թաղյակները (վալենկի)։

Կարմիր նավատորմային հերնդոլցն իր անձնական բարեկամ Մուխոսմեղջան Սուլեյմանովի հետ միասին զիգելային խլացուցիչների վրա կազմակերպել եյին թաղյակների չորացումը։ Յերբ մեկ զույգն ուղարկվում եր դեպի վեր, մյոււլը չորացվում եր։ Վունամանների փոխումը տեղի յեր ունենում գրեթե յուրաքանչյուր ժամ։

Իսկ մի քանի որից հետո Վլադիմիր Պետրովիչի աչքին ընկալվիցե-աղմիրալ Ա. Ա. Լիվենի՛ համաշխարհային պատերազմի տարիներին հասարակ դինորներից (նիժնի չին) յերկու տեսակետից՝ հասարակական դիրքով և սահատոնեական դըրությամբ։ Նավաստին ծագում ե բնակչության ստորին խավերից, վորոնք քիչ են զարգացած և չքավոր են, իսկ սոլան պատկանում ե ավելի ինտելիգենտ և ունեվոր դասակարգերին, այսպես կոչված արտօնյալ դասին։ Այդ յերակումի միջև ի ծնե դոյցություն ունի մի անդունդ, վորը դժվար անցանելի յե՛ թե՛ առաջինի և թե՛ յերկրորդի կողմից։

Այս խոսքերը կարգավուց հետո, Վլադիմիր Պետրովիչը միմիայն ժպտաց։ Յեթե առաջներում ցարական նա-

վատորմում և հիմա աշխարհիս ամեն մի կապիտալիստական յերկրի նավատորմում անսանցանելի անդունդ գոյություն ունի հրամանատարական և շարքային կաղմի միջեվ, ապա Կարմիր Նավատորմում, ինչպես և վողջ Բանվորա-Գյուղացիական կարմիր Բանակում այդպիսի պրոբեմ գոյություն չունի։

Այս սուզանավի որինակով, վորի հրամանատարն եր ինքը, Վլադիմիր Պետրովիչը տեսնում եր վողջ անձնակաղմի լնդհանրապես ամուր գործարար զողվածության, մարտական համաբարեկամության ակնհայտ արտահայտությունը։ Մարդկի համախմբված են Մեծ Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության սրբազն գրոշի տակ։

Ահա արդեն յերրորդ կամպանիան ե, վոր բոլոր ամենալավ կարմիր նավատորմային մասնագետները, վորոնք յենթակա յեն յերկարառու արձակուրդի դնալու, չեն հեռանում սերտորեն զողված կուեկտիվից, մնալով գերակետիկ ծառայություն մեջ։ Հրամանատար Բրյանցելի սուզանավում միշտ մարդկանց լրիվ կոմլեկտ կա։

Հետևանքներն արտացոլում են մարտական պատրաստության մեջ։ Բոլոր մեխանիզմների անմերժ գործողության հետ միասին, հաջողությամբ անց են կացվել ամենաբարդ մանյովրները և տորպեզային հրաձգությունները։

Անհմուտ ձեռքերում այդ բոլոր բազմաքանակ դետալները, վորոնք աշխատում են այդպես ուժմիկորեն և համերաշխ, կարող եյին անսպասելի կերպով լուել, սառչել մետաղի սառը մասսայի պես։ Ամենաչին աչքաթողը կամ անփութությունը կարող ե առաջացնել թանդարժենք վարժական տորպեզոյի խորասուզում։

Մոտորիստ Սուլեյմանովը պետք ե ամեն ինչի ուշ դարձնի՝ վառելանյութի մատակարարմանը, յուղելիքին, սոնակալներին, ջերմաչափերին։ Նշանարար Տուրկմենովը, վորը վերին վախտա յե կատարում, պետք ե կարողանա զնահատել, վորոշել պարագան և ժամանակին նկատել ամենափոքր կառածելի միաժամանակ ջրի յերեսին և ողում, նաևի մոտերքում և հեռավոր հորիզոնի վրա։

Սուրանավորդի համար զգացողությունը, լսողությունը և սրատեսությունը—անդնահատելի հատկություններ են:

Յեկ այս բոսեյիս Տուրկմենովն առաջինը նկատեց վաղուց սպասվող «Թշնամու» յերեան դալը: Ուժեղ յերկդիտակում հորիզոնի գծի հետեւոմ աղոտ յերեւոմ եյին հաւզիվ նկատելի կետեր:

Տաղնա՛պ . . . :

Վլադիմիր Պետրովիչը հաջորդաբար մի քանի հրամաններ և տալիս. «Տեղե՛րու, սուզմա՛ն . . . Ընդունե՛լ գլխավոր բարձաստը»:

Բացիում են վենտիլացիոն կլապանները: Աղմուկով դուրս և գալիս ողը ցիստերներից, տեղ զիջելով կապտավուն-կանաչ ջրին:

Մի քանի վայրկանից հետո ջրի մակերեսութիւն վրա մնաց միմիայն պերիսկոպի ցածր սյունիկը: Դրանով դեմելով, Վլադիմիր Պետրովիչը տարբերեց յերկու աղոտ սիրուեաներում եսկաղբային ականակիրների գծադրությունները: Նրանք դալիս եյին հանդիպական, հաճախակի փոփոխվող, զիզզազաձե կուրսով:

Հրամանատարը չսահմանափակվեց նրանով, վոր արագորեն կատարեց արագության, կուրսի և մինչև հակառակորդը յեղած հեռավորության հաշվարկը, վորոնք հիմնական ելեմենտներ են սուզանավից տորողեղային հրաձգության համար,— նա աշխատում եր ողտագործել գոյություն ունեցող նավազնացական-ոգերեսութաբանական պարագայի ամենաձեռնուու պայմանները: Ավելի լավ դաշտնապահության համար նա նավը դրեց արեգակի կողմից: Քարտեզի միջոցով ստուգելով խորությունները, նա գրոհի համար այնպիսի դիրք ընտրեց, վորը թույլ եր տալիս անշտանդ տեղ հեռանալ «հակառակորդի» խորքային սումբներից: (Իսկ մի անդամ ել նա դնում եր դեպի կրոհի որյեկալ ձկնորսական առաջատար-մոտորային նույնի հետեւ կիլովատերային ուղղությամբ, միմիայն յերբեմն-յերբեմն քիչ բարձրացնելով պերիսկոպը, իրեն կուրսը ճշտելու համար):

Վերջապես, մեկ եսկաղբային ականակը առաջացուուկը (Փորշտեկին) ընկավ պերիսկոպի տեսողության դաշտի մէջ ձախից և անցավ նշանոցի վրայի տարաղետի (վիզիր) խելիկը:

— Զախ ապարատ, պատրա՛ստ:

Հարվածից, վորուս արձականք, լսում և հրամանի կրկնումը: Վերջապես վերջին հրամանն ե՝

— Զախ ապարատ, կրա՛կ:

Նույն ակնթարթին նավում զգացվեց մի թեթև հրում: Տորպեդոն դուրս յեկավ ապարատից:

Այդ դրոհով սուզանավն ավարտեց վարժական ոպերացիայում իր ունեցած մասնակցությունը: Նույն որվայրեկոյան տրվեց նավատորմի մարտական ուսուցումների ավարտը:

Գիշերեցինք ծովի հատակի վրա: Գիշերային կիսախալարում լուռելուն և քուն և տիրում: Սուզանավի ըստասարկման համար, վորը պառկած և գետնի վրա մի փոքր թեքումով դեպի քիթը, քիչ մարդ և պահանջվում: Նավախմբի մեծ մասը հանդստանում ե: Վախուայիններից (հերթակալներից) պահանջվում է միմիայն լսել, զգալ և դրաստ մնալ: Հաղթահարելով քնկուտությունը, նրանք ըստաղվում են իրենց պոստի ստուգումով, շարժվում են, կարում են նախորդների կողմից մատյանում արած զըրանցումները:

Առավուաը, յերբ ջրի յերեսը գուրս յեկանք, վողջ նավակաղմը, խստ հերթականություն պահպանելով, լողացավ բաղնիքում: Հնարագործ մոտորիստները և ելեկտրիկները սարքեցին բաղնիքն ավտոնոմ նավարկության հենց առաջին որերին: Լողանալու համար ողտագործվեց բանեցրած տաք ջուրը: Աղիությունը չեր խանդարում տեղական արդյունաբերության «Կիլ» սապոնի հիանալի լուծվելուն այդպիսի ջրում: Բոլորս թրաչվեցինք, մաքրվեցինք, ինչպիսի բացթողում ստանալուց առաջ: Հանդստի որ ե: Նա յերկար ժամանակ մնաց անձնակազմի հիշողության մեջ:

Հրամանաւոտարի և կոմիսարի թույլտվությամբ նավի գուշակազմակերպելէ, նշանաբար Տուրկմենովը հիմնալի ինք-նաղործ համերդ կաղմակերպեց :

Կարճ միտինդ տեղի ունեցավ : Իսկ հետո հնարագետ-ները հանդես յեկան յերաժշտական և յերգեցիկ համար-ներով, գեղամացիայով ու նույնիսկ սեփական արտա-դրության վոտանավորների ընթերցումով : Ծրագիրը վեր-ջացավ կոլեկտիվ յերգերով ու պարերով : Պարերի հա-մար հատկացվեց Նեվայի պողոտան, ի հարկե, վոչ թէ այն, վորը Լենինգրադումն եր, այլ տեղականը՝ սուզա-նավի վերին տախտակամածի վրա, քթից մինչև մարտա-կան մենախցիկը :

Յերեկոյան, ովտվելով առանց քամու, պարով յեղանա-կից, գնում ելինք ափի մոտերքով : Սարի թեք լանջի վրա սպիտակին եյին տալիս Ղրիմի թաթար կուլոնտեսականնե-րի սվաղած խրճիթները : Յերբ մութն ընկավ, խարիսխ գցեցինք : Ելեկտրիկ բներգուցը, վորը, կոմյերիտական կազմակերպության հանձնարարությամբ, հասարակական կարգով կատարում ե կինոմեխանիկի պարտականությունները, մարտական մենախցիկի մոտ եկրան եր կառուցել : Հանդիսատեսները տեղավորվեցին ուղղակի տախտակամա-ծի վրա, իսկ ափից կինոսկարը նայում եյին ամենամոտիկ դյուրից հավաքված կոլտնեկանները :

Վլադիմիր Պետրովիչն իջավ իր նավասենյակը և ձեռքն առավ որագիրը, կամ, ինչպես նա ասում եր, «ոռոգանավի ծառայության ցուցակը» : Նա գրանցում եր ցուցադրի մեջ բոլոր նշանավոր գեղքերը նավի վարժամարտական կյան-քից : Այսոր նա գրեց . «Գտնվելով մեկ որ ավտոնոմ նա-կարկության մեջ, մասնակցեցինք նավատօրմի մարտա-կան ուսուցմանը : Յերկու եսկադրային ականակիրների վր-ա տված տորպեդային գրոհից հետո Փլադմանը բարձ-րացրեց «բարի» աղղանշանը» :

Յեթե կարդայինք դրանից առաջ գրածը, կարելի կը-միներ իմանալ, վոր սուզանավը յերկրորդ տարին ե, վոր պահում ե ձեռքում նավատօրմի տորպեդային և հրե-

տանային հրաձգությունների առաջնությունը, ԲԶ-1 լավա-դույնն ե միավորության մեջ : 1935 թվին սուզանավին մրցանակ ե հատկացվել զեղարկվեստական ինքնազործու-թյան համար :

Ժառանգական մետաղագործ Բրյանցեկը ձեռք եր բե-րում սուզանավորդ-հրամանատարի նոր մասնագիտություն : Նա մտադիր ե այդ նոր մասնագիտությունը նույնպես ժառանգական դարձնել : Փոխորդն արդեն աճում ե :

Յերեկ լրացավ նրա վորդու միջու 17 ամիսը : Յերբ նա 17 տարեկան կղառնա, Վլադիմիր Պետրովիչը նրան կուզարկի Ռազմա-ծովային ուսումնարան : Թող սովորի, հրամանատար դառնա . նա կկատարի յուրաքանչյուր խոր-հըրդային քաղաքացու ամենասրբազն պարտքը՝ պաշտպա-նել սիրելի հայրենիքի անձեռնմխելի սահմանները :

Յել ահա նրա գուստարը, նա արդեն միանդամայն չա-փահաս ե վոչ այնքան առաջ հայտարարեց . «Փոքը հասակումս յես իսկապես տարորինակ եյի : Կարծում ե-յի, թե սուզանավի վրա թիակներ կան» : Հիմա նա հիա-նալի իմանում ե, վոր սուզանավի վրա «վոչ իսկական, վոչ ել խաղալիքային թիակներ չեն լինում» : Դուստրը «իսկա-պես» մեծ ե, — մեկ ամսից հետո կլրանա նրա հինգ տա-րին : Ի՞նչ կղառնա նա, դեռ դժվար ե ասել, բայց սուզա-նավորդ հազիվ թե դառնա : Այնուամենայնիվ ինչ ցանկա-նա, այն ել կղառնա : Խորհրդային յերկրում ամեն մի յե-րազանք իրագործելի յե :

... Խաղաղ հանդիսան ընդհատվեց միանդամայն ան-սպասելի կերպով :

— Ընկեր հրամանատար, — զեկուցում եր նավասենյակ յեկած Տուրկմենովը, — մոտորիստ Սուլեյմանովը ծանր հիվանդացել ե :

Հիվանդի մահմակալի մոտ աշխատում եր նավի յերի-տասարդ բժիշկը, նրա չուրջը հավաքվել եյին կարմիր նտ-վատորմայինները :

Պարզվեց, վոր Սուլեյմանովը, մոտորները սրբելիս ու-յուղելիս, մի քիչ քերծել ե ձեռքը : Քերծվածքն այնքան

Հնչին ե յեղել, վոր նա նույնիսկ յոդ ել չի քուել: Բայց, հալանաբար, քերծված տեղի կեղոտում և տեղի ունեցել, վորովհետեւ ձեռքը մինչեւ արմնկահողն ուռել ե: Հիվանդն ավելի ու ավելի վատանում եր: Պարզ եր, վոր նա անհապաղ ստացիոնար (կացողական) բժշկության կարիք ունի:

— Ինքնաթիո կանչել:

Մի քանի բոպեյից հետո հածանավող սուզանավի վերեւում սկսեց պատել հիղբոխքնաթիոը: Նավից շտագիջեցրին փոքրիկ յերկյակը: Քանի դեռ ողաչուն մերձադեկում եր մեքենան հենց նավի բորտի մոտ, սպիտակ բերերով չաղ զինվորական բժիշկն արդեն բարձրանում եր սուզանավի վրա:

Նրան ուղեկցում եր կարմիր նամատորմային բերեգը, նավի ամենասրամիտ հնարագետը: Թվում եր, վոր նրան կյանքում վոչ մի դեպքում չեր թողնում կորսությունն ու կատակառեր տրամադրությունը:

— Զուրյա սանդուխքով, — նախազդուշացնում եր նա բժիշկին, — պինդ բանեցեք զոնակից: Ամենուրեք սայթաքուն ե, իսկ զորդեր չկան:

Բժիշկը դժվարությամբ անցավ ցած նեղ մենախցիկային դոնակի միջավ: Կենտրոնական պոստն անցնելով, նա դնաց դեպի հիվանդը:

Սուլեյմանովին զննելուց և պուլսը հաշվելուց հետո նա դիուլը թափահարեց:

— Շատ լուրջ դրություն ե: Արյան վարակում ե: Լավ ե, վոր ինքնաթիւ եք պահանջել: Բայց մինույն ե, ասրյան փոխներարկում ե հարկավոր:

Բժշկի զեկուցումը լսող վլագիմիր Պետրովիչը հանդիստ կերպով առաջարկեց.

— Վերցրեք իմ արյունը:

Բժիշկը, իջեցնելով ակնոցը մինչեւ քթի ծայրը, պարագած բարձրացրեց սպիտակ հոնքերը:

— Բայց, նրան հարկավոր չե մեկ կաթիլ, այլ յերեք

Հարյուր զրամ: Հասկանո՞ւմ եք, ընկեր Հրամանատար, յերեք հարյուր, գուցե և չորս հարյուր գրամ:

— Վոչինչ, վերցրեք չորս հարյուր, — սառնասրտորեն պատասխանեց Վլագիմիր Պետրովիչը:

Վերջացնելով արյան փոխներարկման պրոցեդուրան, բժիշկն ասաց նրան. «Հիմա ձեզ վորոշ հանդիստ ե հարցավոր: Պառկեցեք ձեր նավասենյակում»:

— Ծնորհակալ եմ ուշադրության համար: Յես թուշություն չեմ զգում, և ճիշտ ժամանակն ե, վոր յես փոխարինեմ շտուրմանին:

Բժիշկը չեր իմանում, թե ինչ ողատարսանի: Առանց ձայնի հուզմունքը թագցնելու, նա մեզմորեն ասաց. «Ահա քեզ մարդիկ, ամենախկական մարդիկ»:

Նավակազմի համար պարզ եր, վոր նա, այդ հասակն առած, իր կյանքում շատ բան տեսած բժիշկը հազար անգամ իրավացի յեր: Խորհրդային յերկիրը զարմացնում է աշխարհու վոչ միայն և վոչ այնքան մեքենաներով, վորքան ստալինյան կողմանը ունեցող, կայուն, խիզախ և նշված նոլատակին հասնելու հաստատակամ մարդկանցով:

Յերբ սուզանավին իր բաղան վերաբարձավ, խիելով ավտոնոմ նախարկության մեջ մնալու համանավատորմային ռեկորդը, նավամատուցիչ վրա հանդիպողների թվում գտնվում եր նաև առողջացած Մուխոմեդչան Սուլեյմանովը: Սուլեյմանովը և Հրամանատարը շատ ամուր սեղմեցին իրար ձեռք:

„Морской Сборник“ № 11, 1937 г.

ՄԻՋ ԱՌԱՋ

Բալթիկայում տեղի ելն ունենում աշնանային մարտական ուսուցումները:

Մանյովով «Արտյոմ» ականակրի նավախելի հետեւց բարձրանում եր յեռացող ջրային աշեկոծություն: Հեռվում յետեւց սիովում եր հարթուկած, փրփրակալած հետքը: Նա ձղտում եր հանդարտացած ծովի հարթ մակերևույթի վրա, վորպես շտուրմանական հսկայական քարտեղի վրա քաշած կուրսի դիմ: Կարծես թե, խուսափելով հրետանային կրակից կամ սուզանավից արձակած տորպեդից, ականակիրը, լրիվ թափով շարժվելիր, հաճախակի կտրուկ դարձումներ եր կատարում:

Պահուրդությունը (վախտա) մեքենայի վրա տանում եր խմբակի հրամանատար Դերդաչովը: Ուշադրությամբ հետեւելով ֆորառնկայի (բոցամուզ) մեջ մտնող նավի տաքացմանը և կանոնավորելով ողի մատակարարումը հոգմամուզների կողմից, նա հատուկ խնամքով դիտում եր այրումը, ծղտելով լիակատար անծխության հասնել: Կատարելապես խմանալով կաթսայական դրվածքը, հնոցապանները և մեքենավարներն ընտելացել եյին հասկանալ իրենց հրամանատարին մեկ ժեստից (շարժումից): Ամենմի արագության ժամանակ մեքենավարներն ապահովում եյին սառնարանի անխափան դործողությունը, իսկ հնոցապանները պահպանում եյին լրիվ ճնշումը կաթսաների մեջ: Դերդաչովն անձամբ հետեւում եր սոնակաների ջերմաստիճանում:

Կազմակերպվածությանը և անբասիր ճշտապահությանը նա ընտելացել եր դեռ նախատորմից առաջ, յերբ աշխատում եր վորպես փականապործ վորոնեժի դործիքային:

արհեստանոցում: Ականակրի յեկալ Մեքենայական դըպ-րացն ավարտելուց հետո կարմիր նավատորմի վերականդաման տարիներին՝ տասներկու տարի առաջ:

Ընդունակ և կարգապահ, նա հենց միանդամից իր վրա դրավեց հրամանատարության ուշադրությունը, իսկ ներքեմի տախտակամածի ընկերները հարդում եյին նրան որտարաց ու հաստատակամ բնավորության, տեխնիկական կրթությունը բարձրացնելու հարցաներ ձգտման համար:

Նավային ծառայության հենց առաջին տարվանից Դերդաչովը ձեռնարկեց իր գիտելիքների կատարելագործանը: Նա հասալ այն բանին, վոր, գտնվելով գեռ ժամեւկային ծառայության մեջ, նշանակվեց բաժանմունքի հրամանատար և հաճախ շարժընթացիկ վախտաների ժամանակ մնում եր խմբակի ավագի տեղը: Բայց նա դրա վրա կանգ չառավ: Յերբ մոտեցավ յերկարամեւ արձակուրդ դնալու ժամանակը, նա հրամանատարին տվեց հետևյալ զեկուցագիրը «Նկատի ունենալով միջազգային լարված իրադրությունը, խնդրում եմ ինձ թողնել զերակետիկ ծառայության մեջ...»: Այդ որերին հերոսական կարմիր Բանակը պաշտպանում եր Խորհրդային յերկրի հեռավոր արեւելյան սահմանները վրա տվող սպիտակ չինացիներից: Պատմական 1929 թիվն եր:

Դերդաչովին հոժարությամբ թողեցին և ուղարկեցին Մեքենայական դպրոցը սովորելու, ավագի պատրաստություն ստանալու համար:

Մեծ եր նրա ուրախությունը, յերբ 1934 թվի գարնանը նա կարդաց Պաշտպանության ֆողովրդական կոմիսարի հրամանը՝ միջին հրամանատարի քննությունների պատրաստվելու և տալու հնարավորության մասին: Պատրաստվում եր, սուանց ձեռները ծալելու: Յերեկը կանգնած եր վախտայում, իսկ յերեկոյան վերցնում եր դասագրքերը: Սերտ կոնոտական հաստատեց ականակրի վրա նավարկող կուրսանուների հետ: Աջակցելով նրանց գործնական ուժակություններ ձեռք բերելու գործում, նրանց կող-

մից նա ողնություն եր ստանում տեսական դասընթացի ուսումնասիրման գործում:

Բոլցեկիկ Դերգաչովի հաստատակամության և համառության ուժը հաղթեց: Քննությունը տվեց: Նա արդեն նավի մարտական մասի հրամանատարի ողնականն է: Յերեմին մնում է ավագ ինժեներ-մեխանիկի տեղը: Անյյալ տարի նա ինքնուրույն կերպով զեկավարում եր վերանորոգումը, վորն ավարտեց սահմանված ժամկետից 30 որ առաջ: Յեկ ահա վողջ ամսուային կամպանիայի ընթացքում ականակրի մեխանիկմներն անխափան են դործում:

Մարտական մասի հրամանատարը նրա մասին այսպիսի կարծիք ե հայտնում: «Դերգաչովը չի վախենում վոչ մի խոչընդոտից և դժվարությունից: Նրա հաստատակամությունն ու յեռանդը բավական ե ամեն ինչ կատարելու համար: Նա յերբեք չի թողնում մի անդամ սկսած գործը: Հարկավոր ե նավահանգստում գետալներ ձարել, — նա հճարի: Խոստացավ, վոր կվերացնի տուրբինի անսարքությունը, և վերացրեց 3 որվա ընթացքում, թեպես դորձարանը դրա համար պահանջում եր 15 որ: Նա մի մարդ է, վորի մոտ խոսքերը չեն բաժանվում դործից, մի մարդ է, վորը սիրում է կարգապահությունը»:

Դերգաչովը վոչ միայն հիմնալի մասնագետ է, այլ և ակտիվ հասարակական գործիչ: Մի քանի տարի նա զեկավարում եր նավային կուսակցական կազմակերպությունը: Բացի այդ, նա լենինգրադի խորհրդի անդամ է: Մասնակցել ե Խորհուրդների լենինգրադի մարզային համակումարի աշխատանքներին: «Խորհրդի պլենումները, — ասում ե Դերգաչովը, — յես հաճախում եմ կանոնավոր կերպով, իսկ ինչ վերաբերում ե սեկցիային, այդ դժվարանում եմ: Հազվագեղ ենք խարիսխ գցած կանգնում, ականակիրը զրեթե անընդհատորեն արշավներում ե գտնըվում»: Այժմ նա պատրաստում է իր ընտրությունների համար:

Նավի մշտական մարտական պատրաստությունն ապա-

հովելու իր աղնիվ, անձնվեր աշխատանքի համար Դերգաչովը յերկու տարի առաջ, կառավարության վորոշման համաձայն, պարզեատրվել ե կարմիր Աստղի շքնչանով:

Յերբ մեքենայական հեռազերի թվատախտակի վրայի ալաքը նետվեց «միջինի» վրա, Դերգաչովը պատրաստվեց վախտան հանձնելու: Ծառայության ընթացքում նա դաստիարակել և պատրաստել ե արժեքավոր շատ մասնագետներ: Կանգ չառնելով ձեռք բերածի վրա, մարդիկ աճում ելին աչքի առաջ:

Վախտայից հետո ընկ. Դերգաչովն անցավ իր ազատ ժամերի սովորական զբաղմունքին՝ ընթերցանությանը: Գրքերից նա անբաժանելի յէ: Նրան հետաքրքրում է վոչ միայն մասնագիտական, տեխնիկական այլ գեղարվեստական և հաւակագես ծովային պատմական զբականությունը: Նա պատմում է մարտիկներին շատ հետաքրքրական դեպքեր պահնձալի նավի հերոսական մարտական անցյալից, «Աբայոմ» ականակրի քաղաքացիական պատերազմին մասնակցելու մասին:

Այն որերին Բալինիկ ծովի վրա տեղի ելին ունենում խական մարտական ոպերացիաներ խական հակառակորդի գեմ: Կարմիր Նավասորմն այն ժամանակ ուներ ամենասահմանափակ քանակությամբ վիմպելներ: Լիովիտ թշնամին մտնում եր մեր տերիտորիալ ջրերը, կիզ մոտկից գնդակոծելով լորհրդային ափերը: Ականակիրն այն ժամանակ կրում եր մի ուրիշ՝ «Ազարդ» անունը:

Նա հաճախ դուրս եր գալիս ծովը հետախուզության, հարձակումներ եր կատարում վերմանական ոկուլանուների բաղաների վրա, ականափակոցներ եր զնում: Նրու ականակիրի վրա պայմանական հեռազերի տակած անդամությունը:

Դերգաչը զարգանում ելին անզուսպ, ահոելի ուժով: Քաղաքացիական պատերազմի ավելի ու ալելի լայն եր ծավալում: Հյուսիսից ու հարավից, ծովից ու ցամաքից հարձակվում ելին ինտերվենտները:

1918 թվի ողոստոսի 14-ին յերկու ականային խափա-

նիշներ, վորանց ուղեկցում ելին «Ազարդ» և «Միկուֆաս-
թակլայ» ականակիրները, ականներ ելին գնում Բալթյան
ռազմաքանչեմի ռայոններից մեկում։ Պահպանության նավերը
շարժվում ելին խափանիչների մոտերքում փոփոխական
կուրսերով։ Մարտական կամբջակից նշանաբարներն ուշա-
դրությամբ զննում ելին ջրային մակերևութը։

Ամեն մի բոպե կարելի յեր սպասել թշնամու սուզա-
նավերի յերեան գալը և նրանց տորպեդային դրոհը։

Հանկարծ «Ազարդ» վրա խափանվեց զեկային մեքե-
նան, և նա հարկադրված եր կանգնեցնել շարժումը։ Յե-
րեք մղոն հեռավորության վրա յերեւմ եր ֆինլանդական
ափը։ Հենց վոր նավը կանդ առավ, ափում քողարկված
մարտկոցը կրակ բաց արեց նրա վրա։

Արկերն ընկնում ելին հենց բորտի մոտ։ Հարկ յեղավ
դնդակոծի տակից դուրս գալ յետեկի ընթացքով, մանյով-
րելով մեքենաների միջոցով։

Մյուս անգամ «Ազարդ» մառախուղի ժամանակ հան-
դիպեց թշնամու ութ ականակրի։ Նավը հարկադրված եր
կարուկ կերպով դարձում կատարել դեպի մի կողմը հա-
կառակորդից հեռանալու համար, խուսափելով անհագու-
սար մարտից։ Բայց թշնամին, զիտակցելով իր թվական
գերազանցությունը, աննահանջորեն հեռազնդում եր։
Խմբակների բաժանվելով, հակառակորդի նավերը, լրիվ
արտգությամբ շարժվելով, փորձում ելին կտրել կարմիր
ականակրի կուրոը։ Յերբ հեռավորությունը փոքրացավ,
հակառակորդն անցավ ծածկույթներով հրետանային հրա-
ձության։ Բավական եր մեկ ծածկում ունենալ, փոր-
պեսզի սպերացիան վերջանար ականակրի կործանումով։

Բայց ամենավտանգավոր դրությունների ժամանակ,
«Ազարդ» խիզախ նավակազմը ցուցարեց տոկունություն,
արիություն և ճարպկություն, չփոթեցնելով հակառակոր-
դի հրանոթային նշանառությունը հմտորեն մանյովրեր-
միջոցով։ Այն դեպքերում, յերբ թշնամին անդրանցում եր
թույլ տալիս, ականակիրն իոկույն սլանում եր այնտեղ,
զորտեղ տեղի յե ունեցել արկի դիպումը։ Դրա հետեան-

քով հետեւյալ համազարկը, վոր տրվում եր առանց ձրչո-
ման այդպիսի մանյուլրի վերաբերմաժը, նույնպես նպա-
տակին չեր հասնում։ Այդպես ել դուրս յեկալ «Ազարդ»
զնդակոծի տակից առանց վորեե վնասվածքի։

Յեկալ 1919 թ. դարունը։

Մարտերը տեղի ելին ունենում գրեթե ամեն որ և
հատկապես հաճախ գիշեր ժամանակ։ «Ազարդն» առաջա-
դրություն ստացաւ՝ դուրս գալ կոպորյան ծովածոցը,
իրկել թշնամու ականակիրները, վորոնք ամբակոծում ե-
լին առափնյա վայրում դասավորված կարմիր Բանակի
դրամասերին։

Ամառվա արևոտ որ եր։ Ծովը միմիայն թեթև ալե-
ծածանվում եր։ Մակերեւութի վրա հաճախ ալեկոծու-
թյուն եր բարձրանում թշնամու սուզանավերից, վորոնք
հետապնդում ելին մեր ականակիրը։ Նայն առաջ եր շարժ-
վում լրիվ արագությամբ, յերբեմն կտրուկ կերպով դեպի
մի կողմը դառնալով թշնամու տորպեդոների հետքերից։
Սուզանավերը հաճախակի դարձրին տորպեդային գրոհները։

Անսպասելի կերպով հորիզոնի վրա յերեան յեկան մեկ
եստոնական և յերկու անդիխական եսխաղը ականա-
կիրներ։ Յերեք մղոնից վոչ ավելի անցնելուց հետո «Ազար-
դ» վրա դրոհ տվեց սուզանավը։ Յերկու տորպեդոների
հետքեր հայտաբերելով, ականակիրն արագ կերպով դար-
ձում կատարեց։ Աջ կողմից քիթի ուղղությամբ նշանաբար-
ները նկատեցին սկզբում ալեկոծություն ջրի յերեսը բարձ-
րացող սուզանավից, հետո յերեացին պերիսկոպը, Փորշ-
տեղենը և մարտական մենախցիկի մի մասը։

Ակնթարթաբար «Ազարդ» կրակ բաց արեց և նեա-
վեց ուղիղ սուզանավի վրա տարանային (բարանային)
հարված հացնելու համար։

Քիթի հրանոթից սուզգող արկով հենց առաջին ձիգն
ուղղակի հարվածեց մենախցիկին։ Սուզանավի վրա ուժեղ
պայթում տեղի ունեցավ, յերեաց բոցի և սև ծխի մի
սյուն։ Նույն մոմենտին կարմիր ականակիրը լրիվ արա-
գությամբ սլացավ պայթման տեղով, իրվելով իր սուր

Փողը շեմով ջրի միջից բարձրացած հսկայական ջրային փուչեկի մեջ։ Նայած լոլոր չատկանիշներին, հակառակորդ դի սուզանավին վերջ եր արվել։

Բայց թշնամու եսկաղաքյին ականակիրների կողմից վտանգն ել ավելի ուժեղացավ։ Յերևան յեկավ անուիսկան մարտական նավերի մի նոր խմբակ, չորս ականակիրներից բաղկացած, վորոնք շարժվում ելին ճանապարհը կորող կուրսով։

Երջապատման ողոկը նեղանում եր։ «Աղարդը» կրակ բաց արեց։ Շարժվելով փոփոխական կուրսով, ականակիրը դիմուկ կրակով հարկադրեց թշնամուն դառնալ գեղի արեմուտք և ավելացնել ճեռակայությունը։ Թշնամու ականակիրների վրա հրդեհներ սկսեցին հրետանային արկերի դիպումներից, վորոշ շփոթություն մտցնելով թշնամու նավերի սյան մեջ։

Շատ չնչին վնասվածքներով «Աղարդին» շուտով հաջողվեց զուրս գալ ողակից դեպի իր դիրքերը, տուախյամարտկոցների և ականային դաշտերի պաշտպանության տակ։

Շուտով՝ հայնի դարձավ, վոր ականակիրի կողմից խորտակված սուզանավը պատկանում եր անողիական նավատորմին «Լ-55» անվան տակ։ Հետուկայում այդ նավը բարձրացրեց Եպրոնը (հատուկ նշանակման ստորջրյա աշխատանքների եքսպերտիցիան), և չիմա նա նույն անվան տակ նավարկում է կարմրադրոշ Բալթյան նավատորմի կաղմում։

Այդ ժամանակվանից 18 տարի յե անցել։

Տեղի յեն ունենում կարմրագործ Բալթիկայի աշնանային տակտիկական ուսուցումները։

Դանդաղեցնելով ընթացքը, «Արտյոմը» 45⁰ դարձում կատարեց և դնաց հանդիպական կուրսով «Ոկտյաբրուկայա թեգուցուցիա» Փլազմանական նավի հանդեպ, վորը դնում էր Պաշտպանության ֆողկոմի դրոշակի տակ։

Սիրելի ժողկոմ ընկեր Վորոշիլովի անունը, վորը շրջապատված է առասպելական հոչակով, հրամանատար-

ների և կարմիր նավատօրմայինների մարտական լարվածությանը և ջերմ հուղվածությանը, հատուկ ուժ եր առաջ եր շարժվում ահեղ, լրասեր լողացող ամրոցի պես։ Տաղնապներ եյին լինում ցերեկվա և գիշերվա ամենաբազմազան ժամերին, բայց գծանավի մարդկանց յերբեք չեր կարելի հանկարծակի բերել։

Վարժամարտական ոպերացիաների լարված պարագայում նավի վրա, իր ուժերի նկատմամբ, հանդիսավոտահություն եր տիրում։ Բոլոր հրամանները տրվում ելին պարզող կերպով, առանց իրարանցքման և ջղայնության։ Բայց զրանք կատարվում եյին որևնթացորեն և ակտումատիկ ճշությամբ։ Մեծ պատասխանատու դրսում մարդիկ ցուցաբերում եյին համարձակություն, խիզախություն, հմտություն և վարպետություն։ Նրանցից շատերն աչքի եյին ընկնում կամքի հիանալի հատկություններով, տեխնիկական բարձր պատրաստություններով, իրենց մասնագիտության անբասիր իմացությամբ։

Գծանավի մարտական մասի հրամանատար, շքանշանակիր կոմունիստ Լարսուդինը, վորն անձամբ զեկավարում էր ամենաբարդ հրետանալին հրածգությունները, գերազանց ցուցանիշների համար պարզեատրվել և անվանական վորկե ժամացույցով։ Տասներկու տարի առաջ նա իրմիթվար է յեղել Կալինինյան մարդի դրույցերից մեկում։

Յերիտասարդ հրետավոր լեյտենանտ Կուբատան, կրակերով վերջնակետ հեռակայությունից, նպատակը ծածկեց հենց առաջին համազարկով։

Ուսուցման ընթացքում ողային «Հակառակորդին» հետ մղելու ժամանակ աչքի ընկան հրանոթների և զենիթային թիզմանոթների սպասարկող կազմը։ Կրակը դեկավարում էր հրամանատար Սուչեցկինը։

Դրանք բոլորն եւ յերիտասարդները են, վորոնք շատ մոտ անցյալում աշխատելիս են յեղել յերկը Փարբիկաներում, զործարաններում և կոլտնաւություններում։

Աւղեպահապանի վորոլի Յախնենկոն այժմ հրանոթային աշտարակի հրամանատարն և և Լենինգրադի Խորհրդի անդամը:

Զարմանալի յէ մարտական մասի հրամանատար Կոռուլյովի կենսադրությունը: Նա նավատորմ և յեկել արածին կոմյերթական հավաքագրման համաձայն, կրթություն ունենալով դյուղական դպրոցի ծավալով: Ծառայությունից առաջ նա աշխատել ե վորագետ փականագործ ջրային տրանսպորտում: Նրա մշտական ձգտումը յեզել և սովորելու ցանկությունը: Նա սկսել ե ծառայությունը չարքային կարմիր նավատորմային ականաձիրից և հիմա պատ ինժեներ-մեխանիկ ե:

Ընդարձակ մեքենայական դահլիճում, այնտեղ, վորտեղ կան տասնյակ թվատախտակներ, չափողական անոթների ապակու հետեւմ տատանվող հարյուրավոր սլաքներ, հաշվիչներ՝ փողակների միջի հեղուկների փոփոխական մակարդակով, աղմկալի կաթսայանոցում, վորտեղ վենտիլատորների և Փորսունկաների վոռնոցն ու սուլոցը խլացնում են մարդու ձայնը, և բազմաթիվ զանազան աղդանշանային ցուցիչներ, դաշտավող խողովակները ու պոմպեր, — Կորուլյովին իրեն վստահ ու հանդիսան եր զգում, ինչպես ասիստենտը վաղուց ծանոթ գիտական լաբորատորիայում: Նրա դեկավարության տակ հզոր նավի համար ասպահովում և ընթացքի արագությունը, մանյովի շարժունակությունը, անծխությունը, բոլոր մեխանիզմների անխափան դորձողությունն ամեն տեսակի ամենաբարդ պայմաններում:

Ընդամենը տասնմեկ տարի առաջ գծանավը, վորը փոխել ե «Գանդուա» անունը և կրում է Հոկտեմբերյան Սոցիալիստական հեղափոխության մեծ անունը, խստորեն պահպանելով մարտական վիմպելի բարձրացման սահմանված ցերեմոնիալը (հանդիսակարգը), առաջին արշավի դուրս յեկավ: Դրանից առաջ յերկար ժամանակ նա զտնը-դում եր յերկարատես պահպանման մեջ:

1918 թ. մարտի 12-ին նավատորմի մյուս 200 նախերի թվում զծանավը թողեց Հելսինգֆորսի բազան և մեկնեց:

Հոչակավոր սառցային արշավի, շարժվելով կերպատերի պլասյին սյան մեջ, անմիջորեն սառցահատների հետեւց:

Արշավի վերջանալուց հետո, նավախմբի կազմից միքանի ջոկատներ կաղմակերպվեցին և ճակատ ուղարկվեցին: «Գանդուա» ծովագնացներին կարելի յեր հանդիպել վոլգա-կամայի և կատարիսկան նավատորմիկներում և շամաքային ֆրոնտներում:

Նրանք պատերազմում, կովում եյին կատաղի մարտերում անողոք թշնամու դեմ, անվեհերության և հերոսության հոչակ ստեղծելով: Նրանք գտնվում եյին այն կոմունիստավաստիների թվում, վորոնց մասին սահմանվել եր անսահման խիզախության և համարձակության ահեղ լեզենդան, նրանք գտնվում եյին այն նավաստիների շարքում, վորոնք մարտում յերբեք չեն նահանջում և արհամարհում են մահը:

Նրանց անսահման արիությունն ահի ու սարսափի մեջ եր գցում սպիտակ զորքերի ընտեր զորամասերը: Դենիկենի զինվորները, յերեսները խաչակնքելով և գունատվելով, պատմում եյին.

— Նավաստիները, նրանք, կարծես գեեր են: Մենք յերեքին տարանք կախելու: Մեկը՝ ինչպես պապիրոս եր ծխում, այսպես ել պապիրոսը ձեռքին պարանի ողակի մեջ մտալ: Մյուսին բարձրացրին, նա կախ ընկած, յերեակայեցեք, վոտները ցնցում եր, իսկ յերբորդը կանգնած ե և ծիծաղում ե. «Յերեկի՝ ասում ե, — նրան գուր չի գալիս ձեր կաղետական ճլորթին»:

Շատ բան ե փոխվել այս տարիների ընթացքում: Աճել ե Խորհրդային յերկրի անքակտելի հզորությունը, աճել ե նոր հասարակություն կառուցողների՝ բոլշեվիկյան կուսակցության դաստիարակած հիմալի սերունդը: Ամրացել ե աճել ե կարմիր նավատորմը:

Ութ տարի առաջ Սևծովյան նավատորմի «Զերգոնա Ուկրաինա» հածանավն այցելեց ժողովուրդների մեծ առաջնորդ ընկեր Ստալինը: Նրան ուղեկցում եյին ամենամատիկ զինակիցները՝ ընկեր Վորոշիլովը և Որջոնիկիձեն:

Այն ժամանակ եսկաղլրան պատրաստվում եր ուսուցումների և արշավի համար :

Սիրելի առաջնորդի ներկայությունն անձնակազմի համար իսկական տոն եր : Ընկեր Ստալինն ուշադրությամբ գիտում եր մարտական ուսուցման վողջ ընթացքը, յերկար ժամանակով բարեկամաբար զրուցում եր կարմիր նախատորմայինների հետ : Վարժական ոպերացիայի վերջանալուց հետո, նա չորրակալություն հայտնեց նավակազմին գերազանց, անձնվեր աշխատանքի համար՝ և հետո աչքի անցկացրեց կարմիր նավատորմային գեղարվեստական ինքնագործ յելույթների ծրագիրը :

Նավային գրքում ընկեր Ստալինը զրեց իւ տպավարությունները .

«Յեղա «Զերվ. Ռէկրաֆնա» հածանավի վրա : Ներկա եյլի ինքնագործ յերեկույթին : Ընդհանուր տպագորությունն ե՝ չիանալի մարդիկ են, համարձակ, կուլտուրական ընկերներ, վորոնք պատրաստ են ամենինչի, մեր ընդհանուր գործի համար : Հաճելի յե այդպիսի ընկերների հետ զործ ունենալ : Հաճելի յե պայքար մղել թշնամիների դեմ այդպիսի մարտիկների շարքերում : Այդպիսի ընկերների հետ կարելի յե հաղթել շահագործողների և կեղեքիչների ամրող աշխարհը : Հաջողություն եմ ցանկանում, բարեկամներ, «Զերվ. Ռէկրաֆնայից» :

Ի. ԱՏԱԼԻՆ :

«Ոկոյաբրսկայա Ռեվոլյուցիա» դժանավի մարտիկները պատվով կատարում են կոմունիստ-նավաստիների մարտական արագիցիաները : Մեծ սոցիալէստական հեղափոխության 20-ամյակի նշանակալից տարեղարձին, տոնելով իր 11-ամյա հոբելյանը, նախը նշում ե խոչոր հաջողություններ մարտական կատարելագործման և մարտական պատրաստության գործում : Այս տարիների ընթացքում նա աստղակիր-նավ և գարձել :

Գծանավի մարտական մասերն ու ծառայությունները գերազանց մարտական ու քաղաքական պատրաստության

համար նավատորմի հրամանատարության կողմից պարզեցարկել են Կարմիր Աստղի պատվոն նշաններով : Հրետանային, շտուրմանական մասերի, կազի և սանիտարական ծառայությունների պատվին Կարմիր Աստղի նշաններն ամրացված են առջևի և հետևի կամրջակների վրա, յերկրորդ խողովակի և լազարեթի գոների վրա : Գծանավին ինքնուրույն ընտրական տեղամաս և, ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունների վերաբերմամբ : Ընտրական հանձնաժողովի մեջ նավակազմն ընտրել ե նավի լավագույն հրամանատարներից և մարտիկներից լավագույն գավակներին : Դեկտեմբերի 12-ին զծանավի մարդիկ, բոլորը մեկի պես, կուղղվեն զեպի քվետուվելը և իրենց ձայները կտան մեծ խորհրդային ժողովրդի լավագույն գավակներին, Լենինի-Ստալինի կուսակցությանն անսահմանորեն նվիրվածներին, սերելի հայրենիքի բոցաշոնչ հայրենասերներին : Վողջ նավախումբը պատրաստվում ե այդ նշանակալից զեպքի համար, ինչպես մեծագույն տոնի համար ուրախալի հուղմունքով :

Մրցակցություն ե տեղի ունենում մարտական մասերի, ստորաբաժանումների միջև, մրցակցում են բաժանմունքը բաժանմունքի հետ, կարմիր նավատորմայինը կարմիր նավատորմայինի հետ : Դեկտեմբերի 12-ը կհանդիպեն մարտական պատրաստության նոր նավաճումներով : Շարժումը զեպի առաջ մեր մարդկանց բնափորության զլիսավոր առանձնահատկությունն ե : Կուսակցության կողմից գաստիրակված Դերզաչովի, Կորույովի, Լաբուդինի նման մարդիկ համբերատար կերպով և հաստատակամորեն սովորեցնում են նավաստիների յերիտասարդ կադրերը, մեծ հայրենիքի ըերմ հայրենասերներին :

... Մարտական ուսուցման պամարտից հետո, բազույին վերագանում զծանավիրը, ականակիրները, սուլանավիրը, գրանց հրամանատարներն եյին և նրանց վարուժելիքն կուսակցական և անկուսակցական բոլշևիկները : Հեռու կապույտ հեռավորությունում յերեսում են հարազատ ափերը, զորոնց վրա վոչ մի թշնամու վոտ դնել յերբեք թույլ չի արված :

«Մորской Сборник» № 11, 1937 թ.

ՄՈՏԻԿ ԱՆՑՅԱԼ

Հուլիսյան որերից հետո Վ. Ի. Լենինը զեկավաբում եր Հոկտեմբերյան դինված ապատամբության նախագամաքատությունը, գանվելով ընդհատակում։ Բալթյան նավատորմի նշանակությունն առաջիկա մարտերում նա զնահատում եր այսպէս։

«Թվում ե, թե միակ բանը, վորը մենք կարող ենք միանգամայն մեր ձեռքին ունենալ, և վորը լուրջ սարմական դեր է խաղում, դա Փինլանդական զորքերն են և Բալթյան նավատորմը... ամբողջ ուշադրությունը նվիրել Փինլանդական զորքերի նավատորմի ոազմական պատրաստությանը, կերենսկու առաջիկա տապալման համար»¹⁾։

Յեվ մի ուրիշ տեղում.

«Համակցել մեր յերեք գլխավոր ուժերը՝ նավատորմը, բանվորներին և զորամասերն այնպէս, վոր անպայմանորեն գրաված լինեն և ինչպիսի կորուսների գնով ել լինի պահած լինեն՝ ա) հետախոսը, բ) հետագրատումը, գ) յերկաթուղային կայարանները, դ) կամուրջներն առաջին հերթին։

Առանձնացնել ամենավճռական ելեմենտները (մեր հարվածայիններին և բանվորական յերիտասարդությունը, նույնպէս և լավագույն նավատափներին), վորքը ջոկատներ կազմել, նրանցով բոլոր կարեռագույն կետերի գրավման համար և նրանց մասնակցության համար ամեն տեղ, բոլոր կարեռագույն ոպերացիաներին, որինակ։

1) Լենին, հ. XXI եջ 229-230. (ռուս. հրատ.)։

Շրջապատել և կտրել Պիտերը, այն վերցնել նավատորմի, բանվորների և զորքի համակցված դրահով, — այսպէս ե իմունքը, վորը պահանջում է հրմտություն և յեռակի համարձակություն»¹⁾։

Հոկտեմբերյան մարտերին Պետրովսկադում աճմիջական մասնակցություն ելին ունենում Բալթյան նավատորմի նավերը։ Ռազմա-Հեղափոխական Կոմիտեյի հրամանով լույս նոյեմբերի 7-ի գիշերը Կրոնշտադտից Պետրովսկադ յեկան «Զարյա Սվորովի» գծանավը և «Ամուր» ականային խափանիչը։ Առաջինը դիրք գրավեց Մորսկոյ ջրանցքում, իր հղոր հեռահար հրետանիով Պետրովսկի մատուցները զնդակոծելու նպատակով, իսկ յերկրորդի վրա տեղավորվել եր մարտին մասնակցող բոլոր ծովային մասերի շտաբը։ «Ավրորա» հածանավը, վորն արդեն առաջուց եր գտնվում Պետրովսկադում, դիրք գրավեց Նիկոլայեվյան կամրջի մոտ (հիմա Լեյտենանտ Շմիդտի կամուրջը) և ոմբակոծեց Զմեռային պալատը, նրան զրոհելու ժամանակ։

Նոյեմբերի 7-ի առավոտը Կրոնշտադտից Պետրովսկադ յեկած մոտ 10.000 Կրոնշտադտի նավատափներ, վորոնք Կարմիր զվարդիայի և Պետրովսկի կայազորի հեղափոխական մասերի հետ միասին որվա ընթացքում գրավեցին կամուրջները և քաղաքի մյուս ամենակարեսը կետերը։ Նոյեմբերի 7-ի յերեկոյան հեղափոխական նավատափները, զինվորները և կարմիր զվարդիականները գրոհ տվեցին Զմեռային պալատի վրա և վերցրին այն։ Ժոմանակավոր կառավարությունը կառանավորվեց։ Իշխանությունն անցավ պլուեարիատի ձեռքը։

Բայց կերենսկուն հաջողվեց փախչել, և նա ակսեց քաշել Գրոնստից Պետրովսկադի դեմ հարկահեղափոխական կազմակին մասերը գեներալ Կրասնովի հրամանաւտարությամբ։ Ակստամբեցին նաև յունկերները Պետրովսկադում։ Բուրժուազիան հակահեղափոխական պատերազմ սկսեց Խորհրդային իշխանության դեմ։

Լենինն սկսեց յեռանդուն կերպով ուժեր կազմակերպել զլուխը բարձրացրած հականեղափոխության ջախջախման համար։ 1917 թ. նոյեմբերի 9-ին տեղի յէ ունենում վշագիմիք իւլիչի պատմական խոսակցությունն ուղիղ հեռադրամելով Հելսինգֆորսի հետ, Յենտրոբալթի ներկայացուցչի հետ։

— Քանի՞ ականակիր և այլ զինված նաև գուք կարող եք ուղարկել.

— Կարելի յէ ուղարկել «Ռեսպոբլիկա» գծանալը և յերկու ականակիր։

— Արգյոք նրանք ձեր կողմից նույն կերպ պարենով ել ապահոված կլինե՞ն։

— Նավասորմում մենք ուստի ունենք, և նրանք ապահովված կլինեն պարենով։ Բոլոր ուղարկված ականակիրները և «Ռեսպոբլիկա» գծանավը։ Վասահ կերպով կասեմ, վոր կկատարեն հեղափառության պաշտպանության իրենց դուծը։ Զինված ուժ ուղարկելու մասին մի՛ կասկածեք։ Կատարվի տառնց այլեւայլության։

— Քանի՞ ժամից հետո։

— Մաքսիմով 18 ժամից։ Անհրաժեշտություն կա՞ լոկոյն են առողջապահություն։

— Այս, կառավարությունը բացարձակապես համոզված ե, վոր անհրաժեշտ և անհապաղ ուղարկել, պարմանով, վոր գծանավը Մորսկոյ ջրանցքը մտնի, վորքան կարելի յէ ափին մոտ։

— Քանի վոր գծանավը խոչսր նաև ե, տասներկու դյույմանոց համանիսով, ուստի և ափի մոտ կանգնել չի կարող— այլուս նրան կարող են պարզաբեր մերկ՝ ձեռքերով զբավիչ իսկ այդ կատարելու համար կան ականակիրներ՝ մտնը Հրետանիով և զնդացիրներով, իսկ ինչ վերաբերում է գծանավին, ապա նա պիտք է կանգնի, մոտավորապես, ուելքում կամ «Ավրորա» հածանավի կողքին, վորովհետեւ նրա հրետանին կրակում և 25 վերսա հեռավորությամբ, — մի խոսքով այդ վործը կատարեն նավաստիները՝ հրամանատարական կազմի հետ ժիասին։

— Ականակիրները Նեվա պետք ե մտնեն Ռիբացկոյի

գյուղի մոտ, վարպեսզի պաշտպանեն Նիկոլայեվյան ձանապարհը և նրա բոլոր մատությունները։

— Էավ. այդ բոլոր կատարվի։ Ելի ի՞նչ կասեք։

— «Ռեսպոբլիկայի» վրա ուղիղ-հեռադիք կա՞ արդյոք և նա կարո՞ղ է արդյոք ճանապարհին յեղած ժամանակ հաղորդակցություն ունենալ Պիտերի հետ։

— Վոչ միայն «Ռեսպոբլիկայի» վրա; այլև ականակիրների վրա, վորոնք հաղորդակցություն են ունենում Ելյալյան աշտարակի հետ։ Մի խոսքով, վասահացնում ենք, վոր ամեն ինչ լավ կկատարվի։

— Այսպիսով՝ մենք կարո՞ղ ենք հուսալ, վոր բոլոր թված նավերն անհապաղ կը արժվին։

— Այս, կարող եք։ Իսկույն կանենք շատ կարդագրություններ, վորովեսի վերո՞շշալ նավերը ժամկետին լինեն Պետրովգրադում։

— Դուք ունե՞ք հրացանների պաշար ժամվառությունով։ Ուղարկեցեք, վորքան կարելի յէ շատ։

— Կա, բայց վորք քանակով նավերի վրա, — ինչքան կա, կույտակենք։

— Ցանություն։ Բարեներ։

— Ցանություն։ Արդյոք դո՞ւք եյիք խոսում։ Ասեք ձեր ուսուցիչը։

— Լենին։

— Ցանություն։ Անցնում ենք կատարման¹)։

Հելսինգֆորսից ուղարկված յերեք ականակիրները Նեվա մտան Ռիբացկոյ գյուղի մոտ, ինչպես մատնանշել երկ վ. ի. Լենինը, իսկ «Ռլեղ» հածանավը տեղ զրավեց Մորսկոյ ջրանցքում։

Նավաստիների ջոկատները կարմիր գլարդիայի ջոկատի և հեղափոխական զինվորների հետ միասին մեկնեցին Գատչինայի ռայոնը կերենսկու-կրասնովիլի զորքերի ղեմ։ Յերեք որպավ ընթացքում հականեղափոխական զորամասերը ջախջախվեցին, իսկ կրասնովը զերի վերցվեց։ Փախչել հաջողվեց միմիայն կերենսկուն։

1) Լենին, և. XXII, էջ 35-36։

Նավատորմը Գերմանիայի ի Եսերվենցիայի ժամանակ

Զգտելով Մեծ պրոլետարական հեղափոխությունը խեղեցրու, Խորհրդային յերկրի վրա առաջինը հարձակվեցին գերմանական իմպերիալիստները:

Այդ ժանր ժամանակաշրջան եր Խորհրդային յերկրի Համար:

Վ. Ի. Լենինը գրում եր.

«Մեր ապրած շաբաթը ոռւսական հեղափոխությունը բարձրացրեց համաշխարհային-պատմական դարպացման անչափ ավելի բարձր աստիճանի: Այս որերի ընթացքում պատմությունը միանդամից առաջ զնաց մի քանի աստիճան դեպի վեր:

Մինչև այժմ մեր առաջ կանգնած էին չնչին, արդահատելի-խզառուկ (համաշխարհային իմպերիալիզմի տեսակետից) թշնամիներ՝ ինչ-վոր ապուշ Ռումանով, պարծենկոտ Կերենսկի, յունկերների և բուրժույցիկների բանդաներ: Այժմ մեր դեմ յելակ կուլտուրական, տեխնիկակես առաջնակարգ ձևով սարքավորված կազմակերպորեն հիմնալի կարգի բերված համաշխարհային իմպերիալիզմի հսկան: Նրա դեմ հարկավոր ե կովել: Նրա դեմ պետք ե զիտենալ կովել: Յեռամյա պատերազմից չլաված ավերի հասցված գյուղացիական յերկրը, վորն սկսել ե սոցիալիստական հեղափոխությունը, ուստի առաջական գոտեմարտից պետք ե խուսափել՝ քանի դեռ կարելի յե զրանից խուսափել՝ թեկուզ ամենածանր զոհերի գնով—հատկապես նրա համար, վոր հնարավորություն ունենա մի լուրջ բան անելու մինչև այն մոմենտը, յերբ կրոնկի «լերջին վճռական մարտը»¹⁾:

Գերմանական զորքերը զբավեցին նախկին Լիֆլանդիայի, Եստլանդիայի և այլ տերիտորիաները: Բալթյան նա-

վատուրմն այն ժամանակ բաղավորված եր գլխավորագետ Հելսինդիական Փորսում և Ռեվելում: Գերմանացիների կողմից Ռեվելի գրավման որը, 1918 թ. փետրվարի 25-ին, Ռեվելի նավասարիները պայթեցրին բռլոր ծովային առավնյա մարտ կացները, իսկ Ռեվելում գտնվող նավերը սառցահատների ողնությամբ դուրս բերին Հելսինդիական: Մարտի 3-ին, արոցկիստների ու բուխարինականների դավաճանական գըծի ջախջախման չնորհիվ, ստորագրվեց Բրեստի հաշտությունը: Բայց Հելսինդիական նավատորմը չեր կարող մնալ, վորովհետեւ գերմանացիներն ոկուպացիայի ելին յենթարկել Ֆինլանդիան: Բրեստի հաշտության պայմանադրի համաձայն, մենք իրավունք ունեյինք թողնել մեր նավատորմը զինաթափակած վիճակում Ֆինլանդիայի նավահանդիստներում մինչև գարունը, բայց մեծ վասնդ կար, վոր Ֆինլանդիայի գրավման հետ միասին գերմանացիները կարավեն նաև մեր նավատորմը, վորովհետեւ այն ժամանակաշրջանում մենք բավականին ուեալ ուժ չունեյինք, վորը կարողանար հարկադրել գերմանական իմպերիալիստներին կատարելու իրենց վրա վերցրած պարտավորությունները: Ուստի, պետք եր անհապաղ, ձմեռը, նավերը փոխադրել Հելսինդիականից Կրոնշտադտ, վորը միակ խորհրդային նավահանդիստն եր Բալթիկ ծովում:

Սացային արշավը Բալթյան նավատորմը կատարեց բացառիկ գժվար պայմաններում: Նախ Ֆիննական ծոյը ծածկված եր սառուցի անընդհատ հաստ շերտով, վորք միջով պետք եր անցկացնել վոչ միայն ուժեղ զծանալերն ու հածանալերը, այլև ականակիրները, սուզանալերը և այլ նավերը, վորոնք համեմատաբար թույլ կորպուս (իւրան) ունեն: Արշավի սառուցական կովել հարկ յեղակ Ֆինլանդիայում տեղի ունեցած դաժան քաղաքացիութեան պատերազմի պայմաններում: Ֆիննական բուրժուազիան փորձում եր արգելակել նավատորմի գուրս գալլ մինչև գերմանացիների գալութը, վորպեսզի նրանց ողնությամբ գավթի այն: Փորձեր եյին արվում սառցահատները գրավելու, իսկ առանց զբանց կարմիր նավատորմը չեր կարող

1) Լենին, 4. ԱՀԱ, 42 օդ:

արշավը կատարել։ Թշնամական տարբերը խուճապ ելլու գցում նավաստիների մեջ, վախեցնելով նավերի անխուսափելի կործանումով սառուցյների մեջ, պատմության համար այդ անորինակ սառցային արշավում, տարածում ելլին պրովակացիոն թուղթիներ, զրամ խոստանալով բաղայում նավերի ուշացման համար։ Մեծ դժվարություններ ելին ստեղծվում նաև նրանով, վոր նավերում նավախմբի լրիվ կազմ չկար, վորովհետեւ շատ հաջարավոր նավաստիներ գնացել ելին ցամաքային Փրոնտը։

Բալթյան նավատորմի բոլշևիկյան կուսակցական կադմակերպությունը, վորը ղեկավարում եր մեր կուսակցության կենտրոնական կոմիտեն լենինի և Ստալինի գլխավորությամբ, կարողացավ հաղթահարել բոլոր դժվարությունները։ Սառցահատները պահպանելու համար հատուկ միջոցներ ելին ձեռք առնվել։ Բալթյան նավատորմի բոլշևիկները կարողացան ներդրավել նավատորմի նավաստիների մասսաներին և մասնագետ հրամանատարների լավագույն մասը՝ ծանր և վտանգավոր արշավին։

Անձնվեր, ցերեկ ու գիշեր անհերթափոխ աշխատանքի չնորհիվ, կյանքի համար մեծ վտանգի պայմաններում, Բալթյան նավատորմի նավաստիները 1918 թվի մարտ և ապրիլ ամիսների ընթացքում Հելսինգֆորսից Կրոնշտադտ փոխազդեցին մոտ 200 նավ։ Ֆիննական սպիտակ գվարդիականներին հաջողվեց դրավել միմիայն յերկու սառցահատ։

1918 թ. ամառը, յերբ վտանգ առաջացավ, վոր ղերմանացիները կարող են փորձել Պետրովգրադը գրավել իրենց նավատորմի ոգնությամբ, Վ. Ի. Լենինը, ոգոսութիւնի հետագույն, հրամայեց կարմիր Բալթյան նավատորմին ականափակողներ դնել։ Ոգոսութիւն 10—14-ի ընթացքում կարմիր Բալթյան նավատորմի նավերը 1435 ականից բաղկացած ականափակոց դրին։

Արտաքին Գործերի Ժողովրդական կոմիսարն ոգոսութիւնի 13-ին հայտարարեց $60^{\circ}12'$ և $59^{\circ}57'$ դրւգահեռությանն ըստ և Գրինվիչից ղեղի արևելք (սատ) $20^{\circ}30'$ միջորե-

ականով սահմանափակված ույսոնն ականներով փակված, վորը ցուց տվեց զերմանական իմպերիալիստներին, վոր կարմիր Բալթյան նավատորմն ընդունակ է վակել նրանց համար Պետրովգրադի՝ Մեծ Սոցիալիստական հեղափոխության որբանի ճանապարհը։

Բացի այդ, կարմիր Բալթյան նավատորմի նավերը 1918 թ. ամառը նավարկում ելին լաղողայի լծում, Ֆինլանդիայի կողմից ղերմանական և սպիտակ Փիննական զորամասերի և Մուրմանսկի կողմից Անտանտայի զորքերի հնարավոր հարձակման ճանապարհը վակելու նպատակով։ 1918 թի հունիսից սկսվեց հատուկ լծային նավատորմիկի՝ Ոնեղայի սաղմական նավատորմիկի կազմակերպումը, Ոնեղայի և Լաղողայի լծերում զործողությունների համար, վորը մեծ դեր է խաղացել Պետրովգրադի պաշտպանության զործում։

Սևծովյան նավատորմն այդ ժամանակաշրջանում ել ավելի ծանր պայմանների մեջ եր գտնվում։ Գերմանական իմպերիալիզմը շարունակում եր գրաված պահել Ռւեկրաինան նավատորմը ստորագրությունը ստորագրելուց հետո, վորովհետեւ հականեղափական ուկայինական ուղղան հրավիրում եր ղերմանական զորքերը հեղափոխական բանվորների և դյուցացիների դեմ պայքարելու համար։ Կարմիր զվարդիայի և Սևծովյան նավատորմի նավաստիների ջոկատների դիմադրությունը կոտրելով, ղերմանացիները զրավութիւնից առաջ, 1918 թ. ապրիլի 29 և 30-ին Սևծովյան նավատորմը Սևծամուպուլից անցավ Նովոռոսսիյուն։ Նավատորմը նոր բազան վոխադրել հաջողվեց միմիայն բոլշևիկյան կուսկազմակերպության բացառիկ յեռանձնուն զործունեյության չորհիվ, վորովհետեւ այն որերին անձնակազմի մեջ քայլացի չափանիք եր տարվում հականեղափական ուկրաինական ուղղայի եմիսարների, նույնական և եսերների և մենչեկների կողմից։ Այն բանի համար, վոր Սևծովյան նավատորմի նավաստիները կարմիր զվարդիայի հետ միասին կովում ելին ղերմա-

նական զորքերի դեմ, գերմանացիներն ուլումատիվ կերպելով պահանջեցին, վոր նավատորմը վերադառնա Սեպաստովով:

Այդ պահանջի կատարումը հավասարացր կլիներ նավերի հօժարակամ հանձնմանն ինտերվենտներին: Ուստի Խորհրդային կառավարության վորոշման համաձայն, հունիսի 18-ին՝ Նովորոսսիլյանի մոտ ջրառույղ արվեցին մեկ դրեզնուա, ութ ականակիր և Տուապսեյի մոտ ևս մեկ ականակիր:

Նավատորմի խորասուլումից հետո, հեղափոխական նավատորմերի մի մասը, 300 մարդ, տեղավորվելով յերկաթուղային տաճալների, մոտորավոր կատերների վրա, ուղարկվեցին Փրոնտ, գեպի Վոլգա, Յարիցինի մոտ, վորի պաշտպանությունն անձամբ գեկավարում ելին ընկերներ Ստալինը և Վորոշիլովը: Մոտ 2000 մարդ, իրենց հետ վերցնելով նավերից հանած հրետանին, ուղիոն և այլ արժեքավոր ու մասնագիտական գույք, յեկան Մուկվա, իսկ այնտեղից ուղարկվեցին Գրոնտի զանազան տեղամասները, հակահեղափոխական զորքերի դեմ:

Կարմիր նավատորմը Պետրոգրադի պատշաճության քննացքում

Խորհրդային Միության մարչալ ընկեր Վորոշիլովը, «Ստալինը և կարմիր բանակը» իր աշխատության մեջ բնութագրում ե ընկեր Ստալինի դերը Պետրոգրադի պաշտպանության գործում հետևյալ կերպ.

«1919 թվի գարնանը զեներալ Յուդենիչի սպիտակ գվարդիական բանակը, կատարելով Կոլչակի կողմից գըրված խնդիրը՝ «տիրանալ Պետրոգրադին» և իրեն վրա գրավել հեղափոխական զորքերը արևելյան ճակատից, ըստիտակ եստոնների, սպիտակ ֆինների և անդիական նավատորմի ոգնությամբ, անցավ անսպասելի հարձակման և Պետրոգրադին ուեալ սպառնալիք ստեղծեց: Դրության Մջությունը կրկնապատկվում եր նաև նրանով, վոր Պետ-

րոգրադի իրեն մեջ հայտաբերվել ելին հակահեղափոխական դավադրություններ, վորոնց զեկավարները՝ արևմտյան Փրոնտի շտաբում, VII բանակում և կրոնշտադտի ծովային բազայում ծառայող զինվորական մասնագետներն ելին: Պետրոգրադի վրա Յուդենիչի հարձակմանը զուգընթացաբար, Բուլակ-Բայախովիչը մի շարք հաջողություններ ձեռք բերեց Պակովի ուղղությամբ: Ֆրոնտում գավաճանություններ սկսվեցին: Մեր գնդերից մի քանիսն անցան հակառակորդի կողմը: «Կրասնայա գորկա» և «Սերյայ լոշադ» ֆորտերի վողջ կայտորը բացահայտորեն դուրս յեկավ խորհրդային իշխանության դեմ: Շփոթվածությունը տիրեց վողջ VII բանակին, Փրոնտը ցնցվեց, թշնամին մոտենում եր Պետրոգրադին: Հարկավոր եր անհամար փրկել զրությունը:

Կենտրոնական կոմիտեն այդ նպատակի համար նորից ե ընտրում ընկեր Ստալինին: Յերեք չարաթվալ ընթացքում ընկեր Ստալինին հաջողվեց բեկում ստեղծել: Զորածաւերի թափիթվածությունը և շփոթվածությունն արագ յենթարկվում ե լիկվիդացիայի, շտաբներն զգաստանում են, մեկը մյուսի հետեւց Պիտերի բանվորների և կոմունիստների մորիլիկացիաներ են կատարվում, անինա վոչնչացվում են թշնամիներն ու դաշտաճանները: Ընկեր Ստալինը խառնվում է ուղղմական հրամանատարության ոպերատորի աշխատանքներին: Ահա թե ինչ ե նա հետաքրում ընկեր Լենինին.

«Կրասնայա գորկայից» անմիջապես հետո լիկվիդացիայի յենթարկվեց «Սերյայ լոշադը», նրանց վրայի հրանթները միանգամայն սարքին են, տեղի յե ունենում բոլոր Փորտերի և ամրոցների արագ... (անընթեռնելի յե): Ծովային մասնագետները հավաստիացնում են, վոր «Կրասնայա գորկայի» գրավումը ծովից տապալում ե վողջ ծովային գիտությունը: Ինձ մնում ե միմիայն վողբալ այսպես կոչված գիտությունը: «Գորկայի» արագ գրավումը բացատրվում ե իմ և առհասարակ քարաքացիականների կողմից ուղերատիվ զործերի մեջ ամենակույթ միջամտու-

թյամբ, վոր հասնում և ծովի և ցամաքի վրա տված հրամանների վերացմանը և իմ սեփական հրամանների տուղարժումը: Իմ պարտքն եմ համարում հայտարարել, վոր յես նաև հետազայում պիտի գործեմ այսպես: Հնայած իմ վողջ ակնածությանը դիտության հանդեպ: Ստալին¹⁾:

Ընկեր Ստալինի զեկալարությամբ ՎԻ բանակի գորամասերն անցան հարձակման և սկսեցին ջարդութչուր անել Յուղենիչի բանակը:

Վերոհիշյալ զրքում ընկեր Վորոշլովը, բնորոշելով ընկեր Ստալինի հետազա գործունեյությունը, գրում է հետեւյալը:

«Վեց որից հետո ընկեր Ստալինը հազորդապրում և լենինին:

«Յեկումը մեր զորամասերում սկսվել է: Մեկ շաբաթվա ընթացքում մեզ մոտ մասնակի կամ խմբական փախուստի վոչ մի գեպք չի յեղել: Դասալիքները վերադասում են հապարներով: Փախուստները հակառակորդի լազերից մեր լազերը հաճախակի յեն դարձել: Մեկ շաբաթում մեզ մոտ են փախել 400 մարդ, մեծ մասը զենքով: Ենքել ցերեկն սկսվեց մեր հարձակումը: Թեև խոստացած զորավեցը դեռ չի բառացվել, նույն գծի վրա, զորտեղ մենք կանոն ենք առել, ավելի յերկար կանոնել չեր կարելի, չատ և մոտիկ Պիտերից: Դեռևս հարձակումը հաջողությամբ և ընթանում, սպիտակները փախչում են, մենք այսոր գրավել ենք Կերնովո—Վորոնինո—Սլեպինո—Կառկովո գիծը: Մենք վերցրել ենք գերիներ, յերկու կամ ավելի հրանոթներ, ավտոմատներ, փամփուշտներ: Թըշնամու նավերը յերեան չեն գալիս, յերեկի վախենում են «կրասնայա գորկայից», վորը հիմա միանգամայն մերն ե: Շատապ ուղարկեցեք 2 միլիոն փամփուշտ իմ տրամադրության տակ 6 գելիզիայի համար . . .»:

Այս յերկու հեռագիրը լրիվ պատկերացում են

1) Ա. Յե. Վորոշլով, «Ստալինը և Կարմիր Բանակը». Էջ 19-20:

տալիս այն հսկայական ստեղծագործական աշխատան- թյամբին, վորը կատարել և ընկեր Ստալինը, Ակ- վերացիայի յննիւթարկելով կարմիր Պիտերի մոռ ըս- տեղծված ամենավտանգավոր զրությունը¹⁾:

Ուղարոսի 5-ին ՎԻ բանակի մասերը վերցրին Յամ- բուրգը, իսկ ուղարոսի 26-ին վերցվեց նաև Պակովը: Հետեւապես, Յուղենիչի բանակը հետ քշվեց այն գիծը, վորտեղից նա մայլսին սկսել եր հարձակումը Պետրոգրա- դի վրա:

ՎԻ բանակի մասերի հարձակման ժամանակ Կարմիր Բալթյան նավատորմի նավերը, հատկապես սուլզանավերը, բարացառապես մեծ ակտիվություն ցուցաբերեցին, իսչե- ղութուելով անգլիական նավերին զնդակոծել մեր ցամաքա- յին գորքերի թեւը:

Ընկեր Ստալինը 1919 թ. ամառը հետեւյալ գնահատա- կանն ե ավել՝ Պետրոգրադի պաշտպանության գործում Կարմիր Բալթյան նավատորմի դերի մասին:

«Զեմ կարող մի քանի խոսք չասել նավատորմի մասին: Զի կարելի չվողջունել, վոր Բալթյան նավա- տորմը, վորը կործանված եր համարվում, վերածն- վում ե ամենաիրական ճեռվ: Այդ ընդունում են վոչ միայն բարեկամները, այլև հակառակորդները: Նույն ժամփ ուրախալի յե, վոր ուռւական ոֆիցերու- թյան խոցը—նրա վաճառելիությունը—ամենից քիչ և զի իսկել նավատորմի հրամանատարական կազմին. այ- նուամենայնիւ մարդիկ գտնվեցին, վորոնք, ի պատիկ նրանց, Ռուսաստանի արժանապատվությունը և ան- սրանց, Ռուսաստանի գնահատում են ավելի բարձր, քան կախությունը գնահատում են ավելի բարձր, քան անգլիական վոսկին: Ել ավելի ուրախալի յե, վոր Բալթյան նավատախները նորից գտան իրենց, կենդա- նացնելով իրենց սիրապործություններում ուռւական հեղափոխական նավատորմի լավագույն տրագիցիանե- րը: Առանց այդ պայմանների Պետրոգրադը ամենա-

1) Կ. Յե. Վորոշլով, «Ստալինը և Կարմիր Բանակը». Էջ 20-21:

վտանգավոր անակնկալալություններից պաշտպանված չեր լինի ծովի կողմից : Մեր նախատորմի վերածնության բնութափության համար ամենատիպիկն եւ հանդիսանում հռւնիս ամսին տեղի ունեցած մեր յերկու ականակիրների անհավասար մարտը հակառակորդի չորս ականակիրների և յերեք սուզանավերի դեմ, վորից մեր ականակիրները, չնորհիվ նախատիների անձնվիչության և դաշտող ջոկատի պետի հմուտ զեկով թշնամու սուզանավը¹⁾ :

Այս բարձր դնահատականը կարմիր Բալթյան Նախատորմն արդարացրեց նաև իր հետագա մարտական գործունեյության ընթացքում :

Կարմիր Նախատորմի նավերի՝ «Պետրոպավլովսկ» և «Անդրեյ Պերվոզվաննի» գծանավերի, «Թյուրիկ» հածանավի, սուզանավերի «Պամյատ Ազովա» բազայի խորտակման և չոր դոկի բառություն պայթեցման նպատակով, անդիմացիները 1919 թ. ոգոստոսի 18-ի դիշերը ձեւնարկեցին համակցված, տորպետային կատերների և ավիացիայի մասնակցությամբ, դրուհին՝ Կրոնշտադտի նավահանդպստի վրա :

Գրոհին մասնակցում եյին 8 տորպետային կատեր, բայց մեկը հենց սկզբից կառանվեց և հետ մնաց : Հինգ կատեր դալիս ելին Բիորկից և յերկուսը Տերիոկից : Ծովում կատերները միացան և միասին շարժվում ելին Կրոնշտադտի վրա, ըրջանցելով այն հյուսիսից : Գրոհը միանդաման անսալասելի յեր, ևս առավել, վոր տորպետային կատերներն այն ժամանակ կավի նոր միջոց ելին ծովի վրա : Սակայն, անդիմացիներին չհաջողվեց լուծել դրված խնդիրը : Պայթման յենթարկվեցին միմիայն «Անդրեյ Պերվոզվաննի» գծանավը և սուզանավերի «Պամյատ Ազովա» բառան :

Անդիմացիների պլանը խախտվեց «Պավրիլ» և կաղ-

բային ականակիրի հերոսական գործողությունների չնորդիվ, վարը պահատան եր կանգնած կրոնշտադտի փոքր ուելում : Դիմուլ հրետանային կրակով նա խորտակեց յերեք կատեր, դերի վերցնելով յերեք անդիմական ոֆիցիր և վեց շարքային նախատի :

Մեր «Պահատերա» սուզանավն սպասուսի 31-ին խորտակեց Սեսկար կղզու մոտ անդիմական «Victoria» և կաղըրային ականակիրը :

Սեպտեմբերի 4-ին Սեսկար կղզու ոայոնում ականավակոցի վրա խորտակվեց անդիմական «Verulam» և կաղըրային ականակիրը :

1919 թ. աշնանը, Անտանտայի յերկրորդ արշավի ժամանակ, յերբ հարավից Մոսկվայի վրա հարձակվում եր Դինիկինը, Յուղենիչի հյուսիս-արևեմտյան բանակն սկսել էր յերկրորդ հարձակումը Պետրոզրադի վրա : Ռւժերի փոխհարարերությունն այդ ժամանակ այսպես եր . Յուղենիչի մոտ— 18.500 սլին ու թուր և 57 հրանոթ . VII կարմիր Բանակն ուներ դրանց դեմ 25.650 սլին ու թուր և 148 հրանոթ, բայց VII բանակի ուժերը յերկայնաձգված եյին Ֆիննական ծոցից Պակովի ուղղությամբ մոտ 250 կմ տարածությամբ, մինչդեռ սպատակների ուժերը կենարունացված եյին ավելի նեղ Փրոնտում :

Յուղենիչի հարձակումն արագ եր զարդանում : Հոկտեմբերի 11-ին ընկապ Յամբուրդը : Սկսվեց դեսանտների ավանդումը Կովորյան ծոցում : Հոկտեմբերի 14-ին ափ զուրս յեկալ սպատակ եստոնական դեսանտը Պեյզինի և Կավիչի նավահատույցի մոտ : Հոկտեմբերի 16-ին՝ Դոլդի Նոր հրվանդանի մոտ : Սակայն, այդ դեսանտները, ինչպես և անդիմական ու եստոնական նավերի փորձը՝ մեր Փրոնտը գնդակոծելու՝ հաջողություն չունեցան, չնորհիվ «Կրասնայա գորկա» և «Սերայա լոշադ» Փորտերի և կարմիր Բալթյան նավատարմի նավերի յեռանդուն գործողությունների :

1) «Պատմութա», կ. Ո., 28 փետրվարի, 1935 թ.:

Հոկտեմբերի 16-ին ընկավ Կրասնոյե Սելոն, իսկ
Հոկտեմբերի 17-ին՝ Գատչինան:

Ինչպես հայտնի յէ, ընկեր Ստալինն այն ժամանակ
գտնվում էր հարավային Փրոնտում, վորն այդ ժամանա-
կում ամենալիավորն էր և ամենավտանգավորն
էլաշընում ամենալիավորն էր և ամենավտանգավորն
այն ժամանակավահամար: Բնկեր Ստալինի հանձարեղ պը-
լանով և նրա անմիջական զեկավարությամբ, Կարմիր
բանակն այն որերին ջախճախիչ հարվածներ էր հասցնում
Դենիկինի զորքերին:

Հոկտեմբերի 14-ին Վլադիմիր Իլյիչ Լենինը հատուկ
հեռագիր ուղարկեց Գետրոգրադի Խորհրդի Գործադիր Կո-
միտեյին Յուղենիչի հարձակման առթիվ, վորի մէջ
դրում եր.

«Պարզ է, վոր սպիտակների հարձակումը մա-
նյովք է, հարավում մեր ճնշումը թուլացնելու հա-
մար: Հետ մզեցեք թշնամուն: Հարված հասցը ք
Յամբուրգին և Գուովին: Անցկացրեք աշխատողների
մորիլիզացիան Փրոնտի համար: Վերացրեք բաժին-
ների ինը տասերորդը: Բոլոր ուժերի մորիլիզա-
ցիան Փրոնտի համար մեզ մոտ գեռ վոչ մէ տեղ չի
անցկացվել, թեպետ շատ է դրվել այդ մասին, կա
նակ կենտրոնական Կոմիտեյի վորոշումը, և շրջաբե-
րական նամակներ: Գետք է շտապեք նրանց վոնդել,
վորպեսզի դուք կարողանաք նորից ձեր ոգնությու-
նը հասցնել հարավին»¹⁾:

Իսկ յերեք որից հետո Վլագիմիր Իլյիչը գեմում ու-
ղարկեց Գետրոգրադի բանվորներին և Կարմիր բանակա-
յիններին.

«... Բնկերներ: Վորոշումը և Գետրոգրադի
բախտը: Թշնամին աշխատում է մեզ հանկարծակի
բերել: Նրա ուժերը թույլ են, նույնիսկ չնչին, նա
ուժեղ է արագությամբ, ոՓիցերների լկտությամբ».

1) Լենին, Յերկեր, չ. ԽХIV, էջ 486. (ռուս. հրատ.) :

և մատակարարման ու սպառապինման տեխնիկա-
յով: Պիտերին ուղարկվող ողնությունը ուժեղ
է, մենք չարժել ենք այն: Մենք շատ ավելի ուժեղ
ենք թշնամուց: Կովեցեք մինչև արյան վերջին կա-
թելը, մնկերներ, պահեցեք հողի յուրաքանչյուր
թիզը, կայուն յեղեք մինչև վերջը, հաղթությունը
հեռու չե': Հաղթությունը մերը կլինի»¹⁾:

Գետրոգրադում շտապ կերպով անց ելին կացվում
կուսակցական, պրոֆմիլութենական և կոմյերիստական մո-
րիլիզացիաներ: Կարմիր Բալթյան նավատորմն առանձնա-
ցըրեց 11009 ծովայիններ ցամաքային Փրոնտում կովելու
համար, վորոնք հերոսաբար մարտնչում ելին ցամաքային
դորամատերի հետ միասին:

Յուղենիչն իր հարձակման ընթացքում ամենամեծ ա-
ռաջշարժման հասավ Հոկտեմբերի 20-ին, յերբ մեր զորա-
մասերը նահանջեցին Պուլկովի բարձունքները:

Հոկտեմբերի 20 և 21-ին վճռական մարտեր ելին տեղի-
ունենում Պուլկովի բարձունքների վրա: Կարմիր Բալթյան
նավատորմի նավերն այդ որերին զնդակոծում ելին Յու-
ղենիչի ցամաքային Փրոնտը: «Գետրոպավլովսկ» գծանավը
կանգնած էր Պետրոգրադում, Գուտույեվսկի կղզու մոտ,
Հոկտեմբերի 20 և 21-ին զնդակոծում էր 3-հրանոթանոց
համազարկերով, 12th (304-մմ) հրանոթներով՝ Կրասնոյե-
Սելո-Պավլովսկ-Բոլոյյի Պիկկո սայոնը, իսկ հինգ ակա-
նակիր կանգնած ելին Մորսկոյ ջրանցքում և զնդակոծում
ելին Հոկտեմբերի 21-ին Անինո գյուղը:

Դեսանտների ափհանմանը և անդիմական նավերի գրն-
դակոծմանը իանդարելու նպատակով Հոկտեմբերի 20-ից
լույս 21-ի դիշերը նախաձեռնված էր խափանիչ ոսկերացիա-
կողորյան ծոցում: Ականափակոց դնելու համար դուրս ե-
յին յեկել 4 եսկաղըրային ականակիր՝ «Գավրիիլ», «Մվո-
րովա», «Կոնստանտին» և «Ազարդ»: Կոպորյան ծոցը գա-

1) Լենին, Յերկեր, չ. ԽХIV, էջ 488 (ռուս. հրատ.) :

շուն պես յերեք եսկաղըրային ականակիրներն ընկան հակառակորդի կողմից առաջուց դրած ականափակոցի մեջ։ Միմիւյն «Աղարդ» ականակրին, վորը զնում եր կիլվատերային ոյան վերջում, հաջողվեց հետընթաց դուրս գալ ականադաշտից և բազա վերադառնալ։

Հոկտեմբերի 27 և 30-ին անդիմական «Erebus» մոնիթորը գնդակոծում եր իր 15^o (381—մմ) հրետանիով «Կրասնայա գորկա» ֆորտը, այդ նպատակի համար Կոպորյան ծոցում թեային դիրք բոնելով «Կրասնայա գորկայի» նկատմամբ։ Բայց ֆորտը, վորը կոմպլեկտավորված եր կայտն անձնակազմով, պատասխանում եր իր խոշոր հեռահար հրանոթների դիպուկ կրակով, և «Erebus»-ը հարկադրված եր հեռանալ առանց վորեե հետեանքների։

Բեկումը ցամաքային ֆրոնտում սկսվեց արդեն հոկտեմբերի 21-ին։ Պետրոգրադի կողմից հարձակվում ելին VII բանակի զորամասերը, և հոկտեմբերի 21-ին նրանք վերցրին Թետուկոյե Սելոն և Պավլովսկը, իսկ նոյեմբերի 3-ին՝ Գրաչինան։ Միևնույն ժամանակ XV բանակի մասերը հարձակվեցին հակառակորդի թեի՝ Լուդայի, Գրովի և Յամբուրդի վրա։ Հոկտեմբերի 31-ին զրավվեց Լուգան, նոյեմբերի 7-ին՝ Գոսվը, իսկ նոյեմբերի 14-ին՝ Յամբուրդը։ Յուղենիչի բանակի մնացորդները թաղնվեցին Յոտոնիայում։

1919 թ. գեկտեմբերի 31-ին Խորհրդային Ռուսաստանն Յստոնիայի հետ զինազարար կնքեց, իսկ 1920 թ. փետրվարի 2-ին՝ խաղաղություն։ Այդ յեղակ խորհրդային յերկրի խաղաղության առաջին դաշինքը կապիտալիստական պետության հետ։

Պետրոգրադի հերոսական պաշտպանության համար Խորհուրդների V Համառուսաստանյան համագումարը հանձնեց Պետրոգրադի Խորհրդին կարմիր դրոշ՝ նրա վրա տմբացրած կարմիր Դրոշի շքանշանով։

Ինքնակալության և կապիտալիզմի դեմ բանվոր դասկարդի մղած հեղափոխական պայքարում կատարած

ծառայությունների և քաղաքացիական պատերազմում ցուցաբերած մարտական սիրազործությունների համար ԽՍՀՄ Կենտրոնական Գործադրիբ Կոմիտեն ԲԳԿԲ Խ տարեղարձին պարզեատրեց կարմիր Բալթյան Նավատորմը Կարմիր Դրոշի շքանշանով։

1925 թվին «Ենդ հարկավոր ե ուժեղ Բալթյան նավատորմ» հոգվածում Մ. Վ. Ֆրունզեն այսպես եր գնահատում կարմիր Բալթյան նավատորմի դերն ու նշանակությունը։

«Լենինգրադը հեղափոխության քաղաքն ե և նրա կենդանի պրոլետարական սիրութը։ Լենինգրադը մեր դիտության և տեխնիկայի միջնակետն ե, մեր արդյունաբերության կարևորագույն կենտրոնը, մի քանի տասնյակ դորձաբաններով ու ֆաբրիկաներով և մի քանի հարյուր հազարավոր բանվորներով։

Նրա կորուստը, թեկուղ ժամանակավորապես, ամենառւժեղ հարված կլինի բանվորա-գյուղացիական Հանրապետության համար, հարված կլինի նրա տնտեսությանը, նրա ծովերին և, վերջապես նրա պաշտպանությանը։ Մենք պետք ե վճռենք։ Լենինի բաղադր յերբեք, վոչ մի պայմանում և վոչ մենի կողմից չպետք ե գրաված լինի, քեկուզ ամենակարն ժամանակով։

Ո՞վ կարող ե և պետք ե կատարի Լենինգրադի պաշտպանության այդ պատվավոր խնդիրը։

Խորհրդային կարմիր Բալթյան նավատորմը։ Միմիւյն նա, հենվելով Հյուսիսի կարմիր մայրաքաղաքի տեխնիկական հզրության և հեղափոխական ենտուգիազմի վրա, ի վիճակի կլինի լուծել այն ամելի վճռականորեն, ճշգրիտ և խնայողաբար։

Ուստի մենք կառուցում ենք և կկառուցենք ուժեղ Բալթյան նավատորմ։ Դրա կորիզը մեզ մաս արդեն կա։ Մեր արշավային եսկադրան վատ սկիզբ չե։ Հանրապետությունը կիոզա, վորակեագի այդ սկիզբն ել ավելի լավ վերջ ունենա»։

Ստալինյան հնդկամյակների հաջող կատարման և դեռակատարման հետևանքով, մենք վերջին ժամանակներու կարմիր Նավաստրմի շինարարության գործում խոչոր նըղաձումներ ունենք: Խորհրդային Միության մարշալ, Պաշտպանության ֆողկոմ ընկեր Վորոշիլովը Համկ(բ) Կ XVII համազումարում 1934 թ. հունվարի 30-ին ուղարձովային ուժերի շինարարության վերաբերյալ ասաց հետեւյալը.

«Խորհրդային Միության պաշտպանունակության ամրապնդման հսկայական աշխատանքում, վորն անց եւ կացվում կուսակցության կենտրոնական Կոմիտեյի ղեկավարությամբ և ոգնությամբ, մենք չենք կարող սահմանափակվել միմիայն ցամքաքային ուժերով և ավիացիայով: Ընկեր Ստալինի մշտական ու անմիջական մասնակցությամբ ու ղեկավարությամբ մենք աշխատում ենք նաև մեր ուղղմածովային ուժերի ուժեղացման վրա, վորոնք շատ մեծ նշանակություն ունեն բազմահազար բաց ծովային սահմաններ ունեցող մեր յերկրի պաշտպանության համար: Ընկեր Սերգոս, մեր մեջ ասած, այդ գործում նույնպես բավականին բեռնավորում ունի: Վերջին տարիների ընթացքում մենք վոչ միայն ամրացրել և ուժեղացրել ենք Բալթիկ և Սև ծովերի ծովային ուժերը, բայց... վորոշ քանակությամբ նավեր ենք փոխադրել նոր ջրանցքով դեպի Հյուսիս, վորպեսզի անպաշտպան չլինենք նաև այդ ուղղամասում:

Բացի այդ, Պրիմորյեյի շրջանի վրա հարձակման անմիջական սպասնալիքը հարկադրել եւ մեղձենարկել ուղղմածովային ուժերի ստեղծմանը նաև Հեռավոր Արևելքում:

... Վերջացնելով մեր ծովային ուժերի մասին, յես դարձյալ հարկավոր եմ համարում նշել, վոր ընկեր Ստալինը ձեռնարկել եւ ինչպես հարկն եւ,

ստալինաբար (ծափակարություններ) նաև այդ տեղամասին, և յես չեմ կասկածում, վոր ինդուստրացման հաղթանակների բազայի վրա ամբացած նախաշինական արդյունաբերությունը մեղ կողմի մեր նավատորմերն արագ դարձնել խկական հզոր քանի վրա գյուղացիական նավատորմեր»:

Կարմիր Ռազմա-Ծովային նավատորմի հերոսներին չքանչաններ հանձնելիս, ԽՍՀ Միության ԿԳԿ նիստում, 1936 թ. փետրվարին, ԽՍՀ Միության ԿԳԿ Նախագահ՝ Մ. Ի. Կալինինը բնորոշեց նավատորմի ինդիբներն այսպես.

«Յես կուզենայի, վոր մեր նավատորմն ավելի նշանակոր գեր խաղար Խորհրդային Միության քաղաքական կյանքում, վոր մեր նավատորմը բարձրանար ավելի բարձր աստիճանի և շատ ավելի մեծ նշանակություն ունենար մեր յերկրի պաշտպանության գործի համար: Կառավարության և կուսակցության հոգածարությունն այժմ ուղղված է հենց այդ կողմը: Զեր պարզեատարումը հանգիսանում է մեր նավատորմի հայտնի հաջողությունների արձանագրումը: Բայց վրա հետ միասին պարզեատարումը հանգիսանում է նաև հրում զեպի առաջ: Այս պարզեատարմամբ կառավարությունն ու կուսակցությունն կարծես ուղղում են ասել ծովայիններին. «Ժամանակն եւ, վոր նավատորմն ավելի մեծ մասնակցություն ունենա յերկրի պաշտպանության գործում»¹⁾:

Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի ծովային ուժերի հրամանատարներն ու կարմիր նավատորմայինները Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխության պատմական նվաճումների աշալուրի պահապան են կանգնած:

«Մօրսկօ Սօրոնք» № 11, 1937 թ.:

1) «Պրավդա», Կ. Ո. 8 փետրվարի, 1936 թ.:

ՄԱՐՏ ԿԱՅՁԵՐԻ ՆԱՎԱՏՈՒՄԻ ԴԵՄ

ԻՆՉՊԵՍ ԲԱԼԹՅԱՆ ՆԱՎԱՏՈՒՄԻ ՀԱՐՎԱԾՈՒՄ
ԵՅԻՆ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԱԴՄԻՐԱԼՆԵՐԻՆ

1917 թվի սեպտեմբերի 19-ին գերմանական կայզեր Վիլհելմ II-ը հրաման տվեց. «Ուխղայի ծոցում գերիշխելու և արեւելյան Փրոնտի թեւն ապահովելու համար, հարկավոր ե ցամաքային և ծովային ուժերի համատեղ հարվածով դրավել եղել և Մոռն կղզիները և փակել թշնամու ծովային ուժերի համար Մեծ Զունդը (այլ կերպ մոռզունդ-նողուց Մոռն կղզու և Եստոնիայի մայրցամաքային ծովափի միջեւ. — Ն. Ռ.):

Այդ ժամանակ Ռիգան և Ուխղայի ծոցի հարավային ափին արդեն գրավված եյին գերմանական զորքերի կողմէց Ռուսական նավատորմի մոռնզունդյան ամրացրած դիրքի (Եղել, Դագո և Մոռն կղզիները) առափնյա պաշտպանությունը բավարար չէր՝ թույլ ցամաքային կայալոր յերկրորդ հերթի զորքերից և հեռու-հեռու դաստիարակած մարտկոցից:

Մոռնզունդի մարտում պատմության մեջ առաջին անդամն եր, վոր ոռուսական նավատորմը զեկավարում եյին բոլեկի-նավատիները: Նավատիների յերկրորդ համադումարը, վորը դրանից քիչ առաջ գումարվեց Հելսինկի Փորսում, հետեյալ վորոշումը հանեց. «Բնկերներ, ապացուցենք ամբողջ աշխարհին, վոր հեղափոխական նավատորմը, պաշտպանելով հեղափոխական Ռուսաստանը, կը կործանվի, բայց չի նահանջի գերմանական կայորի նավատորմի առաջ»: Իսկ յերբ ոփիցերները հրաժարվեցին

մարտի բանվել գերազանցող հակառակորդի դեմ, նավերի նավատիներին կամիտեները հրամայեցին ոփիցերներին նավերը մարտի տանել:

Գերմանական հրամանատարությունը վորոշել եր գեանու ափհանել Տագալախու ծովախորչի շրջանում (Եղել կղզու արևմտյան ափում), վորպեսզի հետագայում առաջ շարժվեն Եղել կղզու վրայով գեափի Մոռն կղզին, վորը միացված ե Եղելի հետ ամբարտակի միջոցով: Գերմանական նավատորմը պետք ե ապահովեր դեսանափ միջոցով տրանսպորտաների շարժումը ծովով, դեսանտների ափհանումը և կղզիների վրայով ցամաքային ուժերի առաջ շարժումը: Դրա համար գերմանական նավատորմը պետք ե ձեղքելով անցներ Իրբենյան նեղուցով և Սոյելողունդով—Եղել և Դագո կղզիները բաժանող նեղուցով:

Գերմանական գեներալներն այդ հարվածի համար շատ խոչոր ուժեր եյին պատրաստել: Գերմանական դեսանտային կորպուսը տեղավորվել եր 19 տրանսպորտի վրա: Այսաեղ ներկայացված եյին զորքերի բոլոր տեսակները՝ քոտ 25 հազար մարտիկներ, 8.500 ձիերով, 40 հրանուով, 220 գնդացրով, 80 ականանետով և այլն:

Դեսանտային ոսկերացիայի ապահովման համար գերմանական նավատորմի կողմից առանձնացվել եյին գծանվերի յերկու եսկարա (11 դրեդնուտ), 9 հածանավ, 56 եսկարային ականակիր, 6 սուզանավ, 56 փոքր ականակիր, 26 ականահան նավ, 3 ցանցային խափանիչներ, 6 ցեպաելին, 94 ինքնարքիր, մեծ բանակուրյամբ փոքր ականահաններ և ամեն տեսակի ոժանդակ նավեր՝ տրանսպորտներ ջրով, վառելանյութով, հոսպիտալային և հիգրոգրաֆիկ նավեր և այլն:

Ոռուսական նավատորմը կարողացվ այդ ուժերին հակառակ ընդամենը 2 կին, դրեհետուտի տիպի, գծանալ՝ «Սլավա» և «Գրածդանին», 3 հածանավ, 31 եսկարային և 3 փոքր ականակիր, 3 կին հրետանավ, 2 ականային և 3 ցանցային խափանիչ, 3 անդիխական սուզանավ և մաճք

նավեր՝ ականահաններ, պահակային կատերներ, լրատար նավեր :

Վոչ մի ուզմաքեմում, վոչ մի ովերացիայում 1914—1918 թ. թ. ամբողջ պատերազմի ընթացքում գերմանացիներին չեր հաջողվում ստեղծել այդպիսի ննշաղ գերակըշուրջյուն հակառակորդի ուժերի նկատմամբ :

Յեվ, չնայած դրան, չնայած ցամաքային գորքերի անկայունությանը, վորը հանդիսանում եր յերկրում տերող ընդհանուր քայլքայման հետեանքը, Բալթյան նավատորմը մարտն ընդունեց և կրվում եր հերոսաբար :

Նավերի վրա զեռ ծածանվում եր հին, Անդրեյեվյան դրոշակը, Հրամանատարությունը ծառայում եր բուրժուազիայի շահերին, բայց նավաստիների մասսաները դրեթե ամբողջովին գտնվում եյին բոլցեկիյան ազգեցության տակ : Հենց այդ պատճառով ել «Եղել և Դադո կղզիներում տեղի ունեցած ոպերացիայի ժամանակ հատուկ կայունությամբ աչքի եյին ընկնում բոլցեկիկ-նավաստիները» : Այժմամանակ, յերբ մնացած բոլորը խուճապային յերկյուղի մատնված փախչում եյին, նույն թվում նաև հրետանին, այսինքն այն զորամասերը, վորոնք համարվում եյին ամենից լավ պահպանված «բոլցեկիյան վարակից», նրանք մնում եյին իրենց տեղերում» : («ԽՍՀՄ-ում քաղաքացիական պատերազմի պատմություն» հ. 1) :

Հիշողության մեջ ծառանում են այն որերի վեհապահն տեսարանները :

Հոկտեմբերի 12-ն ե. : Անանային գորշ որ ե. : «Կայզեր» գծանավի և «Եմդեն» հածանավի պաշտպանության տակ գերմանական ականակիրները ճեղքում-անցնում են Սոյելոգունդի միջով դեպի Կասովոյան միջընթացքը իրենց գետանտի կրակային ոժանդակության համար : «Գրողյաշչի» հրետանավը, «Դեսնա» ականակիրը և «Բաղյաշչի» հինատիային ականակիրը հետ են քաշվում յոթ գերմանական ականակիրների կրակի տակ : Բայց ինչպե՞ս են հետ քաշվում : «Գրողյաշչի» շարժվում ե փոքր (իննը հանդուցա-

նոց) արագությամբ, կարծես թե, հանդիսավոր մարշ և կատարում . նա անընդհատ կրակ է վարում : Հեռակայությունը փոքրանում է մինչև 40 կարելտով¹⁾ : Հիմա «Ռազմաշչի» ականակիրն ել է մարտի բոնվում իր 75 միլիմետրանոց թնդանոթներով... «Գրողյաշչին» ճեղքվածք և ստանում ձախ բորտում : Հրդեհ է սկսվում : Նավի հերը հաջողությամբ հանդիսավոր հայն այն : Ահա «Գրողյաշչի» գաֆելի վրայի դրոշակը վայր և գցվել, — նավաստիները դրոշակը բարձրացնում են ստենդայի վրա : Զարդված ե զեկով զեկավարությունը, — «Գրողյաշչին» անցնում է մեքնաներով զեկավարությանը, բայց մարտը չի դադարեցնում : Այդ ժամանակ մոտենում են մեր ականակիրները՝ «Նովիկը», «Խոյառլավը», «Զարիյական» և Գրոմը» :

Աղջանշան՝ «Տորպետային գրոհի, վճռական մոմենտ ե» : Մենք գնում ենք զրոհի : Գոռոսւմ են վենտիլատորային մեքենաները, ցնցվում ե, վիրացիայի հետեանքով, կամ մըրջակը : Գերմանացիները չեն դիմանում և թագնվում են մարտախլային մշուշի մեջ... Ականակիրներից մեկը շարքից դուրս ե բերված :

Մեր «Բաղյաշչին» գործուղված և «Նովիկի» տիպի ականակիրների մոտ կապի համար : Հոկտեմբերի 13-ին մենք նորից կասարյան միջընթացքումն ենք : Մենք կրվում ենք ականակիրների, ականահանների և նույն «Եմդեն» հածանավի դեմ :

Զոտելով վճռական հարված հասցնել գերմանական ականակիրներին, մենք շատ մոտեցանք «Եմդենին» : Նա դընդակութեց մեզ իր հրետանիով : Հարկ յեղակ հետ քաշվել...

Հոկտեմբերի 14-ն ե. : Նույն կասարյան միջընթացքն ե. : «Գրոմ» եսկաղթային ականակիրը հարված և ստացել «Կայզեր» զրեղնոուտի տասներկուդյույմանոց արկով : Կրեն, Հրդեհ, յեղեկ, յերկու մեքենաներն ել շարքից դուրս են բերվել...

1) Կարելտով—յերկրության ծովային չափ ե, վորը հակառա

Գերմանական 9 խոշոր ականակիրներ ուղանում են գրուտալու, վորպեսզի վերջ տան մեր ականակիրին տորպեղուներով: Այն ժամանակ «Խրաբրի» հրետանավը բուքսիրի յերեցնում «Գրոմ»-ին և դուրս ե բերում նրան կրակի տակից յերեքհանդուցային ընթացքով: Մեր «Կոնստանտին» և «Պոբեղիտել» ականակիրները համառորեն հետ են մղում թշնամու հարվածները: Թշնամուն մոտենում են դարձյալ 5 գերմանական ականակիր: Ընդամենը 12 ականակիր և գրեղնուուտ մեր յերկու ականակիրի դեմ: Յեվ այնուամենայնիվ «Կոնստանտինը» և «Պոբեղիտելը» ընդունում են ժարտը, թաղցնելով ծխածածկույթի միջոցով «Խրաբրի» հրետանավի և «Գրոմ» ականակիրի հետիաղացումը, վորոնք չարունակում եյին կրակ վարել իրենց նավախելային հրանոթներով: Կորվեց բուքսիրային տրոսը... «Խրաբրին» նորից մոտեցալ «Գրոմին», փորձելով տալ նրան բուքսիրի փոխարեն խարսխի ճռպանը: Հակառակորդի կրակի մեջ մասը կենտրոնացված է «Գրոմի» և «Խրաբրի» վրա: Այրփող «Գրոմն» սկսում է սուզվել: Այն ժամանակ «Խրաբրին» վերցնում ե նրանից բոլոր մարդկանց և, դարձում կատարելով, բորտը դարձնում է հակառակորդին և կրակ բացում ամենատուիկ «գերմանացու» վրա: Գերմանական ականակիրը վնասված է և սողալով հեռանում ե...

Հոկտեմբերի 17-ի ժամի 8-ին «Դեյտուելնի» ականակիրը, վորը գտնվում եր դետքում Ռիգայի ծոցում, հազորդում և. «Տեսնում եմ 28 ծուխ հարավ-արևելյան ուղղությամբ. թշնամու ուժերը զնում են դեպի Կույվաստ...» Այդ որը պատմության մեջ չտեսնված հրետանային մարտ բորբոքվեց: Մի կողմից մասնակցում եյին յերկու հնացած ոռուսական զծանավ, վորոնք զինված եյին յուրաքանչյուրը չորս հին տասներկուդյույմանոց հրանոթով, 88-ից մինչեւ 116 կարելուով հեռավորությամբ, մյուս կողմից յերկու գերմանական զրեղնոուա (9 ուեղերփումն եյին), վորոնցից յուրաքանչյուրը սպառազինված եր տաս տասներկուդյույմանոց հրանոթով, 130 կարելուովից ազելի հեռահարությամբ:

Այդ պարզ աշնանային որվա հազվադյուրու տեսանելիումը նույնպես հակառակորդի ոգտին եր: «Կրոն-պրինց» և «Կենիդ» դրեղնոուաները կրակ բաց արխին մեր գծանավերի վրա վերջնակետ հեռավորությունից: Մեր «Ռազյաչչին» այդ որը նշանակված եր գտնվել «Սլավայի» մոտ և նա պահվում եր դրա հակահարվածային բորտի մոտ: Ժամանակ առ ժամանակ թշնամու արկերով բարձրացված սպիտակ բարձր ծփյունները մեղանից բոլորովին ծածկում եյին «Սլավան», և մենք սպասում եյինք, մինչեւ վոր նրանք իջնեն, վորպեսզի համոզվենք, վոր գծանավը գեռ դոյցություն ունի: Ծփյունները մնում են ողում մոտ 10 վայրկան, և այդ վայրկանները տեսում են, ինչպես յերկար ըոպեներ...

Միաժամանակ մենք հետ ենք մղում գերմանական ամբակոծիչ ինքնաթիւնների հարձակումը: 100 կիլոգրամանոց ուռմբերի պայմանունները թանձր սև ծուխ են տալիս: Ռմբակոծիչների կրակի տակ գտնվում եյին ականային խափանիջները, նկուղների մեջ ականների լրիվ սպաշարուի: Բայց զենիթային հրանոթների կրակը հարկադրում է գերմանական ողաչուններին մեծ բարձրության վրա գտնվել: Դիպումներ մեր նավերին չկան...

Ավելի արագակնաց գերմանական զծանավերը համառորեն պահվում են «Սլավա» հնացած նաևի կրակի հասողությունից գուրս: Այն ժամանակ նա կրակը փոխադրում է գերմանական ականակիրների վրա և հարվածում է նրանցից մեկը: Բայց հակառակորդի 20 տասներկուդյույմանոց հրանոթների կրակը կատարում է իր գործը. «Սլավայի» քթի աշտարակը շարքից դուրս ե բերված: «Սլավան» աշտարակածում է կատարում, նավախելը գեղի հակառակորդը, դործի յե դնում իր նավախելային աշտարակը և հետընթացքով գերմանացիների հետ մերձեցման ե գնում: Սակայն «Սլավայի» վրա ճեղքածքներն ավելի ու ավելի յեն շատանում: Կրենը և գիֆերենուը դեպի նավախելն ավելանում ե, և նա հետ ե քաշվում վսեմորեն և գանդաղ, մարգարտանման ծփյուններով շրջապատված:

Մոռնզունդի միջի արհեստականորեն խորացրած Փարվատերը, վորը դուրս է բերում դեպի հյուսիս, Ֆիննական ծոցը, նախատեսնված է առանց պաշտպի, ուստի դեպի նավախելի կողմը դիմարենտ ունեցող «Սլավան» չփ կարող անցնել: Նրանից դուրս են բերում անձնակազմը: Վնասված նավը պայթեցնում են Փարվատերի մեջ:

«Սլավա» զրահակը հերոսական կորուստը վերջնականալես փակեց գերմանական նավատորմի ճանապարհը դեպի արևելք: Իր մարմնով սա փակեց նրա ճանապարհը նեղուցի ամենանեղ մասում:

Յերեկոյան զեմ «Ռազմաշչին» զնում և «Սիլնի» ականակը և «Բուրեյա» խափանիչի հետ ականափակոց դնելու Ռառութենյան միջընթացքում: Հենց նույն դիշերը, դետքում կանգնած, մենք պայթում ենք տեսնում դրած ականափակոցի ուղղությամբ: Առավոտը մեր առջևումն եր պայթեցրած գերմանական «C—64» ականակիրը: Նա պատրաված է մեջտեղից: Քիթն ու նավախելը բարձրանում են ջրից . . .

Ուժերի հոկայական գերազանցություն ունենալով, գերմանական նավատորմը հաղթանակի չհասավ: Բայթյան նավատորմը թողեց Եզելն ու Դագոն, բայց պահպանեց իր կենդանի ուժը և բավականին կորուստ հասցրեց թշնամուն: Գերմանացիներն իրենք հաստատեցին այդ կորուստը պաշտոնական հաշվետվություններում: Գերմանական տվյալների համաձայն պայթեցվել են «Բայերն», «Դրոս Կուրֆյուրստ», «Մարկզրաֆ» դրեզնոուտները: Վոչնչացվել են ոռւսական նավատորմի կողմից գերմանական ականակիրները՝ «C—64», «T—54», «Դելֆին», «Ալտայիր», «T—56», «T—66», «Գուտհեյլ», «Գլուուկշտադտ», «T—65», «M—68», «Կերելիտեր». ականահաններ՝ «M—31», «Բոլանդ III», «Փ—3», «M—68», «Տարասպ», «Բինե»: Գերմանական նավատորմի յերեք ականակիր, յերկու ականակն, յերեք տրանսպորտ ականային ճեղքվածքներ են ըստացել, բայց փրկվել են գերմանացիների կողմից:

Նախահոկտեմբերյան որերի բացառապես դժվար քառական պարագայում, յերբ իշխանության դուրս գեղանդնած եր բուրժուազիան, բալթիկցիները, հաղթահարելով հակահեղափոխականների մատնությունը, դավաճանությունը և սարստածը, ցույց տվին, թե նրանք ինչի յեն ընդունակ մարտերում:

Յերբ ապազա մարտերում մեղ հարկ կլինի պաշտպանել մեր խորհրդային հայրենիքը, մենք վոչ միայն չենք զիջի թշնամուն մեր հողի վոչ մի թիզը, այլ և թշնամու վոչ մի վիմակել մենք բաց չենք թողնի մեր հարվածի տակից:

«Կոմսոմոլսկայա Պրավդա», 1 փետրվարի 1938 թ.:

„ԱՎՐՈՐԱՆ“ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ԴԻՁԵՐԸ

Մոայլ փքված սև Նեվայի վերևում սուլում եր սառցային քամին, ցրելով անձրեկի գորշ ցանցը: Հաղիկ տեսանելի դեղին բծերի նման աղոտանում է գետափի յերկարությամբ լապտերների շղթան:

Կամրջակից անձրեային հեղեղի միջով հազիկ կարելի յեր տեսնել ցոկագրոշակի ձողը:

Նշանարարները, բաճկոնների ոճիքները բարձրացրած, ամեն բողեք սրբում եյին աչքերը:

— Կամուրջը քթի մոտ ե,— զգայնորեն ձչաց ջրային պղտորության միջով կամրջասյուններն առաջին տեսնողը:

— Կամքաց: Ի՞նչ ես զոռում կիսամորթի պես,— հանգիստ ասաց կոմիսարը:

Մեքենայական հեռագրի բռնակը սողաց դեպի «ստոպը» և մի վայրկյանից հետո գեղի «լրիվ հետ»: Թաց տախտակամածը վոտքերի տակ դողաց ջերմային դողով:

Հրամանատարը կուցագ դեպի խոսակցական փողակը.

— Խարիսխ զցել:

Բաքի (տախտակամածի առջեխ մասի) վրա խիստ և զիշտ գործաց անցքի միջով սլացող խարսխաճուպանի յերկաթը: Ծանր ծվյաւնով ընկալ խազիսիսը: «Ավրորան» ցնցից ևս մեկ անդամ և անզգայացած տեղում:

— Լուսարձակը կամրջին,— հրամայեց բելիչովը:

Վերեւում Փորմարսի (առաջահարթակ) վրա թշչաց, վինչաց, և սրբնթաց կապտավուն ճառագայթն առաջ նետվեց դեպի խոնավ մթությունը: Հաղիկ նկատելի յերեւում եյին կամրջի սյուններն ու ֆերմանները: Ափի մոտ կամուրջը պատռված ե:

— Բաժանած ե,— ասաց կոմիսարը, ծնոտները սեղ-

մելով և բաճկոնի գրպանը շոշափելով: Այստեղ գոյնվում եր Հեղափոխական կոմիտեյի հրամանը: Կոմիսարն անդիք հիշում եր այն. «Բանվորների և Զինվորների Դեպուտատների Պետրոգրադի Խորհրդի Ռազմա-Հեղափոխական կոմիտեն վորոշել ե. հանձնարարել ձեզ ձեր տնօրինության տակ յեղած բոլոր միջոցներով վերականգնել շարժումը նիկոլայելյան կամրջով»:

Կոմիսարն աղմկալի չունչ քաշեց և սիրալիք նայեց քթային հրանոթների բարակ փողերին: Վողջ հածանավն աշխատում եր, վորպես հոկայական ճշգրիտ խրոնոմետր, յենթարկվելով ուղղական արհեստի յերկաթե իներցիային: Այդպիսի միջոցներով կարելի յեր և՛ վերականգնել, և՛ խանդարել ժամանումն ամեն տեղ:

Կոմիսարն աչքերին մոտեցրեց գիշերային ծանր բենոկլը: Բինոկլի ակնապակիներում կամուրջը բոլորովին մոտեցավ, կարծես թե, բավական եր ձեռքը պարզել և կարելի կլիներ բռնել փորագրած բազրիքների թաց յերկաթից: Բազրիքների հետեւմ միմյանց սեղմվում եյին լուսարձակով շացրած փոքր ֆիգուրները յերկարագիտեց շինելներով: Կոմիսարը նույնիսկ ջոկում եր գեղին վենդելները (սկզբնաւառերը) սպիտակ ուսուագիրների վրա:

— Յունկերներն են,— ասաց նա, գառնալով հրամանատարին, — թրջում են հիմար կլուսիները կամրջի վրա:

Նա իջեցրեց բինոկլը և պահանգից վերցրեց մեզափոնը: Հաղաց և մեզափոնը բերանին դրեց:

— Պարոն յունկերներ,— գոռում եր մեզափոնը, — Ռազմա-Հեղափոխական կոմիտեյի անունից առաջարկում եմ ձեզ ցրվել սատանաների մոտ, քանի դեռ վոզջ եք: Հինգ բողեյից հետո կրակ եմ բաց անում կամրջի վրա հրանոթներով:

Կամրջի վրա մի փոքր կրակ թարթեց և մի խղճուկ միայնակ կրակոց լսվեց: Ծիծաղը պահելով, կոմիսարը տեսավ, թե ինչպես կրակողի մոտ մի քանի մարդ վաղեցին և նրա ձեռքից խլեցին հրացանը: Շտապելով և սայ-

թաքելով, յունկերները խմբովին վաղեցին դեպի գետափը, և նրանց փոքրիկ վհատված Փիգուրներն անհետացան մթության մեջ։ Կամուրջը դատարկվեց։

— Ահա, այդպես ել ավելի՝ լավ ե... Կռվողներ, — բարեսիրտ արհամարհանքով նրանց ուղեկցեց կոմիսարը և իսկույն հրամայեց։

— Յերկրորդ վախտայի յենթավախտայիններին հրացաններով ափի իջնել։ Անհապաղ կամուրջը միացնել և պոստեր գրավել յելքերի մոտ։

Սանդուխքների վրա դոփովիեցին վոտները, ճռճռացին տալիները (գլապարանները)։ Աև, տարափի թելեր անցկացրած մթության մեջ կանդնած եր «Ավրորան» կամըրջի մոտ անշարժ, դաժան, ազդարարելով հին աշխարհի կործանումը։

Որը դորշ եր, մոռայլ և քամոտ։ Նեվան փքվում եր։ Ծանր, չուզունի դույն ունեցող ջրի յերեսին սահում եյին դեղնավոն փրփրակալած կատարները և թոչում եր քամու պոռթկումներով պոկած ջրային փոշին։

Քաղաքը կամուրջների հետևում հանդարտված, ամայացած և թաց եր։ Փողոցներում սովորական շարժում չըկար։ Հածանալի կամրջակից յերեսում եյին վասիլցելյան կղզու գծերի դատարկված ձորերը։

Յերեմն-յերեմն լսվում եյին հրացանային հրաճգության խուլ արձականքները։ Վաղ առավոտը Ռազմա-Հեղափոխական կոմիտեյի մարտական ջոկատները գրավեցին կայարանները, կամուրջները, ելեկտրական կայանները և գլխավոր հեռագրատունը։ Բացի գլխավոր հեռագրատոնից ժամանակավոր կառավարության զորամասերը հանձնում եյին իրենց դիրքերն առանց մարտի։ Միքանի ցրված ձեղեր, կարճ սրբնթաց զրոհ, և զրաված չենքերից դուրս եյին բերում զինաթափ արած յունկերներին և հարվածայիններին՝ ձեռքերը բարձրացնող, ձմլված, կծկված տեսքով։ Թլխավոր հեռագրատունը դիմարեց յերկու ժամ։

Այդ մարտի ժամանակ նեվայով «Ավրորայի» մոտով

անցավ կրոնշտագտի նավահանգստի կատերի կողմէից բուքսիրի վերցրած հակայական բարժան ուղմածովայիններով։ Հածանալի խումբը, նկատելով կրոնշտագտցիներին, կախել ընկել բորտից, թափահարելով գլխարկները, վողջունելով ընկերներին։ Բարժայի քթից բարձրահասակ, դանդուր մազերով, դորշագույն աչքերով ուղմածովայինը, կոճկաբաց բաճկոնով, չարաճճիորեն դուռաց։

— Եյ, ավրորականներ։ Ինչո՞ւ յեք բորտին նստած։ Ափ իջեք-գործ կա։

Բարժան անցավ կամքրջի տակից աղմուկով և խիզախ յերգով և կանգնեց Անդիիական դետափի վայրեջքի մոտ։ Ռազմածովայինները նրանից ափ դուրս թափվեցին։

Ավրորցիները նախանձով եյին նայում դետափով վաղող կրոնշտագտցիներին։ Բայց նավը թողնել չի կարելի։

Կոմիսարն առավոտյան վեցից անբաժան կերպով կանգնած եր կամրջակի վրա։ Անձրևոցի վրայից փայլուն շիթերով հոսում եր ջուրը։

— Բնկեր կոմիսար։

Կտրուկ դարձավ դեպի ձայնը։ Շնչակտուր ուղիսուր նրան մեկնեց բլանկը։ Զգուշաբար բլանկը դրեց չտուրմանական սեղանի վրա և շտապորեն աչքի անցկացրեց ուղիովքամի տեքստը։

«Բոլորին, բոլորին, բոլորին։ Ժամանակավոր կառավարությունը տապալված ե, պետական իշխանությունն անցել ե Բանվորների և Զինվորների Դեպուտատների։ Պետրոգրադի Խորհրդի որդանի՝ Ռազմա-Հեղափոխական կոմիտեյի ձեռքը, վորը գլխավորում ե Պետրոգրադի պրոլետարիատը և կայազորը։ Այն գործը, վորի համար պայքար ե մղում ժողովուրդը, հետեւյան ե՝ դեմոկրատիկ խաղաղության անհապաղ առաջարկում, պոմեշչիկների հողի սեփականության վերացում, բանվորական վերահսկողություն արտադրության վրա, Խորհրդային կառավարության ստեղծում, — այս գործն ապահովված ե։

Կեցցե՛ բանվորների, զինվորների և գյուղացիների հեղափոխությունը»:

Կոմիսարն ուղղվեց, խորը շունչ քաշեց և վերցրեց գլխարկը: Բաց գլխով նա մոտեցավ կամրջակի յեղբին: Նրա առջևը կիսաբաքի վրա, հրանոթների մոտ անշարժ և մոռայլ կանգնած եյին հրանոթների թրջված սպասարկողները, իսկ բորսերի յերկայնությամբ մութակների մոտ հավաքվել եյին ուղմածովայինների խմբակները. վորոնք լարված կերպով ականջ եյին դնում քաղաքի հեռավոր աղմուկներին և դիտում եյին կամրջի հետեւի մառախչային մշուշը:

Զինվորական կարգապահության տեսակետից այդ անկարգություն եր: Մարտական տազնապը նվազվել է դեռ լուսաբացին, և տախտակամածի վրա չեր կարելի թրկ գալ վոչ մեկի, բացի հրանոթային համբանքներից: Բայց կոմիսարը հասկանում եր, վոր վոչ մի ուժով այս բռնկեյին չես հեռացնի ցած՝ հուղված, վառվող մարդկանց:

Հուզումը ճնշելով, նա ճշաց «Բնկերնե՛ր»:

Գլուխները դարձան դեպի կամրջակը: Մարդկանց աշքերը բոնկվեցին անհամբերության աղաւ փայլով:

— Ընկերնե՛ր.— կրկնեց կոմիսարը, թափահարելով բլանկը, — մենք տարանք, ժամանակավոր կառավարությունը մեռավ... Կեցցե՛ բոլշևիկյան կուսակցությունը, կեցցե՛ Խորհրդային իշխանությունը:

Կիսաբաքի վրա բանկվեց «ուռա», և, կարծես թե, ի պատսխան դրան, ամից, Սենատական հրապարակից հաճախակի և բարձրածայն ճոճուացին զնդացիրները:

Պարզ եր, վոր այնտեղ, քաղաքում դեռ կովում են: Բեմշումը բլանկը դրեց բաճկոնի գրպանը:

— Համբանքները հրանոթների մոտ: Ավելորդներին ուղախտակամածից ցած իջնել: Բոլորը տեղերդ:

Խումբը նետվեց դեպի իջանցքները: Սանդուխքներով իջնելիս, ավրորցիները նետում եյին վերջին հայացքներն

ավին: Կիսաբաքը գտառարկվեց: Զդված փողերն անաղմանությունը կամրջան լսվող հրաձգության ուղղությամբ, ճոճվեցին ու սառան:

Հոկտեմբերյան գիշերվա մթությունն ավելի ու առվելի խիստ եր հեղեղում նեվան ու քաղաքը: Դորցովիկ կամրջից լսվում եր չարունակ ուժեղացող յերկուստեղ հրաձգությունը: Սև և մոռայլ հսկայական զանդվածի պետ սառել եր հեռվում, կամուրջների հետեւում ջմեռային պալատը: Միմիայն յերկու-յերեք պատուհաններում լույս կար: Պալատը նմանում եր նավի, վորը մարել ե ճրադրները, վորպեսդի ծածուկ գիշերային նավարկության դնա:

Եերբ ուժեղանում եր գնդացրային ճարճառունը, կամրջակից յերեսում եր բաց վարդադույն թարթում մութ յերկնքում, Աղմիրալտեյստվոյի (ծովային վարչության) վերեսում: Անշարժ սիլուետների պես կամրջակի վրա կանգնած եյին նշանաբարները: Կայմերի ձղիչների մեջ և վերնաշենքերում սուլում եր սառցային քամին և մերթը-ընդ-մերթ կամրջակի վրայից անցնում եյին, հայտնի չե, թե վորտեղից թռչող պատահական զնդակները:

Մատներով կառչած բաղրիքների սառեցնող յերկաթից Բելլշումը նայում եր, առանց հայացքը հեռացնելու, Պետրոպավլովսկի կողմը, վորի ցածը սիլուետի վերեսում հաղիկ նկատելի ասեղի պես լույս եր տալիս բերդի վոսկեղած սայրը:

Բելլշումը դժվարությամբ մատները պոկեց բաղրիքից: Նայեց կողքին կանգնած հրամանատարին: Լայնացած, չիոթությամբ լի աչքերից հասկացավ, վոր հրամանատարը հագիւթ թե հասկանա հրամանը: Մի ակրնթարթ զայրույթ դդաց, բայց չքարկացավ: Վերջին հաշով ինչ կարելի յեր պահանջել ոՓիցերից: Այն եւ և

լավ, վոր չի փախել, վոր կանդնած և հենց այստեղ, կամըշակի վրա:

Յեվ, իր մեջ զգալով իշխանության և պատասխանատվության մի ինչ վոր միանգամայն նոր գիտակցություն, Բելիչովը հանգիստ կերպով հեռացրեց հրամանատարի խոնարհած ֆիզուրան և կունալով մութակների վրայից, հրաման տվեց դեպի կիսաբաքը, իրեն համար անսպասելի իշխանական հրամանատարական ձայնով.

— Քթայինը... Զմեռնայինին, ուղղակի նշանառությամբ... — ընդմիջում արավ. — Կ-բակ:

Կանաչավուն-սպիտակ կայծակը փայլեց քթային թնդանոթի վերեւում, լուսավորելով կիսաբաքը, հրանոթային համրանքի ու սիլուեաները, կամըշակը: Զոր հարվածից ցնցվեց տախտակամածը վոտների տակ: Զիդի թնդանայն դղրդյունը ծածկեց իր ծանր հզորությամբ բռոր հնչյունները:

„Морской Сборник“ № 11, 1937 թ.:

Ս. ՎՈԼԿՈՎ

„ՍԵՐԱՌՆԻ“ ԵՍԿԱԴՐԱՅԻՆ ԱԿԱՆԵԿՐԻ ՎՐԱ

Հեշողության մեջ պարզորով կերպով պահպանվել էն 1917 թվի Հոկտեմբերյան պատմական որերը: Դեպքերից մի քանի որ առաջ արդեն պարզորեն զգացվում եր կերեն-լչինայի դատապարտվածությունը: «Սամսոն» եսկադրային ականակիրը, վորի վրա յես նավարկում եյի վորպետ սադիստ, այն ժամանակ կանգնած եր Հելսինգֆորում:

Դեպքերի սրությունը հատկապես զգացվեց հոկտեմբերի 23-ին: Հիշում եմ, մենք, 5 հոգի սամսոնովեցներս, նատած ենք ծովայինների ակումբում և աշխուժորեն զըրուցում ենք Ռիվայի ծոցում դերմանացիների դեմ վերջերս մզած մարտերի մասին, նավախմբի մարտական և քաղաքական տրամադրությունների մասին, կերենսկու և նրա արբանյակների նկատմամբ ուժեղացող թշնամության մասին:

Հնարավոր ե, վոր մեր զրույցը շարունակվեր մինչեւ ակումբի հենց փակումը: Բայց հանկարծ ներս և վաղում մի նավաստի:

«Ո՞վ ե այստեղ «Սամսոնից»: Շտաու նավը գնացեք»: Առանց մի բոսկ կորցնելու, վազում ենք ականակիրը: Պարզվում ե, վոր հենց նոր և տեղի ունեցել Բալթյան նավատորմի կենտրոնական Կոմիտեյի արտակարգ նիստը, վորը քննության և առել ժամանակավոր կառավարության տապահան համար հեղափոխական գորքերի ողնության հարցը: Նշվել են ամենավատահելի նավախմբեր ունեցող ականակիրները շտապ Պետրոգրադ ուղարկելու համար:

Հայտնի դարձավ, վոր վորոց ականակիրների մեխանիկները, պատճառ ըսնելով նավերի մեխանիզմներում յեղած զանազան դեֆեկաները, վորձում եյին խույս տակ

Պիտերի արշավից : Մեր ականակրի ինժեներ-մեխանիկ Ռեկլայստը փորձում եր նույն ձեռվ վարվել :

«Շոգեմուղի զլիսպոր մագիստրալում, — առում եր նա, — Փլանեցների միջև պատովել են միջադիրները : Դըրանց տեղափոխման և նորոգման համար յերկար ժամանակ է պահանջվում : Պետք ե արշավը հետաձգել» :

Այդ ժամին իմանալով ականակրի խումբը վրդովից : Նույն գեղերը, հոկտեմբերի 23-ից լույս 24-ը, խումբն ինքնուրուցյն կերպով ձեռնարկեց նորոգմանը : Լարված աշխատանքի հետեանքով, յերեք ժամից հետո մագիստրալը նորոգված եր : Այդ նույն ժամանակի ընթացքում կարողացան ընդունել արշավի համար անհրաժեշտ բոլոր նյութերը՝ նավթը, մթերքները և այլն :

Հրամանատարական կազմի կողմից սարոտածք հնարավորությունը հաշվի առնելով, նավային կոմիտեն իր վրա վերցրեց արշավի նախապատրաստման և անցկացման որի կեկավարությունը : Յենտրոբալթ հայտնեցին պատրաստ լինելու ժամին և վաղ առավոտը, ընդունելով «Ծեսպութիկա» դժանավից մոտ հարցուր մարդ մի զինված խռմք, դուրս յեկանք գետի Պիտեր :

Նավախումբն իմանում եր, թե ի՞նչ նպատակով ե գլուխով : Զգացվում եր մարտական տրամադրություն և լիակատար վստահություն՝ սոցիալ-համաձայնողական կառավարությունը տապաշելու դործում : Նեվայի բերանը մտնելու ժամանակ նավի վրա բարձրացրած եր մի հսկայան դրոշակ հետեյալ մակարություն՝ «Ամբողջ իշխանությունը Խորհրդին» :

Նույն որը, հոկտեմբերի 24-ին խարիսխ գցեցինք Նեկուայելյան կամրջի մոտ : Արդեն մութիւն եր : Մեր լուսաբաները պարբերաբար լուսավորում ելին նեվայի յերկուստափնյա փողոցները : Այդ փողոցներում վոչ մի մարդ չկար, ամեն ինչ թագնվել և հանդարտվել եր :

Մեղանից վոչ հեռու գտնվում եր «Ավրորան» :

Յերեկոյան մոտ ժամի 10-ին տեղի ունեցած նավախումբի ընդհանուր ժողովում միահամուռ կերպով վորոշ-

վեց . միանալ Բանվորների և Գյուղացիների Դեպուտատների կրոնշտագտի Խորհրդին, այլ խոսքով, տապալել ժամանակավոր կառավարությունը :

Վորոշ ժամանակից հետո մի հրանոթային ձիգ լսվեց : Ամբողջ նավախումբը զուրս վագեց վերին տախտակամածը : Վախտապահն հայտնեց, վոր կրակեց «Ավրորան» Զմեռացին պալատի ուղղությամբ :

Չիգից անմիջապես հետո միանդամից սկսվեց գնդացիրների ու հրացանների կատաղի ճարճատյուն Ալեքսանդրյան այգու շրջանում :

Իսկույն «Ծեսպութիկայի» դեսանտը և մեր խմբի մի մասը լրիվ սպառազինված ափ դուրս յեկան հեղափոխական զորքերին ոգնելու համար : Դրա հետ միաժամանակ համարյա թե վող հրամանատարական կազմը կազմը կալանավորվեց ընդհանուր նավասենյակում :

Մնացած նավախումբը գրավեց իր մարտական պոստերը հրանոթների մոտ, նշանառություն կատարելով գեղական պառային պալատը : Մարդիկ պատրաստ ելին Ծաղկանովային Հեղափոխական կոմիտեյի առաջին հրամանով կրակ բանալ :

Կրակել հարկ չեղավ : Ուշ վեհերը նավախումբը վերադարձավ ափից, ուրախալի լուր բերելով ժամանակավոր կառավարության տապալման մասին :

Հետեյալ ամբողջ որը, հոկտեմբերի 25-ին տեղի յեր ունենում կերենչչինայի մնացորդների լիկվիդացիան : Խոկ մյուս որը նավախումբը հսկայական դայրութով կարդաց եսերական «Դելո նարութ» թերթիկում մի պրովոկացիոն հոդված՝ «Ի՞նչպես «Սամսոնի» ծովայինները հիմարացվել և յեկել են Պիտեր, չխմանալով, թե ինչի համար» : Նավախումբը շտապ հրավիրված միտինգում կազմեց եւսերների այդ կտոր յելութի պատասխանը :

Մենք ուղղեցինք «Պարավայի» խմբագրությունը, վորտեղ ընդունեցին մեր հոդվածը և հրապարակեցին ամսի 27-ին :

Այսպիս մենք դիմավորեցինք Հոկտեմբերյան որերը :

«Սամսոն» եսկաղղային ականակիրը (վորն այժմ նավարկում է այլ անվան տակ), հավատարիմ լինելով Հռետեմբերյան տրաղիցիաներին, աչալուրջ կերպով տանում ե իր քսանամյա մարտական վախտան, պահպանելով պրոլետարական Մեծ հեղափոխության որրանի՝ Լենինի փառապանծ քաղաքի մատուցները:

„Морской Сборник“ № 11, 1937 թ.:

Ս. ԼՈՒԿԱՇԵՎԻՉ

ԳԵՂԻ ԴՐՈՇ ԶՄԵՌԱՅԻՆ ՊԱԼԱՏԻ ՎՐԱ

Բալթյան նավատորմի նավատիների մասսաների հետափոխական ակտիվությունը հատկապես փայլուն կերպով արտահայտվեց 1917 թվի ապրիլի 1-ին, յերբ Հելսինգֆորսը և Կրոնշտադտը հրաժարվեցին բուրժուական ժամանակակիր կառավարությանը յերդում տալուց:

Մասսաները բուռն կերպով ակտիվանում ենին: Մայիսի 13-ին Կրոնշտադտում և հունիսի 10-ին Հելսինգֆորսում, այդ գլխավոր ծովային բազաներում, հսկայական ցույցեր տեղի ունեցան բոլշևիկյան լողունդների տակ՝ «Կորչեն տաս կապիտալիստ-մինիստրները», «Ամբողջ իշխանությունը Խորհուրդներին»: Ինձ, վորպես պատգամավորի, հարկ յեղավ ներկա լինել Բալթյան նավատորմային առաջին համագումարին: Այստեղ նույնպես զդացվում եր մասսաների հեղափոխական թափը և բարձր քաղաքական ակտիվությունը:

Բուրժուական-կաղետական, մենչևիկյան և եսերական մամուլն ուժեղացրեց զրայարտական կամպանիան Լենինին և բոլշևիկյան կուսակցության դեմ, հնարելով զանազան հերյուրանքներ Բալթյան նավատորմի բոլշևիկացող հեղափոխական նավաստիների դեմ:

Քաղաքական դեպքերը հատուկ սրությամբ ծավալվեցին կորնիլովյան ալանտյուրայից հետո, վորի լիկվիդացիայի գործում Բալթիկայի նավատիներն ամենագործոն մասնակցություն ունեցան: Յենտրոբալթը, վորի նախադահան եր ընտրվել նավաստի Դիբենկոն, վորոշեց ժամանակավոր կառավարության կարգադրությունները չկատարել և նրա իշխանությունը չճանաչել:

Սեպտեմբերի 25-ին, Կերենսկու արգելմանը հակա-

ուակ, տեղի ունեցավ Բալթյան նավատորմի յերկրորդ համագումարը: Համագումարի բոլոր վորոշումները տոգորդված եյին իշխանությունը Խորհուրդներին անցնելու գաղափարով:

ՈՓիցերության հակահեղափոխական մասի դիմագրությունը պարտության մասնվեց: ՈՓիցերությունը, վորը ճնշված եր սոցիալիստական հեղափոխության վրա հասնող փոթորկով, անզոր եր վորեւե ռեալ բան հակագրել կամ արգելակել հեղափոխական դեմքերի անզուսպ ընթացքը: ՈՓիցերությունը հույս ուներ հակահեղափոխական ուժերի համախմբման և մորիլիկացիայի մասին, այն մասին, վոր կհաղթահակի ուազմական դիկտատուրան, և այդ բոլոր կոմիտեները, միտինգները, կուսակցական ֆրակցիաները, բոլէկիյան թերթերը, վորոնց ընթերցանությունը տարվում ե նավաստիների մեծամասնությունը, կանհետանան կոչմարային յերազի պես:

Հեղափոխությունը՝ պատմության լոկոմոտիվը, — ինչպես ասում եր Մարքոս, — ավելի ու ավելի յեր մոտենում:

Հենինի ուղղակի ցուցման համաձայն, Յենտրոբալթը Հոկտեմբերյան դեմքերի նախորյակին նավերը մարտական պատրաստության ե բերում և նրանց մի մասն ուղղում է Պետրոգրադ: Պիտերի բանվորների կարմիր դվարդիական ջոկատները լրացվել եյին նավաստիների խմբերով:

Յերկրի բոլոր ծայրերից՝ Բալթիկայից, Սևծովյան նավատորմից, Կասպից ծովի, Սակատույան, Ռւրմիա-վանի, Դանուբյան, Ամուրյան, Հյուսիսային, Սիբիրյան նավատորմիկներից ու մյուս ծովային մասերից պատզամավորներ են յեկել Խորհուրդների առաջիկա II համագումարը և նավաստիների Համառումաստանյան I համագումարը: Պատզամավորները յեկել են նակարով՝ պաշտպանել բոլէկիկներին, կենսագործել բոլէկիյան լոգունգները: Նավաստիների պատզամավորների կաղմակերպող և զեկավարող կենտրոն հենարոն հանդիսացավ Ռազմա-ծովային կամական կոմիտեն, վորը տեղավորվել եր Գլխավոր առաջնորդությունը:

բալտեյստլոյում, տիբրահոչակ ժամանակավոր կառավարության ռեզիդենցիային անմիջորեն մոտիկ:

Աղմիրալտեյստլոն արագորեն հեղափոխական միջնաբերդ եր գառնում: Այստեղ եյին գալիս նավաստիների դրակաները, սպառազինված գնդացիրներով, հրացաններով, նոնակներով: Կոմիտեյում շարունակ ճռճոռում եյին հեռախոսները, կարգադրություն եյին արվում պատվիրակներին, ինֆորմացիա յեր հավաքվում դետքերից և ծովային մասերից: Դա նավաստիների խսկական մարտական շտաբն եր, վորը սերտ կապ եր պահպանում Սմոլնու հետ, վորատեղից իրագործվում եր ապստամբած կայազորի և Պետերի պլրուետարիատի ընդհանուր ղեկավարությունը:

Վրա հասավ պատմական դիշերը: Դեռ մթնչազային մթության վրա հանելու հետմիասին սկսվեց գնդացրայէին և հրացանային հրացգությունը: Մենք յերեքս, Բալթիկայի նավաստիներս, գնդացրով զինված գրավեցինք Ալեքսանդրյան այգու (այժմ Սվիատավորների այդի) գերբերից մեկը, բանաստեղծ Լերմոնտովի հուշարձանի մոտ: Շարունակ սուլում եյին, հայտնի չե, թե վորտեղից արձակած գնդակները: Մեր գնդացիրը պետք ե գործեր աղմիրալտեյստլոյից տված հատուկ աղդանշանով: Բայց գործի գնել այն հարկ չեղավ: Ավրորայից արձակած ձիգից հետո, այգու ցանկապատի հետեւում յերեացին և արագ անհայտացան նավաստիների, զինվորների և կարմիր գվարդիականների սիլուետները: Ներխուժեցին Զմեռային պալատը: Միանդամայն իրենց կորցրած յունկերները վորորմածություն եյին խնդրում: Նրանց արագորեն զինաթափ եյին անում, նազանները, հրացանները և փամփուշները ձեռքից ձեռք տալով, ուղարկում եյին հրապարակ կարմիր գվարդիական ջոկատներին:

Կանացի գումարտակի հարվածայնուհիները, վորոնք կրակում եյին պալատի ճակատի փայտե ծածկարանի հետեւից, այժմ վար են դրել հրացանները, հիստերիկորեն մի ինչ վոր բան եյին աղաղակում, բայց մարդ չկար և ժամանակ չկար, վոր նրանց արդարացումները լսեր:

Ամբողջ գիշերը դնդասըրային և հրացանային հրաձդու։
թյուն եր լովում։

Հետեւյալ որը մենք Անատոլի Ժելեզնյակովի հետ մի-
ասին, հետագայում, վորի հետ ցըցինք Սահմանադիր
ժողովը, մի քանի նավաստիների հետ բեռնատար մե-
քենայով մոտեցանք «Բիրժեվիա Վեղոմոստի» հրատարակ-
չությանը, Գալերնայա փողոցում (այժմ Կրասնայա փո-
ղոց), թուղթ բոնազրավելու համար։ Պահեստը պահպանող
միքրոֆավոր աշխարհազորայինը սկզբում մեզ չեր թողնում
անցնել, բայց յերբ մենք նրան բացարեցինք, վոր մի-
նիստրները կալանավորված են, իսկ իշխանությունն ան-
ցել ե բանվորների և գյուղացիների ձեռքը, նա հրացանը
դրեց անկյունը և սկսեց ողնել մեզ թուղթը բեռնելու գոր-
ծում։

Անսպասելիորեն հրատարակչության դրասենյակից
գուրս թառալ «Բիրժեվիա Վեղոմոստի» և «Ոգոնյոկ» ժուռ-
նալի տեր Պրոպեկը, վորը պարզեատրվել եր Կերենսկու
կողմից արծաթե մեղալով քաջության համար, այսինքն
այն բանի համար, վոր աղիտացիա յեր մղել զինվորների
մեջ «մինչ հաղթական վախճանը պատերազմի համար»։
Աշխարհազորային զինվորը, հրացանը վեցնելով «ձեռքի»
դրությամբ բարկացած ճշաց. «Հեռացի՛ր, սատանայի՛
բուրժու։ Հիմա մենք ինքներս ենք տերերը»։

„Марский Сборник“ № 11, 1937 թ.։

1918—1920 թթ. ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ
ԿԱՐՄԻՐ ՆԱՎԱՏՈՐՄԻ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԽՐՈՆԻԿԱՅԻՑԻՑ

1918 թ.

ՓԵՏՐՎԱՐ

12. Աոցիալիստական Բանվորա-Գյուղացիական Կարմիր Նավա-
տորժի կազմակերպումը և հին ցարական նավատորժի արձակումը։
25. Բալթյան նավատորժի նավերի հեռացումը Ռեվելից հետինդ-
փորս, Ռեվելի գրավումը գերմանական զորքերի կողմից։

ՄԱՐՏ

12. Բալթյան նավատորժի նավերի՝ Հելսինգֆորսից Կրոնշտադտ
սահցային արշավի սկզբը։
23. Ամուրյան նավատորժիկի մասնակցությունը՝ Բլազմեշէն-
սկում սպիտակ գվարդիականների և ճականացիների հակահեղափոխա-
կան յելլութի ճնշման գործին։

29. Լավենսուրի կղզու մոտ սպիտակ ֆէնների կողմից «Յերմակ»
սահցամատի զնդակումը, վորը դնում եր նավերը Հելսինգֆորսից
իրոնշտադտ գուրս բերելու համար։

ԱՊՐԻԼ

20. Սևծովյան նավատորժի հեռացումը Սևստոպոլից Նովորոս-
սիյուկ։

ՄԱՅԻՍ

20. Վոլգայի նավատորժիկի կազմակերպումը ընկ. Մարկինի-
գլխավորությամբ։

ՀՈՒՆԻՍ

18. Սևծովյան նավատորժի նավերի ջրասուզումը Նովորոսսիյուկի
ոերդում, գերմանական ինտերվենաների կողմից նրանց գրավելուց
խուսափելու համար։

1. Անգլո-Փրանսիական դեսանտի ափհանումը Մուրմանսկում :
22. Վոլգայի վրա Սվիբաժովի մոտ «Դելո Սովետա» ռազմական շոգենավի հերոսական կորուստը չեխոսլովակների դեմ մղած մարտում :

ՈԳՈՍՏՈՑ

2. Արխանգելսկի գրավումը դաշնակիցների դեսանտային ջոկատի կողմից դեն. Պուլի հրամանատարությամբ : Հյուսիսային Դվինայի նախատրմիկի կազմակերպումը և առաջին ընդհարումն ինտերվենտների հետ :

4. Ճապոնացիների, ամերիկացիների, անգլիացիների, Փրանսիացիների և իտալացիների դաշնակից դեսանտի ափհանումը Վլաշի-Գոստիկում :

9. Վ. Ի. Լենինի կողմից Բալթյան նավատորմին կարգադրություն անելն ականափակոց դեկտու մասին :

18. Հյուսիսային Դվինայում «Ֆենիքս» բուքսիրի մարտը ինտերվենտների դեմ :

19. Ինտերվենտների պարտությունը Հյուսիսային Դվինայում, Պուչուգա-Բորկի գյուղի մոտ Կաբմիր Բանակի և Նավատորմի միասնական դործողությունների հետեանքով :

21. Ծովայինների 1000 մարդուց բաղկացած 4-րդ Բալթյան ջոկատի ժամանումը Հյուսիսային Դվինայի Փրոնաը :

23. Վ. Ի. Լենինի Ռիբինսկ ուղարկած հետադիրը Բալթյան նավատորմի ականակիրների առաջարժումը դեպի Վոլգան արագացնելու մասին :

24. Կաբմիր Բանակի զրամաների և Ամուրյան նավատորմիկի նավատիների մարտը ճապոնացիների դեմ Ռւսուրի կայարանում, վորի ժամանակ չատ նավատիներ հերոսարար զոհվեցին :

27. Բալթյան նավատորմի ականակիրների միացումը Վոլգայի Ռիազմական նավատորմիկի հետ :

28. Նավատորմի հրամանատար ընկեր Պալլին Վինոգրադովի հերոսական մահը Հյուսիսային Դվինայում սպիտակների դեմ մղած մարտում :

31. Վոլգայի նավատորմիկի կողմից սպիտակներին հասցրած պարտությունը, Վոլգայի վրա Պէջէջ գյուղի մոտ դեսանտ ափհանելու փորձերի ժամանակ :

ՍԵՊՏԵՄԲԵՐ

3. Վոլգայի նավատորմիկի նավերի մարտը սպիտակների մարտ կոցների դեմ Վերինի Ռւսլոնի մոտ :

6. Վոլգայի նավատորմիկից դեսանտի ափհանումը, Վլադիմիրվկա և Ստարիցկայա գյուղերի մոտ, Յարիցինի Փրոնաւում ուղեցացիների համար :

Մարտ սպիտակների դեմ Ռինոկի մոտ, ականահան աշխատանքները Յարիցինի մատուցյի մոտ :

7. Ճապոնական գորքերի կողմից Ամուրյան նավատորմիկի և նրա բազայի ամբողջ տերիտորիայի (Ոսկպովյան գետափոքը) դրագումը :

Վոլգայի նավատորմիկի նավերի կողմից կազմանի և նրա շրջակայի գնդակոծումը :

9. Վոլգայի նավատորմիկի նավերի ճեղքում ընկ. Մարկինի հրամանատարությամբ դեպի Կազմանի նավամատուցյները և դեսանտի ափհանումը :

10. Կազմանի Վըռհումն ու զրավումը կարմիր զորքերի կողմից :

11. Վոլգայի նավատորմիկի մարտը սպիտակների նավատորմիկի դեմ և կյուչէջա գյուղի վրավումը :

16. Վոլգայի նավատորմիկի կողմից Բոգորոդսկոյե գյուղի և Կամայի գետաբերանի զրավումը մարտի միջոցով :

18. Նավատորմիկի կազմակերպումը կամա գետի վրա :

22. Վոլգա-Կամայի հավատորմիկի զալիթումը :

25. Վոլգայի նավատորմիկի նավերի մարտը սպիտակների դեմ և Սվյատի Կյուչէի գյուղի և նրա շրջակայքի վրավումը :

ՀՈԿՏԵՄԲԵՐ

1. Վոլգայի վրա Պյանի-Բորի մոտ տեղի ունեցած մարտում «Վանյա-Կոմունիստ» ռազմական շոշենավի կործանումը և Վոլգայի նավատորմիկի կազմակերպիչ ընկ. Մարկինի հերոսական մահը :

7. Իժեվսկի մոտ սպիտակ գվարդիկական «Տրուդ» շոշենավի խորտակումը :

17. Վոլգա-Կամայի նավատորմիկի նավերի հարձակումը Գալյանի վրա (Բելայա գետ) և դերի վերցրած կարմիր բանակայիններով բարեայի գրավումը :

28. Վոլգա-Կամայի նավատորմիկի կողմից Նիկոլո-Բերեզովյան քրանի գրավումը :

4. Վոլդայի նավատորմիկի նավերի արշավանքը Բելայար դետով գեղի վեր 90 վերսու հեռավորությամբ:

Աստրախան-Կասպյան նավատորմիկի կողմից Զեշեն կղզու մոտ առիտակների նավերի գրավումը:

10. Աստրախան-Կասպյան նավատորմիկի կողմից Բրյանսկայա շամաքալեղվակի վրայի ուստիոկայանի փոչնչացումը և սպիտակների «Կառուֆման» փոստատար չողենավի գրավումը:

19. Բալթիկ ծովում քաղաքացիական պատերազմի սկիզբը:

Անգլիական ծովային ուժերի հանդես գալը Բալթիկայում և Ֆիննական Պումալու և ինս մարտկոցներից մեր նավերին գնդակումը:

25. Դաշնակիցների եակալրայի ժամանումը Սեվաստոպոլ, անգլիական Կոլոսորալ ադմիրալի հրամանատաքության տակ:

27. Ռեվելյան ռեյլի հետախուզությունը «Տուր» փոստային սաղցատի կողմից:

20. Կարմիր Բանակի զորամասերի և նավաստիների դեսանտի կողմից Նարվա քաղաքի գրավումը:

ԴԵԿՍԵՄԲԵՐ

5. Բալթյան նավատորմի Հեղափոխական Ռազմական Խորհրդի կազմումը:

Անգլիական «Լասսանդրա» հածանալի կործանումը մեր ականա- փակոցի վրա:

15. Անգլիական նավերի կողմից Պուրշե դյուլի մոտ (Ֆիննական ծոյ) իճուղու և կամրջի գնդակոծումը:

18. Դաշնակիցների առաջին դեսանտի ափհանումը Ողեսսայում:

29. Սպիտակ զվարդքականների կողմից Լոքրա ծոցիկում (Պա- պոլինիկ ծովածոց):

30. Սպիտակ զվարդքականների կողմից Կոլգա ծոցիկում դե- սանտ ափհանելու փորձի հետ մզումը:

1919 թ.

ՀՈՒՆԴԱՐ

18. Եստոնական նավերի Նարվա դեմք գործելը և նրանց կողմից Նարվա քաղաքի գնդակոծումը:

20. Ֆրանսիական զինվորների և նավաստիների Հրաժարվել- օղեսսայում հեղափոխական զորքերի կեմ կովելուց:

ՄԱՐՏ

14. Դաշնակիցների զորքերի հեռացումը Նիկոլայեվից և իշխա- նության անցնելը Խորհուրդների ձեռքը:

ԱՊՐԻԼ

5. ՈՒԽՍՇ ԺԿԿ նախարահի նոտան Փրանսիական արտաքին գոր- ծերի մինիստրությանը, վորով բողոք և հայտնում՝ Փրանսիացիների կողմից Ողեսսայից ուստական նավատորմը և մեծ քանակությամբ բարձած տրանսպորտներ տանելու դեմ և պահանջ և դնում նրանց վերադարձնելու մասին:

17. Սեվաստոպոլի ռմբակոծումը Փրանսիական «Ֆրանս» գծանա- վի կողմից և նրա նավախմբի ազգամամբությունը:

19. Առատաձրություն Սևաստոպոլում կանգնած Փրանսիական նավատորմի՝ «Ֆրանս», «Ժան Բարտ», «Միհրաբ» և «Վերնիս» և «Դյուչայլ» նավերի վրա:

28. Անգլիացիների կողմից Խերսոնեսյան փարոսի չըջանում (Սե- վաստոպոլ) Սևանյան նավատորմի 10 սուզանավի խորակումը, վոր գրավվել ելին նրանց կողմից:

27. Դնեպրի նավատորմիկի կողմից Գլեբովկա դյուզի (Կիեվ) չըջանում գեսանտի ափհանումը Ստրուկի բանդաների լիկվիդացիայի համար:

30. Աստրախան-Կասպյան նավատորմիկի կողմից Ալեքսանդրովի- կի ֆորտի գրավումը:

ՄԱՅԻՍ

2. Դնեպրի նավատորմիկի հարձակումը Զերնորիլի վրա Մտրուկի բանդաների շողենավի գրավումը:

6. Աստրախան-Կասպյան նավատորմիկի կողմից «Լելլա» փոս- տատար կատերի գրավումը և գեն. Գրէշեն-Ալմազովին դերի վերց- նելը:

9. Անգլիական «Մալբորո» գծանավի և ականակիրների կողմից վլագիսլավովկա կայարանի չըջանի (Սև ծով) գնդակոծումը:

18. «Գավրիել» Եսկաղըային ականակըի և ականահանների մարտը չորս անգլիական Եսկաղըային ականակիրների դեմ:

29. Կարմիր Բանակի զորամասերի Հարձակման անցնելը Յուղենիչի զորքերի դեմ և Հարձակվող մասերի պաշտպանումը ծովափի յերկայնությամբ Բալթյան նավատորմի նավերի կողմից:

31. Բալթյան նավատորմի նավերի գնդակոծումը Կոսորյան ծոռում թշնամու 8 Եսկաղըային ականակիրների կողմից:

ՀՈՒՆԻՍ

4. Կոսորյան ծոցում «Ազարդ» և «Գավրիել» Եսկաղըային ականակիրների մարտն անգլիական յերեք ականակիրների և սուզանավեցի դեմ: Անգլիական «Լ-55» սուզանավի խորտակումը:

13. Խոռվություն «Կրասնայա գորկա» Փորտում: «Կիտորոյ» արանսպորտի անցումն սպիտակների կողմը:

23. Անգլիական ինքնաթիւների առաջին Հարձակումը Կրոնշտագ-սի վրա:

27. Ոնեգայի նավատորմիկի կողմից զեսանտի ավհանումը Վիդ-լիցում և Տուլոքսում: Սպիտակների խուճապային նահանջումը, Հաղթանիչների զրագումը:

ՀՈՒԼԻՍ

3. Ռժիչև քաղաքի գրավումը Դնեպրի նավատորմիկի նավերի կողմից:

31. Հարավային Փրոնտում զրահազնացքի Հրամանատար, ծովագ Անատոլի Ժելեզնյակովի, Մահմանակըր ժողովի ցրման մասնակի, կորուստը:

ՈԳՈՍՏՈՍ

2. Անգլիական «Կարագոկ» Հածանավի կողմից Ոչակովի գնդակոծումը:

3. Ոնեգայի նավատորմիկի մարտը Հակառակորդի կործանիչների և Հիգրովինաթիւների դեմ Մեղ կզզու մոտ:

18. Անգլիական արագընթաց կատերների Հարձակումը Կրոնշտագ-սի վրա:

20. Կարմիր Բանակի և Վոլգա-Կասպյան նավատորմիկի կողմից կամիչին քաղաքի միատեղ դրավում նավատիների դեսափ կողմից Նիկուլյավիլա գյուղի և Հաղթանիչների զրագումը:

28. Դնեպրի նավատորմիկի մարտը Հակառակորդի յերկու զրա-

հակատերի և զրահազնացքի դեմ Խոդորով ավանի մոտ և յերկու կատերի վոչնչացումը:

31. Ֆիննական ծոցում Եսկար կողու մոտ անգլիական «Վիկտորիա» Եսկաղըային ականակը խորտակումը:

ՍԵՊՏԵՄԲԵՐ

4. Ֆիննական ծոցում, մեր ականավակոցի վրա, անգլիական «Վիկտորիա» Եսկաղըային ականակը կործանումը:

20. Կարմիր Բանակի մասերի ամբողջ Փրոնտով ընդհանուր Հարձակման սկզբը, Վոլգա-Կասպյան նավատորմիկի ոգնությամբ, Յարեցինը վերցնելու համար:

25. Յարալյան ծովառ մեր նավերի կողմից Հակառակորդի Հաղթարձան 11 նավի և յերեք սարգայի դրավումը:

ՀՈԿՏԵՄԲԵՐ

2. Դնեպրի նավատորմիկի կողմից Պէլեկ գյուղի մոտ Դենիկինեմասերի Հարձակումը, վորոնք փորձում ելին անցնել 58-րդ դիվիլությի Բիկունքը. Դենիկինի «Դոբրովուեց» Հրետանավի զրագումը:

21. Բալթյան նավատորմի նավերի կողմից Յուղենիչի դրավումը:

Կոսորյան ծոցում անգլիական ականակակոցի վրա «Կոնստանտին», «Գավրիել» և «Ավորոն» Եսկաղըային ականակիրների կողմանումը:

1920 թ.

ՀՈՒՆԱՐԾՈՒՅԹ

13. Սիրիյան նավատորմիկի կազմակերպման սկզբը:

ՓԵՏՐՎԱՅՐ

21. Կարմիր Բանակի մասերի կողմից Արխանգելսկի դրավումը և 7 սոսցահատի, գետային նավատորմիկի և «Զեսմա» դժանալի զարթումը:

ԱՊՐԻԼ

1. Կասպից ծովում մեր ականակակոցի վրա սպիտակ գվարդիական «Կոյազ» Պաժարսկի Հածանավի կործանումը:

2. Նույն տեղում սպիտակների «Պրլլիվ» հրետանավի կործառություն:

4. Վոլգա-Կասպյան նավատորմիկի մարտը «Ալեքսանդրովսկի» Փորտի մոտ սպիտակների նավատորմիկի դեմ՝ սպիտակներից «Ալբա-տըրալիի» հածանավի և «Զասովյոյ» պարեկական նավի մեր կողմնանցնելը:

5. «Կարլ Լիբկնեխտ» եսկաղըային ականակրի դեսանաի կողմից Ալեքսանդրովսկի փորտի, գերիների և հաղթանիշների դրավումը:

9. Զեչեն կղզին գրավելու ոսկերտիցի կատարման ժամանակ գորթորկի հետանքով «Կասպի» ականակրի կործանումը:

13. Վոլգա-Կասպյան նավատորմիկի գեսանային ջոկատի կողմից Զեչեն կղզու դրավումը:

24. «Կարլ Լիբկնեխտ» եսկաղըային ականակրի պարզեվատրումը կարմիր Դրոշի շքանշանով մարտական արժանիքների և Ալեքսանդրովսկի փորտի դրավման համար:

ՄԱՅԻՍ

1. Վոլգա-Կասպյան կարմիր նավատորմի Բաղու ժամանելը:

18. Ռւլտիմատում անզլիական Հրամանատարությանը Ենզելին Հանձնելու մասին. նրա կողմից ուլումատումի ընդունումը և Հեռացումը դեպի Ռեշտ:

19. Կարմիր Կասպյան նավատորմի նավերի Ենզելի մտնելը, տեղական ժողովրդի խանդավառ վողաւոյներով. Սպիտակ գվարդիական ամբողջ նավատորմի և Խոչոր հաղթանիշների դրավումը:

ՀՈՒՆԻՍ

2. Դնեպրի նավատորմիկի նավերի Հյուսիսային խմբակի ճեղքութը Լոյելի մոտ:

11. Կիեվի գրավումը Դնեպրի նավատորմիկի նավատախների դեմանտի կողմից, նավերի ոգնությամբ, և քաղաքի պահպանության սահմանումը մինչև կարմիր Բանակի մասերի մուտենալը:

29. Կարմիր Բանակի մասերի և Դնեպրի նավատորմիկի կողմից Պոպի քաղաքի դրավումը:

ՀՈՒԼԻՍ

2. Վոլգա-Կասպյան նավատորմիկի վերակազմումը Կասպից ծովի Ֆովային ուժերի:

V. բանակի Հեղափոխական Թազմական Խորհրդին տված Քույլա-աբությունը նավատորմիկ կազմակերպել լենա գետի վրա:

ԳԵԿԾԵՄՔՆԵՐ

23. Կարմիր Բանակի ժամերի կողմից, Կասպյան նավատորմիկ նավերի ոգնությամբ, Աստարայի, Գելեկորանի, Պենսարէի, Սելֆե-դորի դրավումը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՀ

ԽՍՀՄ Ռազմա-Ծովային գործերի Ժողովրդական Կոմիսարիատ	
Հաղմելու մասին: ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի և Ֆոդովբական Կոմիսարների Խորհրդի վորոշումը, 30	3
գեկանմբերի 1937 թ.	
ԽՍՀՄ Ռազմա-Ծովային նավատորմի որվա մասին	4
Հնկեր Մոլոտովի Գերազույն Խորհրդի 1-ին Սեսսիայում 1938 թ.	
Հունվարի 15 աբուսանած ճառից	5
Էնկ. Ա. Ֆ. Սէլեզնյովի, Գերազույն Խորհրդի գեպօւտատի,	
կրտսեր սուլանավորդ-հրամանատարի ճառը	9
Կարմիր նավատորմայինները Գերազույն Խորհրդի Սեսսիայի և	
ընկեր Մոլոտովի ճառի մասին	13
Խաղաղովկիանոսյան նավատորմ	14
Ի. ԽՍՀԿՈՎ.— ԽՍՀՄ ծովային հզոր տերություն	16
«Պրավդայի» առաջնորդություն— ԽՍՀՄ հզոր ծովային պետություն և	25
Կրասնայա Զվեզդայի» առաջնորդություն— Սոցիալիզմի յերկրի	
Ռազմա-Ծովային ուժերը	30
Պ. ՄՅԱԳԿՈՎ.— Մարտական համարարեկամություն	36
Ն. Վ.ՍԻԼՅԵՆՎ.— Միջու առաջ	39
Ե. ԿԵԼԼԵ— Մոտիկ անցյալը	60
Ն. ՈՉԱՐԵՎԿՍԻ— Մարտ կայզերի նավատորմի դիմ: Խնչպես	
Բալթյան նավատորմիները հարվածում ենին գերմանական արմիաներին	80
ԲՈՐԻՍ ԼԱՎՐԵՆԵՎ.— «Ավրորան» Հոկտեմբերյան դիշերը	88
Ս. ՎՈԼԿՈՎ.— «Սամոն» եսկադրային ականակրի վրա	95
Ս. ԼՈՒԿԱՆԵՎԻԶ— Գեպի գրոհ Զմեռային պալատի վրա	99
1918—1920 թ. թ. քաղաքացիական պատերազմին Կարմիր նավատորմի մասնակցելու խրոնիկայից	103

Գլանվելու վարորդ՝ Վ.—2028. Հրատ. 4980

Պատվեր 627, Տիրաժ 5000

Թուղթ 62X94, Տպագր. 7 մամ.

Մել մամ. 32,320 նշան.

Հանձնած և աբտագրության 11 հունիսի 1939 թ.

Ստորագրված և տպագրության համար 10 հունիսի 1939 թ.

Պետհրատի 1 տպարան, Յերևան, Լենինի 65



ԳԻՒԸ 1 Ր.

28534

11

25

Нам нужно иметь
сильный военно-морской флот
Гиз Арм. ССР, Ереван, 1939 г.